

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՑԱԽԻ
ԳՈՅՉՊԱՅՅԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 325 : 378**ԳՄԴ 66.5 (22) + 74.58
Ե 813**

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը

Աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր խմբագիր
ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պրոֆեսոր ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Կազմեց և հրատարակության պատրաստեց՝
պ. դ. թ., դոցենտ Ժակ Մանուկյանը

Կազմման աշխատանքներին մասնակցել են՝
Մարինե Մկրտչյանը (բաժին 1, 2)
Լիլյա Հովհաննիսյանը (բաժին 3)
Սաթենիկ Աբրահամյանը (բաժին 4)

Ե 813 Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում / ԵՊՀ, Հայագիտ. հետազոտ. ինստիտուտ; Աշխ. խմբի ղեկ., գլխ. խմբ.՝ Ա. Սիմոնյան; Կազմ. և հրատ. պատրաստեց Ժ. Մանուկյանը. - Եր.: ԵՊՀ Հրատ., 2011. - 256 էջ + 14 էջ ներդիր:

ԵՊՀ-ն կարևոր ղերակատարում է ունեցել Արցախյան գոյապայքարում: Բազմաթիվ համալսարանականներ, թողնելով ուսանողական լսարանի և գիտամանկավարժական աշխատանքը, միացան պայքարին: Նրանցից շատերը, զենքը ձեռքին, մեկնեցին Արցախ՝ մասնակցելու Հայրենիքի ազատագրման սուրբ գործին:

Գրքում զետեղված են Արցախյան գոյապայքարին համալսարանականների մասնակցությանը վերաբերող կարևոր կենսագրական տեղեկություններ, հուշեր, փակերագրեր, որոնց մեծ մասը առաջին անգամ է հրատարակվում:

ՀՏԴ 325 : 378**ԳՄԴ 66.5 (22) + 74.58****ISBN 978-5-8084-1204-1****© ԵՊՀ Հրատարակչություն, 2011****© Կազմողի համար, 2011**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Աղքալյան Լեռնիդ Ռուբենի.....	11
Աչիքովյան Սիմոն Հովհաննեսի	13
Ասատրյան Ալեքսան Ֆելիքսի.....	15
Ավագինյան Վաչագան Ռաֆայելի	17
Ավագյան Էդուարդ Լվովի.....	19
Ավանեսյան Արա Համբարձումի	21
Ավանեսյան Զաքար Ալավիկի	23
Արշակյան Հապետ Կորյունի.....	27
Բախչյան Վարդան Աղատի	29
Բարբարյան Ներսես Գրիգորի	32
Գյորգյան Փուրման Արկադյայի	35
Դալլաքյան Վարդան Տիգրանի	37
Թաղենոյան Ռուբեն Կովայի	39
Խոջյան Սարգիս Վրեժի	41
Կոթոյյան Արմեն Վանիկի	42
Կրպեյան Թաթուլ Ժորժիկի	43
Հովհաննիսյան Վարդան Նասլետի	46
Ղազարյան Արմեն Վարդգեսի	48
Ղևոնյան Պետրոս Արշալույսի	51
Մարտիրոսն Նորայր Ցուրիկի	54
Մնացականյան Սանասար Լավրենտիի	57
Պետրոսյան Տիգրան Հրանտի	58
Ջուհաննան Մշեր Արամի	60
Սարգսյան Դավիթ Էդիկի	62
Սարգսյան Տիգրան Սարգսի	64
Ստեփանյան Վարդան Ռոբերտի	67
Փարսաղանյան Արթուր Վոլոդյայի	70

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ ունկատոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Արամ Սիմոնյան.....	75
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյան	80
ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ալբերտ Կիրակոսյան.....	84
ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտ Նորիկ Գալստյան	88

**ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ. ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ ԵՊՀ-Ի
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԸ ԼՈՒԽԱԲԱՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

1988 թվական (№№ 1-17)	93
1989 թվական (№№ 18-38)	144
1990 թվական (№№ 39-49)	194
1991 թվական (№№ 50-52)	215
1992 թվական (№№ 53-57)	223
1993 թվական (№№ 58-61)	232
1994 թվական (№№ 62-64)	239
ԲԱԺԻՆ ԶՈՐՐՈՐԴ. ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ.....	243
ՀԱՎԵԼՎԱԾ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ.....	251

ՆՎԻՐՎԱՒՄ Է

**ԴԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ**

«...Զի ՍԱՀՄԱՆՔ ՔԱԶԱՑ, ԱՄԷ,
ԶԵՆՆ ԻԻՐԵԱՆՑ,
ՈՐՔԱՆ ՀԱՏԱՆԷ՝ ԱՅՆՔԱՆ ՈՒՆԻ»

ՄՈՎՄԻՄ ԽՈՐԵՆԱՅԻՌ

Ա. Ռ. Ա. Զ Ա. Բ Ա. Ն

1988 թ. սկսված Արցախյան շարժումը հայոց աղատագրական պայքարի պատմության նոր էջ բացեց: Մի ողջ ժողովուրդ մարտահրավեր նետեց Խորհրդային կայսրությանը:

Արցախի աղատագրման համար մղվող պայքարը միավորեց համայն հայությանը:

Հայ մտավորականության և երիտասարդության սերուցքը ոտքի կանգնեց Հայրենիքի պաշտպանության համար: Նարժման առաջին օրերից Երևանի պետական համալսարանի ուսանողությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը կանգնեցին առաջին շարքերում: Սկսվեց դասադուլների ու նստացույցերի շրջան, և ԵՊՀ-ն հետզհետե դարձավ Արցախյան շարժման ղեկավարման կենտրոններից մեկը:

Համալսարանի դասախոսները հանրապետության մյուս մտավորականների հետ միասին առաջիններից էին, որ փորձեցին արցախահայության արդարացի պահանջը գիտականորեն հիմնավորված լսելի դարձնել ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը իր ժողովներում և ԽՄԿԿ կենտրոնական ուղղված դիմումներում բողոք և անհամաձայնություն էր հայտնում Արցախի հարցում Կրեմլի որդեգրած քաղաքականությանը: Խորհրդային ինտերնացիոնալիզմից անցում էր կատարվում հայոց ազգային գաղափարախոսությանը: Երկարատև ընդմիջումից հետո համալսարանում վերանայվեցին և լուսաբանվեցին հայոց պատմության՝ նախկինում փակի տակ պահպանական միավոր էջեր:

Համալսարանականներն առաջին շարքերում էին ոչ միայն խոսքով, այլև գործով: Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում Աղրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ստիպեց մի շարք Փակուլտետների ուսանողների կիսատ թողնել համալսարանական ուսումնառությունը, ստեղծել կամավորական ջոկատներ և մեկնել Արցախ, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններ, իսկ նրանք, ովքեր մնացին համալսարանում, ամեն կերպ աջակցում էին մարտնչող Արցախին: Միայն 1988-1989 թթ. ընթացքում համալսարանականները կազմակերպեցին 10-ից

ավելի ուղղաթիռային չվերթ՝ Արցախ հասցնելով հագուստ, սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ:

1989 թ. կեսերից համալսարանում ստեղծվել և գործում էր Հատուկ հանձնաժողով, որը հիմնականում զբաղվում էր Հայաստանի սահմանամերձ շրջաններին և Արցախի ինքնապաշտպանական ջոկատներին պարեն, հագուստ և զենք-գինամթերք մատակարարելու հարցով: Համալսարանում բոլորն ինչ-որ ձևով փորձում էին օգնել Արցախի հայությանը: Օրինակ, Փիղիկայի ֆակուլտետում հրացանների համար կոտորակ էին պատրաստում, կապարե գնդակներ ձուլում Արցախ ուղարկելու համար, իսկ քիմիայի ֆակուլտետի դասախոսները առաջինն էին, որ Հայաստանում սինթեզեցին հրթիռային վառելանյութ: Զգալի էր նաև ԵՊՀ-ի օգնությունը Արցախի պաշտպանության պետական կոմիտեին:

Ցավոք, համալսարանականներից շատերը մարտի դաշտից չվերադան:

Այսօր, երբ Արցախյան շարժման սկզբնավորումից անցել է ավելի քան 23 տարի, և ուսանողական լսարաններում արդեն սովորում և ազգային ողով դաստիարակվում են Արցախյան ազատամարտում նահատակված համալսարանականների զավակները, երբ մի ամբողջ սերունդ ոգեշնչվում է անմահ հերոսների սիրանքներով, ակնհայտ է, որ մեզ հաջողվել է հաղթանակով թերթել հայոց նորագոյն պատմության փառավոր էջերից մեկը:

Աշխարհում հեղինակավոր համալսարաններ շատ կան, սակայն նրանցից քչերը կարող են համարվել ազգային: ԵՊՀ-ն, իրավամբ, իր գոյության մոտ մեկարյա ընթացքում կարողացել է լուրջ հետք թողնել ազգային ինքնազիտակցության, հայ ինքնության և մշակույթի զարգացման գործում՝ դառնալով ազգային համալսարան:

Չեռնամուխ լինելով այս գրքի հրատարակմանը՝ փորձել ենք հնարավորինս ամբողջական ներկայացնել ԵՊՀ-ի և ընդհանրապես համալսարանականների մասնակցությունը Արցախյան ազատամարտին՝ այս կերպ ցույց տալով, որ Հայրենիքի համար օրհասական պահերին մտավորականությունը և երիտասարդությունը միշտ պայքարի առաջին շարքերում են:

Անշուշտ, հնարավոր է, որ գրքից դուրս են մնացել փաստեր և իրողություններ, որի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը:


Սիրով հաշվի կառնենք ընթերցողի դիտողությունները, առաջարկները գիրքը հետազայում վերահատարակելիս:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԸ



ԱԶԳԱԼԴՅԱՆ ԼԵՈՆԻԴ ՌՈՒԲԵՆԻ



(1942-1992)

Ծնվել է 1942 թ. նոյեմբերի 22-ին քաղաք Թբիլիսիում (Վրաստան); 1947-1959 թթ. սովորել է Երևանի Ա. Մոսկվանի անվան թիվ 25 դպրոցում:

1960 թ. ընդունվել է Մոսկվայի Հոմոնոպվի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, հետագայում տեղափոխվել է Երևանի պետական համալսարանի համապատասխան ֆակուլտետը, որն ավարտել է 1966 թ.՝ ստանալով ռադիոֆիզիկոսի մասնագիտություն:

1966-1968 թթ. աշխատել է ՀԽՍՀ Պետպլանի լազերային տեխնիկայի հաշվողական կենտրոնում, «Էներգիա» գիտարտադրական միավորումում և Ատոմային էլեկտրակայանների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում, ԵՊՀ-ի «Լազերային տեխնիկա» գիտարտադրական միավորումում՝ որպես համակարգչային ծրագրավորման և հաշվողական տեխնիկայի բաժնի վարիչ:

Արցախյան շարժման առաջին օրից Լ. Ազգալզյանը պայքարի առաջամարտիկներից էր:

1989 թ. «Անկախության բանակ»-ի հրամանատարն էր: Կազմակերպել է Վարդենիսի և Մեղրու շրջանների ինքնապաշտպանությունը: Մասնակցել է Նյուվաղիի առաջին գրոհին:

1990 թ. վերջերից Լ. Ազգալյանը մասնակցել է Գետաշենի, Շահումյանի, այնուհետև Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

1991 թ. հունիսին իր համախոհների հետ միասին ստեղծել է «Ազատագրական բանակ» ուազմական կազմակերպությունը և մինչև կյանքի վերջը եղել նրա գլխավոր հրամանատարը:


Լ. Ազգալյանը զոհվել է 1992 թ. հունիսի 21-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի մերձակայքում թշնամու դափաղիր գնդակից: Նրա աճյունն ամփոփված է Երևան քաղաքի Թողիսմախ կոչվող գերեզմանատանը՝ իր ծնողների աճյունների մոտ:

ԼՂՀ Գերազույն խորհրդի նախագահության 1994 թ. թիվ 380-1 որոշմամբ Լ. Ազգալյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

ՀՀ նախագահի՝ 1996 թ. սեպտեմբերի 20-ի թիվ 20 հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

2007 թ. նոյեմբերի 23-ին ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Լ. Ազգալյանի անվամբ, նրա անունն է կրում նաև Բերդաձորի ենթաշրջանի Արտաշավան գյուղի միջնակարգ դպրոցը: Լ. Ազգալյանի անվամբ է կոչվում նաև Արարատի մարզի Վերին Դվին գյուղի միջնակարգ դպրոցը:

ԱԶԻՔԳՅՈԶԱՆ ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (ԴԵԴ)



(1939-1991)

Ծնվել է 1939 թ. փետրվարի 6-ին Ռումինիայի Գալաց քաղաքում: 1946 թ. ընտանիքով հայրենաղարձվել է Երևանի թիվ 24 միջնակարգ դպրոցում: 1955 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի Երկրաբանական ֆակուլտետը, որն ավարտել է 1960 թ.: ինժեներ-երկրաբանի որակավորմամբ: Ս. Աչիքյողյանը 1970 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1984 թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի կոչում: 1960-1991 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, հեղինակել է 70-ից ավելի գիտական աշխատություններ, զբաղվել թարգմանություններով: Շուրջ 11 տարի դասախոսել է Երևանի պետական համալսարանում: Զբաղվել է հանրապետության գունավոր և ազնիվ մետաղների հանքավայրերի հեռանկարային ուսումնասիրությամբ: 1988 թ. Սպիտակի Երկրաշարժից հետո նա աղետի գոտում ղեկավարել է Երկրաշարժաբանների միջադադային ջոկատը: Գիտության ան-

խոնջ մշակ լինելուց բացի՝ նա զբաղվել է արվեստով և սպորտով, երկար տարիներ երգել է «Նարեկ» արական երգչախմբում՝ Խոր Վիրապի վանքում:

1989 թ. ՀՀՆ առաջին համագումարում Ս. Աչիբայողյանն ընտրվել է արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ:

1989 թ. անդամագրվել է «Արաբո» կամավորական ջոկատին և մասնակցել Եղեգնաձորի շրջանի Գնեշիկ, Երախ, Արենի, Խաչիկ, Նոյեմբերյանում՝ Ուկեպար և այլ սահմանամերձ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, ապա մեկնել Արցախ (Շահումյանի շրջան), ստանձնելով Մարտունաշենի պաշտպանության ջոկատի հրամանատարությունը:

1990 թ. Ս. Աչիբայողյանն ընտրվել է Երևանի քաղխորհողի պատգամավոր, մասնակցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի աշխատանքներին՝ Էկոլոգիայի հանձնաժողովի կազմում:

Ս. Աչիբայողյանը զոհվել է 1991 թ. ապրիլի 30-ին Մարտունաշենի ինքնապաշտպանության ժամանակ, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ուժերի աջակցությամբ աղբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատների (ՕՄԾՆ) կողմից իրագործվող Արցախը հայաթափելու «Օղակ» (կօլու) գործողությունը կանխելիս: Նրա աճյունն ամփոփված է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքի գերեզմանատանը:

ՀՀ նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի ՆՀ-640 հրամանագրով Ս. Աչիբայողյանը հետմահու պարզեատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

2011 թ. ապրիլի 29-ին ԵՊՀ աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետի միներալոգիայի և պետրոգրաֆիայի կարինետը անվանակոչվել է Ս. Աչիբայողյանի անվամբ:

ԱՍԱՏՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ ՖԵԼԻՔՍԻ



(1964-1992
անհայտ կորած)

Ծնվել է 1964 թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղում; 1971-1981 թթ. սովորել է Նոր Արմավիրի միջնակարգ դպրոցում; 1982-1984 թթ. ծառայել է Խորհրդային բանակում (Խարարովսկի մարզում); Զորացրվելուց հետո 1984 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի նախապատրաստական բաժինը; 1988-1989 թթ. Ա. Ասատրյանը ընդհատում է ուսումը (տարկետում), ընտանիքին օգնելու համար:

1990 թ. Ա. Ասատրյանը վերականգնում է ընդհատած ուսումը՝ համատեղելով աշխատանքը և կրթությունը, սակայն հայրենիքը զինվորի կարիք ուներ:

1992 թ. ապրիլի 30-ին մեկնել է Արցախ և իր ջոկատի հետ մասնակցել ինքնապաշտպանական մարտերին: Նույն թվականի հունիսի 13-ին ԼՂՀ Շահումյանի շրջանի Բուղլուխ գյուղի պաշտպանական մարտերի ժամանակ Ա. Ասատրյանը անհայտ կորել է: Առ այսօր

(14.03.2011) Ալ. Ասատրյանի մասին նրա հարազատները և բարեկամները որևէ տեղեկություն չունեն:

ԼՂՀ նախագահի 2007 թ. թիվ 17 հրամանագրով Ալ. Ասատրյանը պարզեցատրվել է «Արիության համար» մեղալով:

ԱՎԱԳԻՄՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ ՌԱՖԱՅԵԼԻ



(1969-1992)

Ծնվել է 1969 թ. օգոստոսի 27-ին ԼՂՀ Մարտակերտ քաղաքում: 1986 թ. ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ ուսկե մեղալով: 1987 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական կիրեռնետիկայի ֆակուլտետի կիրեռնետիկայի բաժինը:

1988-1989 թթ. ծառայել է խորհրդային բանակում (Բաշկիրիայում):


1990 թ. սկսած՝ ծառայել է Շուշիի շրջանի պաշտպանական ստորաբաժանումներում, որի կազմում մասնակցել է Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական մարտերին:

1992 թ. նա Բեկոր Աշոտի առաջին վաշտի զինվոր էր:

Վ. Ավագիմյանը զոհվել է 1992 թ. նոյեմբերի 22-ին Բաշ-Գյունեխայայի համար մղված մարտում: Նրա աճյունն ամփոփված է Ստեփանակերտի հուշահամալիրում՝ 1992 թ. սեպտեմբերի 2-ին Զլդրանի անտառում հերոսաբար զոհված հարազատ եղբոր՝ Սամվել Ավագիմյանի աճյունի կողքին:


ԼՂՀ Գերագույն խորհրդի 1994 թ. մայիսի 6-ի թիվ 0334-1 որոշմամբ Վ. Ավագիմյանը հետմահու պարզեցածը կել է Շուշիի աղատագրման մեղալով, նույն թվականի դեկտեմբերի 30-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության ՆՀ-4 որոշմամբ՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

2007 թ. նոյեմբերի 16-ին Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Վ. Ավագիմյանի անվամբ:



Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի գրությունը՝
Երևանում սովորող ԼՂՀ ուսանողների հավաքականի պետին

ԱՎԱԳՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԼՎՈՎԻ



(1969-1991)

Ծնվել է 1969 թ. հունիսի 26-ին, Ուկրաինայի Դոնեցկ քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղում:

1981 թ. Ավագյանների ընտանիքը տեղափոխվել է Հայաստան և բնակություն հաստատել Երևանում: Էդ. Ավագյանը 6-րդ դասարանից ուսումը շարունակել է Երևանի թիվ 171 միջնակարգ դպրոցում:

1986 թ. Էդ. Ավագյանն ավարտել է դպրոցը և նույն թվականին ընդունվել Օրջոնիկիձեի բարձրագույն հրամանատարական ուսումնարանը:

1987 թ. ուսումնառության նպատակով մեկնել է Մոսկվա, սակայն պետական ուղեգիր չունենալու պատճառով բուհ չեն ընդունել: Նույն թվականին էդ. Ավագյանը զորակոչվել է խորհրդային բանակ: Առաջին վեց ամիսներին ծառայել է Զիրչիկում (Ուգրեկստան), որտեղ լեռնային բարդ և անբարենպաստ պայմաններում խորհրդային զինվրական ստորաբաժանումները պատրաստություն էին անցնում: Աֆղանստան մեկնելու համար:

1988 թ. մինչև 1989 թ. փետրվարի 15-ը էղ. Ավագյանը ծառայությունը շարունակում է Աֆղանստանի Քարուլ քաղաքում, որտեղից դուրս է գալիս խորհրդային բանակի վերջին հրասայլով: Նույն թվականին Մուրմանսկում ավարտելով իր ծառայությունը՝ զորացրվում է:

Խորհրդային բանակում էղ. Ավագյանը արժանացել է մի շարք շքանշանների և մեղալների՝ Աֆղանստանի նախագահի 1988 թ. մայիսի 10-ի հրամանագրով պարգևատրվել է «Յօնի ստեղծագործություն» մեդալով, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. մայիսի 25-ի հրամանագրով՝ «Հա օտեաց» (Արիության համար), իսկ սեպտեմբերի 11-ին՝ «Հա ծույաց» (Մարտական ծառայությունների համար) մեդալներով:

1990 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Ուսմանը գուգահեռ սովորել է կասկադիորական դպրոցում:


1990 թ. էղ. Ավագյանը ընդգրկվել է աֆղանական պատերազմի մասնակիցներից կազմված հատուկ ինքնապաշտպանական գումարտակ և մեկնել է Գորիս, Մեղրի:

Էղ. Ավագյանը գոհվել է 1991 թ. ապրիլի 6-ին Մեղրիում՝ զլիսուղեղի հրազենային վնասվածքից: Նրա աճյունն ամփոփված է նոր նորքի 1-ին զանգվածի պուրակում:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի թիվ 1106 հրամանագրով էղ. Ավագյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդին առընթեր մարտիկ-ինտերնացիոնալիստների գործերով կոմիտեի որոշմամբ 2005 թ. փետրվարի 19-ին պարգևատրվել է «Վետերան ծույաց աշխատավորության համար» (Մարտական գործողությունների վետերան) մեդալով:

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ




(1968-1992)

Ծնվել է 1968 թ. դեկտեմբերի 26-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: 1986 թ. ավարտել է Ղուզե Կալերի միջնակարգ դպրոցը (1992 թ. հունվարից՝ Ա. Ավանեսյանի անվան միջնակարգ դպրոց) և ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետոր:

1987-1989 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումնառությունը ԵՊՀ-ում: Արցախում օրեցօր թեժացող մարտերի նկատմամբ չէր կարող անտարբեր մնալ Ա. Ավանեսյանը: 1991 թ. դեկտեմբերի վերջերին նա մեկնել է Արցախ՝ մասնակցելու հայրենիքի պաշտպանությանը:

Ա. Ավանեսյանը գոհվել է 1992 թ. հունվարի 7-ին Մարտունու շրջանի Ճարտար գյուղի ինքնապաշտպանության ժամանակ: Նրա աճյունն ամփոփված է Ճարտար գյուղի (Ղուզե Կալերի) գերեզմանատանը:



«Հայ Հինական» բարեգործական միության գրությունը՝ իրավաբանական
ֆակուլտետի դեկան Ռ. Պետրոսյանին

22

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԶԱՔԱՐ ՄԼԱՎԻԿԻ



(1970-1992)

Ծնվել է 1970 թ. մայիսի 13-ին
ԼՂՀ Հաղորդական միջազգային
բարեգործական միությունում: Շուտով նրանց ընտանիքը տեղափոխվում է Երևան:

1987 թ. ավարտել է Երևանի
Նար-Դոսի անվան միջնակարգ
դպրոցը: 1987-1989 թթ. ծառայել է
Խորհրդային բանակում: Զորա-
ցրվելուց հետո Զ. Ավանեսյանն ըն-
դունվել է Ստավրոպոլի պետական
Համալսարանի իրավաբանական
ֆակուլտետը: Այդ ժամանակ Ար-
ցախում արդեն սկսվել էր ազգային-
ազատագրական պայքարը, և Հայ-
րենասեր երիտասարդը չէր կարող
անտարբեր մնալ: Բուհ ընդունվե-
լուց ընդամենը մեկ ամիս անց, կի-
սատ թողնելով ուսումը, նա զինվո-
րագրվել է Արցախի ազատագրման
գործին: Մինչ այդ Զ. Ավանեսյանը
իր մի քանի ընկերների հետ կարո-
ղացել էր Հյուսիսային Կովկասից
որոշակի օգնություն հասցնել
մարտնչող Արցախ: Վերադառնալով
Արցախ՝ ընդունվել է Կիրովականի
մանկավարժական ինստիտուտի
Ստեփանակերտի բաժանմունքի
պատմաբանասիրական ֆակուլտե-

տի պատմություն և օտար լեզու բաժինը:

Արցախում մարտերն օրսատօրե թեժանում էին և Զ. Ավանեսյանը կրկին մեկնում է Հյուսիսային Կովկաս՝ անհրաժեշտ բեռներ Արցախ փոխադրելու համար: Այդ ամենը չէր կարող աննկատ մնալ Աղբեջանի օմոնականների տեսադաշտից: Նրան ու իր վեց ուսանող ընկերներին սպառնում էր բռնի արտաքսում Արցախից: Այդ պատճառով Արթուր Մկրտչյանի աջակցությամբ Զ. Ավանեսյանը իր ընկերների հետ տեղափոխվում է Երևան: Զ. Ավանեսյանը 1991 թ. սեպտեմբերից Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի պատմաբանասիրական ֆակուլտետից տեղափոխվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի երկրորդ կուրս: Սակայն նրա ուսումնառությունը համալսարանում կարձ տևեց: Հարկավոր էր շտապ մեկնել Արցախ:


Արցախյան մարտերում Զ. Ավանեսյանը միշտ թեժ կետերում էր, որտեղ դրսեորդվում էին նրա կազմակերպչական մեծ ունակությունները: Մասնակցել է Շուշիի ազատագրմանը, Կիչանի, Արմենավանի, Բերդաձորի, Ասկերանի, Քարվաճառի համար մղվող մարտերին:

Նա առաջիններից էր, ով ստեղծեց «Հայ երիտասարդական ճակատ»՝ հետագայում «Ազգային ճակատ», «Հայ ազգայնականների խումբ» կազմակերպությունները, որոնց անդամները անձնագուարար կովեցին Արցախի ազատագրման համար:

Զ. Ավանեսյանը զոհվել է 1992 թ. Հունիսի 29-ին Մատաղիսում մղված մարտերից մեկում: Նրա աճյունն ամփոփված է Եռաբլուր հուշահամալիր-պանթեոնում:

ԼՂՀ նախագահի 2000 թ. թիվ 183 հրամանագրով Զ. Ավանեսյանը հետմահու պարզեատրվել է «Արիության համար» մեդալով:

2010 թ. Հոկտեմբերի 1-ին պատմության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Զ. Ավանեսյանի անվամբ:



**Զաքար Ավանեսյանի դիմումը՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետում
ուսումը շարունակելու մասին**


ԼԵՂԱԿԱՆ ՂԱՐԱԲԱՀԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԴՈՒՅՆ ԽՈՐՃՈՒԹ
ՎԵՐХՈՎНЫЙ СОВЕТ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

9 ապրիլի 1992

ԵՐՄԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ՊՐԵ ԱՌԱՋԵԼՅԱԱՆԻՆ

Մեծարգության Առաքելյան: Ձեր տնօրինության ներքո զտնվող կը թօջանի պատմության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Զաքար Ավանեսյանը՝ գտնվում է ԱՀՀ պաշտպանող կամավորական ջոկատներից՝ մեկում:

Արցախը կարիք ունի հայրենասեր երիտասարդների, ուստի խնդրում է՝ Զաքար Ավանեսյանին թույլատրել մի առ ժամանակ չմտնակցել պարագմունքների:

Գերագուհն ԽՈՐՃՈՒԹ ՔԱՐՑՈՒՂԱՐ՝  Վ. ԶԱԿԱՆՅԱՆ

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՂԱՆ ԽՈՐՃՈՒԹԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ՀԱԿՈՐԴՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄԸ ԵՊՀ ՈԵԿՈՒՐ Ն. Առաքելյանին

ԱՐՇԱԿՅԱՆ ՀԱՊԵՏ ԿՈՐՅՈՒԽԻ



(1970-1994)

Ծնվել է 1970 թ. փետրվարի 12-ին ՀՀ Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում: 1987 թ. գերազանցությամբ ավարտել է Հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և մեկնել Նովոսիրիսկ՝ ուսումը շարունակելու բարձրագույն դինուրական դպրոցում:

1988 թ. կիսատ թողնելով ուսումը՝ Հ. Արշակյանը վերադարձել է Հայաստան և ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Արցախյան պատերազմն սկսվելուն պես նա կամավոր մեկնել է ուղղաճակատ, որտեղ դարձել է վաշտի Հրամանատար՝ ավագ լեյտենանտի կոչումով:

1992 թ. Հ. Արշակյանը իր մարտական ընկերների հետ գործուն մասնակցություն է ունեցել Հաղորդութ-Ֆիզուլի-Հորադիդ ուղղությամբ ԼՂՀ պաշտպանության բանակի վարած հաղթական մարտերին:

1993 թ. իր վաշտով տեղափոխվել է Մարտակերտի շրջան, որտեղ պաշտպանության բանակի այլ զորամիավորումների հետ մասնակցել

Է ավելի քան տասը գյուղերի ազատազրմանը:

Հ. Արշակյանը գոհվել է 1994 թ. Հունվարի 9-ին Մատաղիսի մոտակայքում՝ Դագաղասարի բարձունքում մղած մարտերի ժամանակ: Նրա աճունն ամփոփված է հայրենի Արշալույս գյուղի Հուշահամալիրում:

ՀՀ պաշտպանության նախարարի 1994 թ. թիվ 950 հրամանով ավագ լեյտենանտ Հ. Արշակյանին հետմահու չնորհվել է կապիտանի կոչում: Նույն թվականի օգոստոսին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության թիվ 0375-1 որոշմամբ Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության և անձնական արիության համար պարզեատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:


ԼՂՀ Ազգային ժողովի որոշմամբ 1997 թ. Քյուրղար գյուղը վերանվանվել է Հապետավան:

1998 թ. փետրվարին Հ. Արշակյանը հետմահու պարզեատրվել է ԵՊՀ արձաթե Հուշամեղալով:

ՀՀ նախագահի 2002 թ. Հունիսի 1-ի հրամանագրով Հ. Արշակյանը պարզեատրվել է «Արիության» մեդալով, իսկ ԼՂՀ նախագահի 2003 թ. թիվ 22 հրամանագրով պարզեատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: Հ. Արշակյանի հիշատակը հավերժացվել է նաև Մատաղիսում կանգնեցված Հուշակոթողով:

Ամուսնացած էր, ունի մեկ դուստր:

ԲԱԽՇԱՆ ՎԱՐԴԱՆ ԱԶԱՏԻ



(1965-1991)

Ծնվել է 1965 թ. Հունիսի 1-ին Երևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Արմավիր քաղաքի թիվ 2 միջնակարգ (այժմ՝ Վարդան Բախչյանի անվան) դպրոցում: 1983 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1984-1986 թթ. ծառայել է խորհրդային բանակում (զինվորական ծառայությունն անցկացրել է Հեռավոր Արևելքում): Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է համալսարանում:

1988 թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա՝ միաժամանակ աշխատելով Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայում:

Մինչեւ Արցախի ազատամարտին մասնակցելը Վ. Բախչյանը պատրաստվում էր պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումները» թեմայով: Զափազանց կարծ ժամկետում հավաքել և խմբավորել էր համապատասխան նյութերը, կատարել աղբյուրագիտական տվյալների վերլուծություն, կազմել տեղեկատվական

աղյուսակներ, ճշգրտել վարչական միավորների ընդգրկած սահմանները, միաժամանակ կազմել էրդրումի, Դիարբեքիրի, Սվասի, Կարսի տեղագրությունը՝ վարչատարածքային և պատմաշխարհագրական նկարագրով:

1988 թ. սկսված արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից մեկն էր: Հենց այդ տարիներին նա մի խումբ ընկերների հետ հիմնադրել է ՀՈՒԴ-ը (Հայ ուսանողական դաշինք) և հրատարակել «Դաշինք» ուսանողական թերթը:

1989 թ. Վ. Բախչյանը դառնում է Հայաստանում կրկին վերահստատված Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄՀՄ) հիմնադիրներից մեկը: 1991 թ. Աթենքում ընտրվում է ՀՄՀՄ-ի կենտրոնական վարչության անդամ:

1990 թ. միանալով ինքնապաշտպանական ջոկատներին՝ մեկնում է Արցախ: Մասնակցում է Բերդազորի ինքնապաշտպանությանը:


Վ. Բախչյանը զոհվել է 1991 թ. դեկտեմբերի 16-ին Հասանաբաղ գյուղի մոտ: Նրա աճյունն ամփոփված է Եռարլուր Հուշահամալիր-պանթեոնում:

ԼՂՀ նախագահի 1995 թ. թիվ 42 հրամանագրով Վ. Բախչյանը հետմահու պարզեատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

1998 թ. փետրվարին հետմահու պարզեատրվել է ԵՊՀ արծաթե Հուշամեդալով:


2008 թ. ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Վ. Բախչյանի անվամբ:

- Հուշառական
- 1). Արգելուած խումը մինչեւ մատիւդունը, շուրջում:
 - 2). Դաշտի վրա կրուի արձին արտ-թիկ (թիկ քառության մատուցում նախշում):
 - 3). Պահպակ աւոր-թիկ խոր և վարդ (մառ քառության մատուցում նախշում):
 - 4). Ալովէ-թիկ ու հայու հետո հայու-թիկ հայտ:
 - 5). Տայր մատուցում աշխարհական մատուցում (մառ հայտ):
 - 6). Հայու օրենքու թիկ քառության մատուցում:
 - 7). Տայր աշխարհական մատուցում:
 - 8). Առաջ ի գիւ-թիկ պատրաստ շրջ-ս-սը ը-թիկ:
 - 9). Խեցը (պայման) շիմ ա-կալու 8:
 - 10). Առաջ ի գ-թի պատրաստ մառ շահ շիմ քառության շամար:
- ՀԱՅԱ-
- 11). Ժամը 2-23 դ 24-րդ եւ վ-հ-թիկ:
 - 12). Օրույն սկզբյ դ-ր-տ- ւ-հ-թիկ:
 - 13). Գլու-ց ի ո-ցու և եզու, ծ-ց-ուն/թ/ գ-քանութիւն սկ-ք-ա-ւ:
 - 14). Երժ պահ ի հա շ-ց-ք, կ-թ-թ-ք ի թ 2-ւ. յադ շ-ւ-ւ:
 - 15). Գ-թի ո-ոց-ութիւն գ-ու-ս-թիկ 2-ւ:
 - 16). Շ-կ-ք ա-հ դ-ց ի հ-ց գ-ն-ց պ-ի և շ-ե-ց գ-կ-ք:
 - 17). Ք-ի ը ա-հ դ-ց ի հ-ց գ-ն-ց պ-ի և շ-ե-ց գ-կ-ք:
 - 18). Բոյ ի ծ-գ-ս թ-մ-ն շ-մ ի թ գ-ր-ս-թիկ:
- Հ-ւ:
- Վարդան Բախչյանի կազմած կարգապահական կանոններ՝ ինքնապաշտպանական ջոկատի համար:



1991 թ. դեկտեմբերի 10-ի ԼՂՀ անկախության հանրաքվեից 4 օր առաջ Վարդան Բախչյանի հեռագիրը՝ ուղղված իր քույր Աննային:

ԲԱՐԲԱՐՑԱՆ ՆԵՐՍԵՍ ԳՐԻԳՈՐԻ



(1964-1991)

Ծնվել է 1964 թ. Հուլիսի 15-ին
ՀՀ Գյումրի քաղաքում: Մինչև 4-րդ
դասարանը սովորել է Գյումրիի
Ղազարոս Աղայանի անվան թիվ 49
դպրոցում:

1977 թ. Բարբարյանների ընտա-
նիքը տեղափոխվել է Երևան: Ն.
Բարբարյանը ուսումը շարունակել է
Երևանի Պարույր Մևակի անվան
թիվ 123 դպրոցում, իսկ միջնա-
կարգն ավարտել նույարաշենի թիվ
175 դպրոցում, քանի որ այդ ժա-
մանակ արդեն ընտանիքը բնակա-
րան էր ստացել և հաստատվել
այդտեղ:

1982-1984 թթ. ծառայել է
Խորհրդային բանակում՝ Ռյազա-
նի Հակաօղային պաշտպանության
վաշտում:

1985 թ. ընդունվել է Երևանի
պետական համալսարանի ուսդիո-
ֆիզիկայի ֆակուլտետը, որտեղ հա-
մակուրսեցիներ ու մտերիմ ընկեր-
ներ էին Պետոյի (Պետրոս Ղևոնյա-
նի) հետ:

1988 թ. Արցախյան շարժման
առաջին օրերից Ն. Բարբարյանը
դարձավ ակտիվ մասնակիցներից

մեկը: Ուսուաստանից զենք ու զինամթերք էր բերում, այնու-
հետև ընկերների հետ սկսեցին զինել սահմանամերձ շրջանի
բնակիչներին ու բացատրական աշխատանքներ տանել: Նա մեկ
Սիսիանում էր, մեկ՝ Նոյեմբերյանում, մեկ՝ ուրիշ շրջանում:

1990 թ. մեկնում է Արցախ՝ Շահումյանի շրջան:

Ն. Բարբարյանը զոհվել է 1991 թ. մայիսի 24-ին Հայ Բորիս
պյուղի մարտերում: Նրա աճյունն ամփոփված է Եռաբլուր
հուշահամալիր-պանթեոնում:

ՀՀ նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի Հրամանագրով
Ն. Բարբարյանը հետմահու պարզեատրվել է «Արիության»
մեղալով: ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի 1-ի ՆՀ-1106 Հրամա-
նագրով՝ Հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած
անձնազոհության և խիզախության համար նա կրկին պարզեա-
տրվել է «Արիության» մեղալով:

Տիգրան Տիգրանի Տիգրանի Տիգրանի

Դաշտ և աղբյուր
Անձնագիր 8/22 թ.

Տեսապահ:

Միա և մեկը

Ճարագիր և

Տեսապահ:

Դաշտ աղբյուր,

Խաչ դա պահէ

Տեսապահ:

Միա և մեկը

Ճար և աղբյուր:


Վեց իջ աղբյուր:

Տեսապահ:

88 թի աղբյուր:

Ներսես Բարբարյանի ստեղծագործություններից

ԳՅՈՐԳՅԱՆ ՖՈՒՐՄԱՆ ԱՐԿԱԴՅԱՅԻ



(1973-1992)

Ծնվել է 1973 թ. օգոստոսի 28-ին ԼՂՀ Շահումյանի շրջանի Վերին Շեն գյուղում: 1979 թ. հաճախել է Վերին Շենի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1982 թ. Գյորգյանների ընտանիքը տեղափոխվել է Շահումյան շրջկենտրոն, որտեղ և Ֆ. Գյորգյանը ուսումը շարունակել է թիվ 1 միջնակարգ դպրոցում:

Արցախյան շարժման սկզբից Ֆ. Գյորգյանը դարձավ նրա ակտիվ մասնակիցներից մեկը: 1988 թ. անդամագրվել է Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ջոկատին:

1991 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Երևանում անդամակցել է Շահումյան-Գետաշեն Հայրենակցական միությանը և օգնել է Արցախ զենք տեղափոխելուն:

1992 թ. հուլիսին զինվորագրվել է Շահեն Մեղրյանի ղեկավարությամբ Երևանում ստեղծված պարտիզանական ջոկատին:

ԵՊՀ-ում առաջին կիսամյակի քննությունները հանձնելուց հետո Ֆ. Գյորգյանը մեկնել է Շահումյան, մասնակցել տեղի ինքնապաշտպա-


Նույթյան համար մղված մարտերին:

1992 թ. ապրիլի վերջին նա վերադարձել է Երևան՝ համալսարանում երկրորդ կիսամյակի քննությունները հանձնելու համար:

Ֆ. Գյորգյանը զոհվել է 1992 թ. սեպտեմբերի 29-ին ուղղաթիրի վթարից՝ Շահումյան մեկնելիս: Նրա աճունն ամփոփված է Եռաբլուր հուշահամալիր-պանթեոնում:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի թիվ 1106 հրամանագրով Ֆ. Գյորգյանը հետմահու պարզեցվել է «Արիության» մեղալով: Նույն թվականին ԼՂՀ նախագահի թիվ 340 հրամանագրով պարզեցվել է «Արիության համար» մեղալով:

2007 թ. նոյեմբերի 16-ին Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Ֆ. Գյորգյանի անվամբ:



Ֆուրման Գյորգյանի անցագիրը Արցախից Երևան մեկնելու համար

ԴԱԼՎԱՔՑԱՆ ՎԱՐԴԱՆ ՏԻԳՐԱՆԻ



(1969-1994)

Ծնվել է 1969 թ. մարտի 25-ին ՀՀ նախրիի շրջանի Նոր Հաճըն քաղաքատիպ ավանում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում:

1987 թ. մայիսի 15-ին գորակուչվել է խորհրդային բանակ: Մառայությունն անցկացրել է Աֆղանստանում տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժնումներում: 1989 թ. զորացրվել է և պարզեցվել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատվոգրով ու կրծքանշաններով: Աֆղանստանի նախագահի 1988 թ. մայիսի 15-ի հրամանագրի համաձայն Վ. Դալվաքցանը պարզեցվել է «Յանու-ինտերնացիոնալիստու օտ благодарного афганского народа» (Մարտիկ-ինտերնացիոնալիստին երախտապարտ ափղան ժողովրդից) մեղալով:

1989 թ. աշխատանքի է ընդունվել Նոր Հաճընի «Սապֆիր» գործարանում: Միաժամանակ ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախի ազատագրական պայքարին:

1990 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1990 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին մասնակցել է Բերդաձորի ինքնապաշտպանությանը, մասնավորապես Բերդաձորի ամենավտանգավոր կետի՝ Ծաղկաձոր գյուղի պաշտպանությանը:

Վ. Դալլաքյանը զոհվել է 1994 թ. հունվարի 31-ին ԼՂՀ Շահումյանի (Քարվաճառ) շրջանի ազատազրման գործողությունների իրականացման ժամանակ՝ Ղամշլու գյուղի մատուցներում։ Նրա աճյունն ամփոփված է Նոր Հաճընի գերեզմանատանը։

ՀՀ պաշտպանության նախարարի 1996 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 586 հրամանով Վ. Դալլաքյանը հետմահու պարգևատրվել է «1992-1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով։

ՀՀ նախագահի 1999 թ. սեպտեմբերի 20-ի հրամանազգրով ՀՀ անկախության հոչակման 8-րդ տարեղարձի առթիվ Նոր Հաճընի երկրապահ ջոկատի ազատամարտիկ Վ. Դալլաքյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով։

2009 թ. մարտին ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի լսարաններից մեկն անվանակոչվել է Վ. Դալլաքյանի անվամբ։

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՎՈՎԱՅԻ



(1975-1993)

Ծնվել է 1975 թ. նոյեմբերի 12-ին Երևանում։ 1992 թ. ավարտել է Էջմիածնի թիվ 12 միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը։

1992 թ. կամավոր զինվորագրվել է Էջմիածնի շրջանի երկրապահ ջոկատին և դեկտեմբերի 22-ին մեկնել ԼՂՀ Հաղորդի շրջան։ Մարտական առաջին գործողությունը, որին մասնակցել է Ռ. Թաղեկոյանը, Հողեր գյուղի ազատազրման մարտերն էին։ Նրան՝ որպես քաջարի մարտիկի, ընդգրկել են ջոկատի հետախուզական դասակում։ Ռ. Թաղեկոյանի մասնակցությամբ դասակը հաջողությամբ կատարել է բազմաթիվ կարևոր առաջադրանքներ։

Ռ. Թաղեկոյանը զոհվել է 1993 թ. ապրիլի 10-ին Խրմնջուղ գյուղի մոտ գտնվող բարձունքի համար մղվող մարտերի ժամանակ։ Նրա աճյունն ամփոփված է Զվարթնոցի Եղբայրական գերեզմանատանը։

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի 1-ի ՆՀ-1106 հրամանագրով՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած անձնագույնիքան և խիզախույնիքան համար, Ռ. Թաղեսոյանը հետմահու պարզեատրվել է «Արիության» մեղալով:



(1975-1994)


ԽՈԶՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՎՐԵԺԻ

Ծնվել է 1975 թ. դեկտեմբերի 15-ին Երևանում: Միջնակարգ կրթությունն ստացել է Երևան քաղաքի Մ. Սարյանի անվան թիվ 86 գեղանկարչական դպրոցում:

1992 թ. Ս. Խոջյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Երկու ամիս ուսանելուց հետո նա կամավոր դիմում է զինկոմիսարիատ, ծառայության ընդունվելու նոր կազմավորվող Հայոց բանակում: Ս. Խոջյանի 18 տարին լրացավ զինվորական երդումից մի քանի օր անց: Նա մի քանի ամսում այնքան էր կոփվել և խիզախացել, որ մարտական ընկերները նրան «Բասմաչ» էին անվանում:

Ս. Խոջյանը զոհվել է 1994 թ. մայիսի 3-ին Հորադիդում՝ մարտական գործողությունների ժամանակ: Նրա աճյունն ամփոփված է Եռաբլուր հուշահամալիր-պանթեոնում:

ՀՀ պաշտպանության նախարարի 1996 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 586 հրամանով Ս. Խոջյանը հետմահու պարզեատրվել է «1992-1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով, իսկ ՀՀ նախագահի 2003 թ. ապրիլի 2-ի հրամանագրով՝ «Արիության» մեղալով:



(1971-1992)

ԿՈԹՈԼՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԱՆԻԿԻ


Ծնվել է 1971 թ. մայիսի 12-ին Երևանում: 1978-1988 թթ. սովորել է Երևանի Պեյզ Յավորովի անվան թիվ 131 միջնակարգ դպրոցում: 1989 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի Փիզիկայի ֆակուլտետը: Սակայն հայրենիքը զինվորի կարիք ուներ: Կիսատ թողնելով ուսումը համալսարանում՝ Ա. Կոթոլյանը 1990 թ. զինվորագրվել է հայրենիքի պաշտպանության գործին:

1991 թ. անդամագրվել է Արամոյի ջոկատին: Մարտնչել է հջեանում, Կապանում, Գորիսում, Շահումյանում, Մարտակերտում: Մասնակցել է Քաշաթաղի ազատազրմանը:

1992 թ. Հոկտեմբերից մասնակցել է Քաշաթաղի շրջանի Հոչազի բարձունքների ու Սոս գյուղի պաշտպանության մարտերին՝ հետմղելով թշնամու համառ գրոհները:

Ա. Կոթոլյանը զոհվել է 1992 թ. Հոկտեմբերի 19-ին Հոչազի բարձունքների համար մղված մարտերի ժամանակ: Նրա աճյունն ամփոփված է Եռաբրուր Հուշահամալիր-պանթեոնում:

ՀՀ նախագահի 2002 թ. Հունիսի 1106 հրամանագրով Ա. Կոթոլյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:



(1965-1991)

ԿՐՊԵՅԱՆ ԹԱԹՈՒԼ ԺՈՐԺԻԿԻ

Ծնվել է 1965 թ. ապրիլի 21-ին ՀՀ Թալինի շրջանի Արեգ (2009 թ.՝ վերանվանված Թաթուլ) գյուղում: 1972-1982 թթ. սովորել է Արեգ գյուղի (1991 թ. անվանակոչվել է Թաթուլ Կրպեյանի անվան) միջնակարգ դպրոցում: 1982-1983 թթ. սովորել է Թալինի տեխնիկական թիվ 29 ուսումնարանում: 1983 թ. գրակոչվել է խորհրդային բանակ, սպակյան 1985 թ.՝ սրտի ծանր վիրահատությունից հետո, գրացրվել է՝ ստանալով զինծառայության 2-րդ խմբի հաշմանդամության կարգ:

1986 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի նախապատրաստական բաժանմունք, իսկ այնուհետեւ՝ պատմության ֆակուլտետ: 1988 թ. անդամակցել է «Միացում» կազմակերպությանը՝ դառնալով արցախյան շարժման ակտիվ մասնակիցը: 1990 թ. պատմության ֆակուլտետի դեկանի հետ համաձայնեցնելով հաճախումների գրաֆիկը՝ Թ. Կրպեյանը մեկնում է Գետաշեն որպես պատմության ուսուցիչ՝ իրականում Գետաշենի ինքնապաշտպանության ղեկավար:

Մարտական ընկերների հետ

զոհվել է 1991 թ. ապրիլի 30-ին Գետաշենում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ուժերի աջակցությամբ, աղրբեջանական Հատուկ նշանակության զինված ջոկատների (ՕՄԾՆ) կողմից իրագործվող, Արցախը հայաթափելու «Օղակ» (կօլուս) գործողությունը կանխելիս: Թ. Կրպեյանի աճյունը համագյուղացի զոհված աղատամարտիկների աճյունների հետ միասին ամփոփված է Հայրենի Թաթուլ գյուղում, որտեղ կառուցված է նրանց հիշատակը հավերժացնող հուշահամալիր:

1992 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Թ. Կրպեյանի անվամբ, որը վերանորոգումից և կահավորումից հետո վերաբացվեց 2007 թ.:

ՀՀ նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի ՆՀ-648 հրամանագրով՝ ՀՀ պաշտպանության գործում մատուցած համազգային նշանակության բացառիկ ծառայությունների համար երկրապահ ջոկատի հրամանատար Թ. Կրպեյանին հետմահու չնորհվել է «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում՝ հանձնելով «Հայրենիք»-ի շքանչան:

ԵՊՀ գիտխորհողի որոշմամբ 2000 թ. սեպտեմբերի 1-ից ԵՊՀ-ում սահմանվել է Թ. Կրպեյանի անվան ուսանողական կրթաթոշակ:

Թ. Կրպեյանի անունով է անվանակոչված նաև փողոց ՀՀ Թալին քաղաքում, ինչպես նաև նրա անունն է կրում ԼՂՀ Կովսական քաղաքի դպրոցը:

Ամուսնացած էր, ունի մեկ դուստր:

1.9.90թ

Գ. Եկամ շենքում՝ գեղի ուշեցի ջուրի հողավաճակության (2 լիտրով) ուշի ուշեցի ջուրի աղջ, որը մեջ 20-օր առաջ առաջընթացությանը կապահպակվելու առաջակացնելու համար աղջը հանձնվել է Եկամ շենքում գույնի աղջը:

Ժեկունիք:

Ուսիք 2-ի աղջի պահպանի մասին մասին աղջի աղջի պահպանի մասին ուսիքը մասին:

Եկամը աղջի աղջի պահպանի մասին աղջի աղջի պահպանի մասին:

4. 10. 90թ 9-ից խայջ պահպան ընկերեց համար:

Ուսիքին ամէն իհաց խայջի բացառությունները և աղջի աղջի պահպանի մասին աղջի աղջի պահպանի մասին աղջի պահպանի մասին:

11. 10. 90թ ցիշեցվածքի մասին պահպանի մասին - ԱԿՐՕՆի - ցիֆրակիր: Ակր պահպանի ցիշ աղջի պահպանի քրեկ, աղջունիք քրեկ պահպանի եր:

12. 10. 90թ Ջերային երած թվայի պահպանի մասին պահպանի մասին աղջի պահպանի մասին, որը ցիշեցվածքի մասին աղջի պահպանի մասին ինչ պահպանի աղջի պահպանի մասին աղջի պահպանի մասին:

Հատված Թաթուլ Կրպեյանի օրագրից



(1972-1992)

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՆԱՍԼԵՏԻ

Ծնվել է 1972 թ. հունվարի 13-ին Երևանում: 1988 թ. ավարտել է Երևանի թիվ 142 միջնակարգ դպրոցը: 1988 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանիկայի ֆակուլտետը: 2-րդ կուրսից տեղափոխվել է տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետ:

Արցախյան պատերազմի առաջին օրերից Վ. Հովհաննիսյանը փորձել է անդամագրվել Երկրապահ ջոկատներին և մեկնել ռազմի դաշտ: Ջոկատների հրամանատարները մերժել են՝ պատճառաբանելով, որ նա ուսանող է:

1992 թ. հունիսին Վ. Հովհաննիսյանը, հանձնելով կիսամյակի քննությունները, փոխադրվում է 4-րդ կուրս, սակայն Արցախ գնալու մտադրությունից չի հրաժարվում: Ծնողներից թաքուն անդամագրվում է Վ. Սարգսյանի հավաքագրած մահապարտների ջոկատին:

1992 թ. օգոստոսի 30-ին Վ. Հովհաննիսյանը «Արծիվ» մահապարտների գումարտակի կազմում մեկնում է Արցախ և սեպտեմբերի 1-11-ը մասնակցում ԼՂՀ Մարտակերտի շրջանի Զլդրան, Դրմբոն,

Հարությունագոմեր բնակավայրերի ազատագրման մարտերին:


Վ. Հովհաննիսյանը գոհվել է 1992 թ. սեպտեմբերի 11-ին՝ վաղուհասի բարձունքի ազատագրման ժամանակ: Նրա աճունն ամփոփված է Եռաբլուր Հուշամալիր-պանթեոնում:

1998 թ. փետրվարին Վ. Հովհաննիսյանը հետմահու պարզեատրվել է ԵՊՀ արծաթե հուշամեղալով:

ՀՀ նախագահի 1999 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագրով Վ. Հովհաննիսյանը պարզեատրվել է «Արիության» մեղալով:

2007 թ. սեպտեմբերին Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Վ. Հովհաննիսյանի անվամբ:

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԱՂԻԳԵՍԻ



(1972-1994)

Ծնվել է 1972 թ. մարտի 30-ին ՀՀ Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում: 1989 թ. ավարտել է Հրազդանի Հակոբ Պարոնյանի անվան թիվ 12 միջնակարգ դպրոցը:

1990 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը:

Անմասն չմնալով Արցախի ազատագրման պայքարից՝ քաջ հայորդին 1992 թ. նոյեմբերին Ստեփանակերտում կամավոր մտնում է սակրավորների վաշտի մեջ: Շուտով Ա. Ղազարյանին վստահում են դասակի հրամանատարությունը և չնորհում լեյտենանտի կոչում: 1992 թ. դեկտեմբերին նա մասնակցում է Բերձորի (Լաշինի) Ֆինգա բարձունքի վերագրավմանը, իսկ 1993 թ. փետրվարի 5-ին՝ Կիչան, Չղրան գյուղերի մատուցների գործողություններին, վիրավորվում է ոտքից, ապաքինվում և կրկին մեկնում ճակատ:

1993 թ. մարտի վերջին Ա. Ղազարյանը մասնակցում է Քարվաճառի (Քելբաջարի) գործողություններին, հունիսի 14-ին՝ Մարտակերտ քաղաքի, հուլիսին՝ Աղդամի ազատագրմանը, իսկ օգոստոսին արդեն

մարտնչում էր Հաղորութի շրջանի գյուղերի ազատագրման համար: Վիրավորվելով թերթ՝ նա երկրորդ անգամ կարձ ժամանակով թողնում է մարտի դաշտը: Ապաքինվելուց անմիջապես հետո նորից վերադառնում է մարտի դաշտ: Ստեփանակերտի գնդի հրամանատարությունը, տեսնելով Ա. Ղազարյանի աննկուն կամքը, անսահման խիզախությունն ու հայրենասիրությունը, նրան նշանակում է սակրավորների վաշտի հրամանատար՝ չնորհելով ավագ լեյտենանտի կոչում:

1993 թ. դեկտեմբերի 29-ին՝ Բյուհմեղլի, Փափրավենդ, Քենդերլի գյուղերի ազատագրման ժամանակ, Ա. Ղազարյանը վիրավորվում է երրորդ անգամ (զլիսից) և ապաքինվելուց անմիջապես հետո՝ 1994 թ. հունվարի 7-ին, մասնակցում է Ֆիզուլու շրջանի ազատագրմանը, իսկ հունվարի 15-ից՝ Մարտակերտի և Քարվաճառի ուղղությամբ թշնամու հարձակումների կասեցմանը, նույն թվականի մարտից՝ Հորադիտի պաշտպանական մարտերին:

1994 թ. մարտի 30-ին նրան չնորհվում է կապիտանի կոչում, միաժամանակ պարզեատրվում է «Փառքի» 2-րդ աստիճանի շքանշանով:

1994 թ. ապրիլի 10-ից ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը վերսկսում են Մարտակերտի շրջանի՝ թշնամու գրաված գյուղերի ազատագրումը: Նա առաջին շարքերում էր. մասնակցել է Շոթլանլու, Նամբիլի, Ումութլու, Յարմջա, Սեյսուլան գյուղերի ազատագրմանը:

Ա. Ղազարյանը զոհվել է 1994 թ. մայիսի 10-ին՝ Մարտակերտի շրջանի Սեյսուլան գյուղի ազատագրման ժամանակ: Նրա աջունն ամփոփված է հայրենի Մեղրաձոր գյուղի գերեզմանատանը:

Զորամասի հրամանատարությունը, բարձր գնահատելով հայրենիքին մատուցած կապիտան Ա. Ղազարյանի ծառայությունները, նրան ներկայացնում է պարզեատրման:

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1994 թ. թիվ 0376-1 որոշմամբ հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության և անձնական արիության համար Ա. Ղազարյանը հետմահու պարզեատրվել է «Մարտա-


կան խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի 1-ի ՆՀ-1106 հրամանագրով
հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած անձնա-
գոհության և խիզախության համար հետմահու պարզեցատրվել
է «Արիության» մեղալով:

2008 թ. մարտին ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆա-
կուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Ա. Ղազարյանի
անվամբ:




Տեղեկանք՝ Արսեն Ղազարյանի, ԼՂՀ Զինված ուժերում ծառայելու մասին



Արսեն Ղազարյանի
գիմումը՝ ԵՊՀ մաթեմա-
տիկայի ֆակուլտետի
դեկանին քննություն-
ները վաղաժամկետ
հանձնելու մասին

Վահագան Ղազարյան
1.12.82.

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՐՇԱԼՈՒՅՑՅԻ



(1964-1994)

Ծնվել է 1964 թ. փետրվարի 4-ին ՀՀ Աշտարակի շրջանի Դղեր գյուղում: Սովորել է Պողոցան ա-
վանի միջնակարգ դպրոցում, որն ա-
վարտելուց հետո ուսումը շարունա-
կել է թիվ 18 պլոֆտեխուսումնա-
րանում:

1982-1984 թթ. Պ. Ղևոնդյանը
ծառայել է Խորհրդային բանակում
(Բլագովենսկ քաղաքում): Զորա-
ցրվելուց հետո ընդունվել է Երևանի
պետական համալսարանի ուսղո-
փիգիկայի ֆակուլտետը:

1988 թ. սկսված արցախյան
շարժման առաջնորդից Պ. Ղևոնդ-
յանը զինվորագրվել է հայրենիքի
պաշտպանության գործին:

1991-1992 թթ. Պ. Ղևոնդյանը
մասնակցել է Ղուչիլարի, Մալի-
բելի, Լեսնոյի և Հարակից գյուղերի
ազատագրման մարտերին:

1992 թ. սեպտեմբերին Պ.
Ղևոնդյանը նշանակվել է ԼՂՀ
պաշտպանության բանակի Շուշիա-
նատարի տեղակալ:

1993-1994 թթ. Պ. Ղևոնդյանը
մասնակցել է Հաղբութի, Ֆիզուլու,
Ջերայիլի, Զանգելանի ազատա-

գրման մարտերին: Սրխավենդում Պ. Ղևոնյանը վնասազերծել է հայկական բնակավայրերը ոմբակոծող Աղրբեջանի բանակի ՄԻԳ 25 ինքնաթիռը:

1994 թ. հունվարին Պ. Ղևոնյանը իր գորաջոկատով տեղափոխվել է Քարվաճառի շրջան՝ Օմարի լեռնանցքում կովող ԼՂՀ պաշտպանության բանակի ստորաբաժանումներին օգնելու համար:

Պ. Ղևոնյանը զոհվել է 1994 թ. փետրվարի 14-ին՝ վիրավոր ընկերոջը մարտադաշտից դուրս բերելիս, ականի պայթյունից: Նրա աճյունն ամփոփված է Պոռշյան ավանի Զորագ պանթեոն-հուշահամալիրում:

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1994 թ. նոյեմբերի 9-ի նիստի թիվ 0406-1 որոշմամբ Պ. Ղևոնյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

ՀՀ նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագրով պարգևատրվել է «Արիության» մեդալով: 1998 թ. փետրվարին պարգևատրվել է ԵՊՀ արծաթե հուշամեդալով:

ԼՂՀ նախագահի 2001 թ. թիվ 229 հրամանագրով Պ. Ղևոնյանին շնորհվել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչում և «Ուկե արծիվ» շքանշան:

2007 թ. սեպտեմբերին ԵՊՀ ուսումնակայի ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Պ. Ղևոնյանի անվամբ:

Պ. Ղևոնյանի անունով է նաև ՀՀ Կոտայքի մարզի Պոռշյան ավանի միջնակարգ դպրոցը, ԼՂՀ Շահումյանի շրջանի Եղեգնուտ գյուղի միջնակարգ դպրոցը, ինչպես նաև Քաշաթաղի շրջանի Տիգրանավան գյուղի դպրոցը:

Կը ո՞չ - ի քանդիրական քայլութեր
ների առանձնահայր այսի ջջով
պարտերոր Յ. Ֆ. Չորբարյանին
Ռ/Բ Քայլութերի չ կուրք
ուսումնաց պետքու շնորհյաւելուց

Հիմուն

բնօրութ ԱԾ քայլութեր զից ունցի այս-
քանի հաջող քիզրութ առաջք ենութե,
քիզր որ 1992 թիվն աշամարքան զից ունցի թե
այսու քայլութեր պաշտուածոյած շեմ աս-
տակել : Բայց իսկ ու քոյթեր ոչ թ
խամանակ ճառ ճառելու Ֆ ՀՀ-ում ՏԵՇ
ինքանուց պահանջութեան ճայցութերու:

Հիմուն / ԹեՇ / յեցրու շնորհյաւելու

29. 01. 93 թ.

Հիմուն
Յ Վ Ե Ր Ա Ր Ե Լ
29. 01. 93

Պետրոս Ղևոնյանի դիմումը՝ ԵՊՀ պրոռեկտոր է. Զուրարյանին՝
դիպլոմային աշխատանքը հանձնելու մասին



(1966-1993)

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՅՈՒՐԻԻ

Ծնվել է 1966 թ. փետրվարի 1-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ներքին Հորաթաղ զյուղում: 1972-1980 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1980 թ. տեղափոխվել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը և 1983 թ. այն ավարտել գերազանց գնահատականներով:

1984-1986 թթ. ծառայել է խորհրդային բանակում (Զիտա): 1987 թ. ընդունվել և 1992 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժողովագործություններում գործադրություն պահպանության մեջ: 1992 թ. ընդունվել է ԵՊՀ ժողովագործություն պահպանության մեջ:

1992 թ. օգոստոսից աշխատել է «Ազատամարտ» շարաթաթերթի արցախյան թղթակից: Որպես լրագրող-ազատամարտիկ մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին:

1993 թ. հունվարի 17-ին Առաջաձորի պաշտպանության ժամանակ Զլոտ կոչվող տեղամասում Ն. Մարությանը ծանր վիրավորվում է, իսկ երկու օր անց՝ հունվարի 19-ին, մահանում: Նրա աճյունն ամփոփի-

ված է Մասիս քաղաքի գերեզմանատանը:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի թիվ 1106 հրամանագրով Ն. Մարությանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով, իսկ ԼՂՀ նախագահի 2003 թ. թիվ 38 հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալով:

2006 թ. սեպտեմբերին ԵՊՀ ժողովագործության մեջ անվանակոչվել է Ն. Մարությանի անվամբ:



ԼՂՀ ՊՊԿ-ի կողմից նորայր Մարությանին տրված հավատարմագիրը

Ռազմական «Երեքուհի» օդակիցներից

Հայրած - Ջոնանիսը (հետագա էջորդամ)


Խոսի - Առաջ արդեն եղան քարտուց ամեն եւ ինչ
Կրցարի և այլ Տայր ուսումնական հայոց
իրավականության և բանականական օրու
յի երրորդ հայրությունը: Երեքուհի օդակիցներ
հայր հայտնի եղելու և զայրացնելու:
Ներք Ֆանքուրի: Ծարքի օրենքով ու
շարություն ապահով եւ րոխժի:
Ծարքի հայտնի Կրցարի Դայանա-
կան համական ու վերաբերեց Եր
իշխանության գործոցում Յ: Պայտաձ քար-
շու Երեքուհի, օդակիցներ գործոց
և Տայրական բարձրորոշ վիճակն.
Օրենք տեսած և կանոնավորությունը,
ամեն բացառապես ցնելու և յարությունը
պահպան առաջ առաջ, որոնց գործոց
տօնութեան մեջ եղանակով երկարացն:

Օրենք Երեքուհի համարական իրավուց
եղան Երեքուհի «Երեքուհի» օդակիցներ:

Հայրած - Երեքուհի «Երեքուհի» օդակիցներ: (Թու-
նիսի առաջ Տայրական ԵԵ-Ֆեռա-
նակ բաց տրոցում: Ջոնանիսը)
Մրգակարարությունը բոխժի ապահով
Տայրական միջնորդ և ապահով

Հատված Նորայր Մարտիրյանի պատրաստած հաղորդումից

ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ ՍԱՆԱՍԱՐ ԼԱՎՐԵՆՏԻՒ



(1971-1992)

Ծնվել է 1971 թ. Հունիսի 17-ին
ԼՂՀ Մարտակերտի շրջանի Առա-
ջաձոր գյուղում: 1978-1988 թթ. սո-
վորել է Առաջաձոր գյուղի միջնա-
կարգ դպրոցում:

1988 թ. ընդունվել է Երևանի
պետական համալսարանի մեխանի-
կայի ֆակուլտետում: 1991 թ. երրորդ
կուրսից կիսատ թողնելով ուսումը,
մեկնել է Արցախ և որպես կամավոր
մասնակցել Շահումյանի ինքնա-
պաշտպանական մարտերին: Նույն
թվականին զինվորագրվել է Խաչե-
նի գումարտակի հակատանկային 1-
ին վաշտում: Մասնակցել է Բուղու-
լիի, Էրքեջի համար մղված մարտե-
րին:

Ս. Մնացականյանը զոհվել է
1992 թ. Հունիսի 21-ին՝ Սրիսավենդի
պաշտպանության ժամանակ: Նրա
աճյունն ամփոփված է Առաջաձոր
գյուղի գերեզմանատանը:

ԼՂՀ նախագահի 2007 թ. թիվ 17
Հրամանագրով Ս. Մնացականյանը
հետմահու պարզեատրվել է «Ա-
րիության համար» մեղալով:



(1965-1992)

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՀՐԱՆՏԻ

Ծնվել է 1965 թ. մարտի 29-ին ՀՀ Հրազդանի շրջանի Արտավազ գյուղում: 1980 թ. գերազանց գնահատականներով ավարտել է տեղի ուժամյա դպրոցը և ընդունվել Երևանի Հաշվիչ-մեքենաների տեխնիկում: Ուսումնառության ընթացքում Պետրոսյանների ընտանիքը տեղափոխվել է Արովյան քաղաք մշտական բնակության: Տեխնիկումն ավարտելուց հետո Տ. Պետրոսյանը աշխատանքի է անցել Ս. Մերգելյանի անվան Հաշվողական կենտրոնում:

1984 թ. զորակոչվել է Խորհրդային բանակ և ծառայությունն անցկացրել Աֆղանստանի Սալանդի լեռնանցքում տեղակայված զինվորական ստորաբաժանումում: Տ. Պետրոսյանը Խորհրդային կառավարության և Աֆղանստանի ղեկավարության կողմից արժանացել է Հետեւյալ պարզեների և մեղալների՝ ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի նախագահության 1988 թ. հունվարի 28-ի Հրամանագրով պարզեատրվել է «70 լետ Յօրժեյան սովորությունների հարաբեկանական մեղալով»: Աֆ-


ղանստանի նախագահի 1988թ. մայիսի 15-ի Հրամանագրով պարզեատրվել է «Յօրժեյան աշխատանքի համար առաջնային արժանապահ աշխատավարտ աֆղան ժողովրդից» մեղալով: ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության 1988 թ. դեկտեմբերի 28-ի Հրամանագրով պարզեատրվել է «Յօրժեյան աշխատանքի համար առաջնային արժանապահ աշխատավարտին» մեղալով:

1987 թ. զորացրվելուց հետո Տ. Պետրոսյանը ընդունվել է Երևանի պետական Համալսարանի իրավաբանական ֆակուլտետի Երեկոյան բաժին: Արցախյան շարժումը ստիպեց նրան կիսատ թողնել Համալսարանական ուսումը և Աբովյանի Երկրագագահ ջոկատի կազմում մասնակցել Հայրենիքի ազատագրմանը: 1992 թ. «Արծիվ» մահապարտների գումարտակի կազմում մասնակցել է Արցախի ինքնապաշտպանական մարտերին: Տ. Պետրոսյանը զոհվել է 1992 թ. հոկտեմբերի 1-ին Բերձորում (Լաշին) մղված ուազմական գործողությունների ժամանակ:

ՀՀ պաշտպանության նախարարի 1996 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 586 Հրամանի Տ. Պետրոսյանը հետմահու պարզեատրվել է «1992-1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի 1-ի Հրամանագրով պարզեատրվել է «Արիության» մեղալով:

Ամուսնացած էր, ուներ մեկ որդի:



(1967-1993)

ԶՈՒԼՀԱՃՅԱՆ ՄՀԵՐ ԱՐԱՄԻ

Ծնվել է 1967 թ. նոյեմբերի 28-ին Լիբանանի Բեյրութ քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Դամասկոսի Թարգմանչաց վարժարանում:

1978 թ. Մ. Ջուլհաճյանը ծնողների հետ հաստատվել է Պուրճ Համբուռնում, որտեղ և անդամակցել է ՀՅԴ «Նախասարդյան» պատանեկան միությանը: Միջնակարգ և երկրորդական ուսումը շարունակել է Ազգ. Խորեն Խանամիրյանի անվան քոլեջում:

1984 թ. անդամակցել է ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միության (ԼԵՄ) «Ռաֆֆի» մասնաճյուղին: 1986 թ. փետրվարին Մ. Ջուլհաճյանը ընդունվել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բնագիտության բաժին:

1989 թ. դեկտեմբերին ստացել է գիտության պակապորի վկայական:

1989 թ. Մ. Ջուլհաճյանը նշանակվել է ՀՅԴ «Բարկեն Սյունի» պատանեկան միության վարիչ և իր պարտականությունները կատարել մինչև 1991 թ. մարտ ամիսը:

1990 թ. հոկտեմբերին երդում է

տվել և անցել ՀՅԴ «Զավարյան» ուսանողական միության շարքերը:


1990 թ. սկզբից մինչև 1992 թ. հունիս ամիսը բնագիտություն է դասավանդել Ազգ. Գեորգ Զալթապաշյան և Գերմանական երկրորդական վարժարաններում: Աշխատել է նաև Բեյրութի Ամերիկյան համալսարանի բնագիտության լաբորատորիայում:

1992 թ. ամուսնացել է և տեղափոխվել Հայաստան: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական Համալսարանի երկրորդական ֆակուլտետի ասպիրանտուրան, զուգահեռ մասնակցել Արցախի ազատագրական պայքարին:

Մ. Ջուլհաճյանը զոհվել է 1993 թ. օգոստոսի 23-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Մարզի գյուղի մոտ, երբ իր չորս մարտական ընկերների հետ (Մերուժան Մոսիսյան (ՀՅԴ Արցախի ԿԿ-ի անդամ), Արտակ Մնացականյան, Լևոն Համբարձումյան և Ռուգիկ Ավագյան) ստուգում էին ԼՂՀ պաշտպանության բանակի առաջապահ ուժերի դիրքերը: Նրա աճյունն ամփոփված է եռարկությունը հուշահամալիր-պանթեոնում:

ԼՂՀ նախագահի 2003 թ. մայիսի 8-ի ՆՀ-37 հրամանով Մ. Ջուլհաճյանը հետմահու պարզեատրվել է «Արիության համար» մեղալով:

2007 թ. նոյեմբերին ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի օգտակար Հանաձոնների և Հանքավայրերի կարինեության անվանակոչվել է Մ. Ջուլհաճյանի անվամբ:




(1973-1994)

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ ԷԴԻԿԻ

Ծնվել է 1973 թ. Հունիսի 4-ին
ԼՂՀ Մարտունու շրջանի Հացի
գյուղում: 1990 թ. գերազանց գնա-
հատականներով ավարտել է Աշան
գյուղի միջնակարգ դպրոցը: Նույն
թվականին լսդունվել է Երևանի
պետական համալսարանի ուսդիր-
ֆիզիկայի ֆակուլտետի ուսդիրֆի-
զիկա և էլեկտրոնիկա բաժինը:
1993 թ. Արցախում թեժացող մար-
տերը ստիպում են Դ. Սարգսյանին
կիսատ թողնել ուսումնառությունը
համալսարանում և վերադառնալ
Հայրենի գյուղ ու ակտիվորեն մաս-
նակցել Հայրենիքի ազատագրման
պայքարին: Մասնակցել է Աղդամի
շրջանի մի շարք բնակավայրերի
համար մղված մարտական գործո-
ղություններին:

Դ. Սարգսյանը զոհվել է 1994 թ.
մայիսի 24-ին Յուսուփիջանլու բնա-
կավայրում: Նրա աճյունն ամփոփ-
ված է Հացի գյուղի հուշահամալի-
րում:

ԼՂՀ նախագահի 2003 թ. թիվ 37
հրամանագրով Դ. Սարգսյանը հետ-
մահու պարզեատրվել է «Արիու-
թյան Համար» մեղալով:



ԼՂՀ պաշտպանության նախարարության թույլտվությունը
Դավիթ Սարգսյանից Արցախից Երևան մեկնելու՝ քննություններ
հանձնելու նպատակով

ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԻ



(1965-1991)

Ծնվել է 1965 թ. ապրիլի 27-ին Երևանում: 1982 թ. ավարտել է Երևանի թիվ 162 միջնակարգ դպրոցը: 1983 թ. զորակոչվել է խորհրդային բանակ և ծառայությունը անցկացրել Լվովում տեղաբաշխված Հայկ Բժշկյանի (Գայի) անվան «Երկաթյա դիվիզիայում»: Եղել է հրետանու հետախուզական ջոկատի հրամանատար:

1985 թ. զորացրվել է և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երեկոյան բաժինը:

1988 թ. սկսված ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակիցներից մեկն էր: 1988 թ. ապրիլ ամսին Հիմնադրել է «Մեծ Հայք» Հայրենասիրական կազմակերպությունը:

1989 թ. Տ. Սարգսյանը իր զինակից ընկերների հետ՝ «Մեծ Հայք», «Ազատություն», «Նորք» Հայրենասիրական կազմակերպությունների միացման չնորհիվ ստեղծում է «Տիգրան Մեծ» ասոցիացիան և ընտրվում խորհրդի անդամ:

1990 թ. փետրվարի 15-ին Տ.

Սարգսյանի համահեղինակությամբ հրապարակվեց հոչակագիր-ծրագիրը, որով սկիզբ դրվեց՝ «Մեծն Տիգրան» աշխարհագորային գնդի կազմավորմանը՝ իր հաստիքային կառուցվածքով, սպառագինությամբ և դրոշով: Տ. Սարգսյանը ընտրվում է գնդի շտարի պետ, ուազմական խորհրդի անդամ՝ մասնակցելով Երասխավանի, Վայրի, Սիսիանի, Խնձորեսկի, Կոռնիձորի, Նոյեմբերյանի պաշտպանական մարտերին: 1990 թ. Տ. Սարգսյանը մշակել և իրականացրել է Հյուսիսային Արցախի, Շահումյանի շրջանի էրքեց, Մանաշիդ, Բուղլուխ գյուղերի ինքնապաշտպանական մարտերը:

1990 թ. ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր՝ աշխատանք տանելով իրավաբանական հանձնաժողովի կազմում:


1991 թ. նոյեմբերի 30-ին՝ Թողան գյուղի՝ Հակառակորդի կրակակետերի ոչնչացման ժամանակ ծանր վիրավորվում է ականի պայմանագիրը, և մի քանի օր անց՝ դեկտեմբերի 9-ին, ստացած վերքերից մահանում: Նրա աճյունն ամփոփված է եռաբլուր հուշահամալիր-պանթեոնում:

ՀՀ նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի ՆՀ-640 հրամանագրով ՀՀ պաշտպանության և Արցախի ազատագրական պայքարում ունեցած բացառիկ դերի համար Տ. Սարգսյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

1998 թ. փետրվարին պարգևատրվել է ԵՊՀ պատվոգրով և արծաթե հուշամեդալով:

1994 թ. հոկտեմբերին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է Տ. Սարգսյանի անվամբ, որը վերանորոգումից և կահավորելուց հետո վերաբացվեց 2007 թ. սեպտեմբերին:

Ամուսնացած էր, ունի մեկ որդի:



Տիգրան Սարգսյանի աշխատանքային փաստաթղթերից

ԱՏԵՓԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՌՈԲԵՐՏԻ (ԴՈՒՇՄԱՆ)



(1966-1992)

Ծնվել է 1966 թ. մարտի 9-ին Երևանում: 1973 -1983 թթ. սովորել է Երևանի Հ. Թումանյանի անվան թիվ 32 միջնակարգ դպրոցում:

1984-1986 թթ. Վ. Ստեփանյանը ծառայել է Աֆղանստանում տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումներում: Մասնակի թյան ընթացքում ձեռք բերած հաջողությունների համար 1986 թ. մարտի 21-ին ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվել է «Հառաջական աշխատանքության համար» (Արիության համար) մեդալով, 1988 թ. փետրվարի 23-ին՝ «70 լետ вооруженных сил СССР» (ԽՍՀՄ զինված ուժերի 70 տարի) հոբելյանական մեդալով: Աֆղանստանի նախագահի 1988 թ. մայիսի 10-ի հրամանագրով պարգևատրվել է «Воину-интернационалисту от благодарного афганского народа» (Մարտիկ-ինտերնացիոնալիստին երախտապարտ աֆղան ժողովրդից) մեդալով, իսկ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի նախագահության հոկտեմբերի 16-ի հրամանագրով՝ «Ветерану-интернационалисти» (Վետերան-ինտեր-

նացիոնալիստին) հոբելյանական մեղալով:

Զորացրվելուց հետո՝ 1986 թ., ընդունվել է Երևանի պետական Համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, սակայն Արցախյան շարժումը ստիպեց Վ. Ստեփանյանին կիսատ թողնել Համալսարանում ուսումը և զինվորագրվել Հայրենիքի պաշտպանության գործին: 1988 թ. նա ղեկավարել է Աֆղանստանում ծառայած տղաների կամավորական խումբը, որը մասնակցում էր Հայաստանի սահմանամերձ շրջաններ և Արցախ գենք ու զինամթերք ուղարկելու գործին:

1989-1992 թթ. Վ. Ստեփանյանը մասնակցել է Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի, Արարատի, Վարդենիսի, Գորիսի և ԼՂՀ ինքնապաշտպանական մարտերին: Ակտիվ մասնակցություն է ունեցել Խոջալուի, Շուշիի, Լեսնոյի, Կրկժանի, Մալիբեյլուի, Բերձորի (Լաչինի), Մարտակերտի, Ասկերանի, Բերդառի և այլ բնակավայրերի ազատագրմանը:

Վ. Ստեփանյանը զոհվել է ականի պայթյունից 1992 թ. Հուլիսի 3-ին՝ ԼՂՀ Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի ճանապարհին, մարտական կարևոր առաջադրանք կատարելիս: Նրա աճյունն ամփոփված է Եռաբլուր Հուշահամալիր-պանթեոնում:

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1993 թ. թիվ 0259-1 որոշմամբ Վ. Ստեփանյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1994 թ. մայիսի 6-ի թիվ 0334-1 որոշմամբ արժանացել է «Շուշիի ազատագրման համար» մեդալի: ԼՂՀ պաշտպանության նախարարի 1995 թ. հունվարի 29-ի թիվ 13 հրամանով Վ. Ստեփանյանը հետմահու ստացել է կապիտանի կոչում: ՀՀ նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի ՆՀ-640 հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, նույն թվականին ՀՀ պաշտպանության նախարարի ղեկտեմբերի 20-ի թիվ 586 հրամանով՝ «1992-1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով:

1998 թ. փետրվարին նրան հետմահու շնորհվել է ԵՊՀ արծաթե հուշամեդալ:

ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդին առընթեր մարտիկ-ինտերնացիոնա-

լիստների գործերով կոմիտեի 2005 թ. փետրվարի 19-ի որոշմամբ հետմահու պարգևատրվել է «Վետերան ծօւեակ ծեյտակի» (Մարտական գործողությունների վետերան) մեղալով: Նույն պարգևը ստացել է նաև 2007 թ. փետրվարի 23-ին:

1994 թ. ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի լաբարաններից մեկը անվանակոչվել է Վ. Ստեփանյանի անվամբ, որը վերանորոգումից և կահավորումից հետո կրկին վերաբացվել է 2007 թ. սեպտեմբերին:

ԼՂՀ Շուշի քաղաքի փողոցներից մեկը կրում է «Դուշման-Վարդան Ստեփանյան» անունը: Երևանի Գ. Նժդեհի 56 հասցեում գործում է «Դուշման-Վարդան Ստեփանյան» տուն-թանգարան գրադարանը:

ԼՂՀ Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի մոտակայքում կանգնեցված է Հուշակոթող՝ նվիրված Վ. Ստեփանյանի հիշատակին:



(1966-1990)

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՎՈԼՈԴՅԱՑԻ

Ծնվել է 1966 թ. մայիսի 20-ին
ՀՀ քաղաք Գորիսում: 1983 թ. ա-
վարտել է տեղի թիվ 2 միջնակարգ
դպրոցը:

1984-1986 թթ. ծառայել է
Խորհրդային բանակում՝ Զիտայի
ուազմամուռացված զորամասում:

1987 թ. ընդունվել է Երևանի
պետական համալսարանի Երկրա-
բանական ֆակուլտետը:

1988 թ. արցախյան շարժման
սկզբից ակտիվ մասնակցություն է
ցուցաբերել կամավորական ջոկա-
տի աշխատանքներին, որի հրամա-
նատարն էր Վազգեն Սարգսյանը:

1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպի-
տակի Երկրաշարժից հետո Ա. Փար-
սադանյանը մասնակցել է փրկարա-
րական աշխատանքներին:

Ա. Փարսադանյանը մեկն էր այն
ուսանող-ազատամարտիկներից,
որը կիսատ թողնելով ուսումնա-
ությունը, զինվորագրվեց Հայրե-
նիքի պաշտպանության գործին: Նա
մասնակցել է Գորիսի, Կոռնիձորի,
Կապանի, Մեղրիի, Ագարակի
պաշտպանական մարտերին՝ կան-
խելով աղբբեջանական հրոսակների
մուտքը Սյունիք:

Ա. Փարսադանյանը զոհվել է 1990 թ. հուլիսի 5-ին՝ Հայրե-
նիքի անկախության համար մղվող պայքարում: Նրա աճյունն
ամփոփված է Գորիս քաղաքի գերեզմանատանը:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի 1-ի հրամանագրով Ա. Փար-
սադանյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդա-
լով:

2007 թ. սեպտեմբերին ԵՊՀ Երկրաբանության ֆակուլտետի
կառուցվածքային Երկրաբանության և քարտեզագրության կա-
րինետը անվանակոչվել է Ա. Փարսադանյանի անվամբ:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԵՊՀ ուսկուր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պրոֆեսոր ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ**

Արցախյան շարժման նախօրեին համալսարանում արդեն լուրջ խմբումներ կային. դեռևս 1987 թ. Հունիսին ԵՊՀ պատմության ֆակուլտետի կուսակցական կազմակերպության ժողովում համալսարանականները առաջին անգամ լրջորեն բարձրացրին արցախյան հարցը: Նամակ-դիմում հղվեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, որով պատմության ֆակուլտետի կուսակցական ժողովում էր Արցախի միացումը Հայկական ԽՍՀ-ին: Այդ կուսակցական ժողովի արձագանքները բավականին լայն եղան, քննարկվեցին ողջ Հանրապետությունում: Համալսարանն արդեն այդ ժամանակ բավականին ակտիվ էր արցախյան հարցի արծարծման գործում, բայց, այնուամենայնիվ, բոլորիս համար անսպասելի, նաև շատ ուրախալի էր ԼՂԻՄ մարզկոմի 1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշումը, որը որքան էլ սպասված, սակայն բոլորիս հանկարծակի բերեց: Հիշում եմ այն մեծ ոգևորությունը, որ տիրում էր ամենուր. ամբողջ համալսարանը մեղվի փեթակի նման բզզում էր, բոլորի քննարկման թեման այդ որոշումն էր: Ոգեռությունը նաև չափազանց հուզիչ էր: Ցավոք, հետազյում պիտի լինեին Սումգայիթի, Բաքվի կոտորածները, բայց, այնուամենայնիվ, ՀԽՍՀ Կենտկոմի, ԽՄԿԿ Կենտկոմի, խորհրդային ղեկավարության նկատմամբ հավատի խոր զգացում կար, որը շատ շուտով փոխավելու էր հիսաթափության և պայքարի վճռականության: Մարդիկ սկսեցին հասկանալ, որ պետք է պայքարել Արցախի համար, և որ դա լինելու է երկարատև ու ծանր պայքար: Համալսարանում ամեն օր ժողովներ, ամենատարբեր հանդիպումներ, միտինգներ էին կազմակերպվում: Հատկապես Սումգայիթի ջարդերից հետո համալսարանը մի մարդու նման ոտքի էր կանգնել:

Առաջինը համալսարանականներն էին, որ օպերայի բակում սկսեցին նստացուցը: Իհարկե, Կենտկոմը, նախարարների խորհուրդը և նախարարությունը մեզ ստիպում էին, որ անպայման դասերը կայանան, պայքարենք դասադուլի դեմ, բայց մենք կազմակերպում էինք (իհարկե՝ գաղտնի) այդ դասադուլները, և կարծում եմ, որ այդ շրջանում համալսարանն ավելի միահամուռ էր ու համախմբված, քան երբեմ: Անշուշտ, կային մարդիկ, ովքեր դեմ էին և ասում էին, որ այդպես չի կարելի, բայց համալսարանականների հիմնական զանգվածը միաձուլ էր: Եվ ամենակարենորդ դասախոսներն ու ուսանողներն էին միասին: Դա զգալի էր նաև պատմության ֆակուլտետում, որտեղ մեծ դեր էին խաղում Լենդրուշ Խուրշույսանը, Մաոլեն Հովհաննիսյանը և շատ ուրիշներ: Մենք գրեթե ամեն օր հավաքներ էինք կազմակերպում, ժողովներ անում, պահանջներ գրում:

Շուտով Արցախին նյութապես և ֆինանսապես օգնելու կարիք զգացվեց. առանձին մարդիկ առաջին հերթին սկսեցին զենքի և զինամթերքի պատրաստություն տեսնել: Համալսարանում այդպիսինները շատ էին: Նրանցից էր Լեռնիդ Ազգալյանը, ով, փաստորեն, մեր բանակի ստեղծման ակունքներում էր կանգնած: Համընդհանուր ոգեսորություն էր տիրում, սակայն արտակարգ դրության ժամանակ, երբ խորհրդային գորքերը մտան Երևան, և ուղղաթիռներ էին պտտվում քաղաքի վրա, բոլորիս համակեց ահավոր զայրույթ: Միտինգների ոգեսորության հետ մեկտեղ, որ կար մեր մեջ (իմիջիայլոց, համալսարանականները շատ ակտիվ էին, միտինգներին բոլորս էլ գնում էինք), մեզ համակել էր նաև ընդվզման խրոխտ ոգին, երբ բանակը, երկրի իշխանությունները անարդար կերպով ուզում էին դաժանորեն ճնշել շարժումը:

Հպարտությամբ պետք է նշեմ, որ մեր ուսանողները միահամուռ նվիրվեցին Արցախի պայքարին: Օրինակ, պատմության ֆակուլտետում ստեղծեցինք հատուկ ջոկատներ, որոնք թեև կովի չգնացին, սակայն մարզպում էին համալսարանի ֆիզդաստիարակության ամբիոնում: Հիշում եմ, թե ինչպես էինք ուրախացել, երբ «Նախրիտի» պահեստներում գտանք կիսազինվորական հագուստ և կոշիկներ, քնապարկեր, որոնց մեծ մասը

բաժանվեց արդեն կովի գնացող համալսարանական տղաներին, այդ թվում նաև՝ «Տիգրան Մեծ» ջոկատին, որի կազմում համալսարանականներ շատ կային: Ուսանողներից մի քանիսն անընդհատ գնում-զալիս էին Արցախ, օգնություն էին տանում, այնտեղ որոշակի աշխատանք կատարում: Շատերը զինվորագրվեցին նորօրյա ազատամարտին՝ և՝ Վարդան Բախչյանը, և՝ Թաթուլ Կրպեյանը, և՝ շատ-շատերը: Գնացին՝ պաշտպանելու Արցախի արդար գործը: Դժբախտաբար, այդ ազատամարտում զոհվեցին շուրջ 30 ԵՊՀ-ականներ: Շուտով գումարվեց ևս մի արհավիրք՝ երկրաշարժը: Աղետի առաջին օրը համալսարանը երկու ավտոբուսով ջոկատներ ուղարկեց աղետի գոտի՝ մասնակցելու փրկարարական աշխատանքներին: Նոր արհավիրքը, իհարկե, շատ ընկճեց ժողովրդին, բայց չկոտրեց հանուն Արցախի պայքարը շարունակելու կամքը և վճռականությունը: Դրա վկայություններից էին արտակարգ իրավիճակի պայմաններում անցկացված կուսակցական ժողովը, այնուհետև համալսարանականների՝ հաջորդ օրվա միտինգը, երբ զինվորականությունը ուսւ գնդապետի գլխավորությամբ եկավ, որպեսզի ցրի միտինգ-ժողովի մասնակիցներին: Անկասկած, ջարդ տեղի կուննար, եթե չիններ կուսկոմիտեի քարտուղար Յուրի Մկրտումյանի վճռականությունը, ինչպես նաև գնդապետ Սուրեկովի միջամտությունը: Համալսարանի կուսկոմիտեի քարտուղարը համալսարանի մուտքի մոտ կանգնեցրեց զինվորականներին: Սուրեկովի հետ բանակցությունների արդյունքում զինվորականները հեռացան: 1988 թ. Յուրի Մկրտումյանը վճռական դեր էր կատարում համալսարանում տեղի ունեցող անցուղարձում: Բուհի ղեկավարությունը՝ ի դեմս ուեկտոր Սերգեյ Համբարձումյանի, պայքար էր մղում Մոսկվայում՝ Գերազույն խորհրդի նստաշրջանում: 1988 թ. նոյեմբերին՝ մեզ համար ծանր այդ օրերին, ժողովի ժամանակ հեռազիր կարգացվեց, որ Ղարաբաղում սկսվել են հայերի ջարդերը: Երեկոյան կողմ էր, ամբողջ դաշիճը լեփ-լեցուն էր, և ահավոր լարված մթնոլորտ էր տիրում:

Հիշարժան է համալսարանականների երթը, երբ ապրիլի 24-ին եռագույնները պարզած՝ գնացինք դեպի Միծեռնակարերդ: Միակ պայմանը, որ Կենտկոմը մեր առաջ դրել էր, այն էր, որ

մենք լոելայն անցնենք: Իհարկե, ՀԿԿ Կենտկոմն այդ ժամանակ իրեն խայտառակ ձևով էր պահում, թեև կային նաև աղնիվ մարդիկ, ովքեր դուրս եկան Կենտկոմի քաղաքականության դեմ, բայց Կենտկոմն ամեն դեպքում ժողովրդի հետ չէր:

Համալսարանական մտավորականությունը պայքարի ավանդարդում էր: «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավար կազմում կային Համալսարանականները: Համալսարանում ևս կազմակերպված խմբեր էին գործում. Պատմության ֆակուլտետում ձևավորված խումբը ղեկավարում էր Լենդրուշ Խուրշույանը, ուղղութիղիկայի ֆակուլտետում՝ Յուրի Վարդանյանը և այլք: Զկար ֆակուլտետ, որտեղ այդպիսի խումբ ձևավորված չիներ, չիներին ակտիվ մասնակիցներ: Բոլորը վճռականորեն կանգնեցին Ղարաբաղյան շարժման դիրքերում. Համալսարանը միասնական ուժ էր դարձել. ուսանող, աշխատող, դասախոս և նման հասկացություններ այս պայքարում կարծես չկային, բոլորը միասին էին:

Մեր մտավորականությունը, այո՛, կարողացավ առաջնորդել հասարակությանը: Շատ խնդիրներում մերոնք առաջամարտիկ էին՝ և՝ ժողովներում, և՝ փաստաթղթեր ստեղծելու հարցում, և՝ Ղարաբաղի մասին առաջին ծիծեռնակ հանդիսացող աշխատությունների ստեղծման, և՝ երթերի, միտինգների կազմակերպման գործում: Ղարաբաղ առաջին գնացողների ու մարտնչողների շարքերում ևս Համալսարանականներ էին՝ թե՛ ուսանողներ և թե՛ դասախոսներ. Լեռնիդ Ազգալյանն էր, Սիմոն Աչիքյովյանը, Թաթուլ Կրպեյանը և շատ ուրիշներ:

Արդեն նշեցի, որ մերոնք անընդհատ մեկնում էին Արցախ: Առաջին անգամ ֆակուլտետի գործընկերներիս հետ Արցախ գնացի 1992 թվականին, այն ծանր շրջանում, երբ Շահումյանը հանձնել էինք, երբ ազերիները հարձակվելով առաջ էին գալիս: Նույնիսկ քիչ մնաց գնդակոծության ենթարկվեինք: Բազում Համալսարանականներ զինվորագրվեցին Արցախի գոյամարտին, մտան նոր կազմավորվող պաշտպանության բանակի շարքերը, իսկ այնուհետև նրանցից շատերը դարձան զինվորականներ և այսօր էլ աշխատում են պաշտպանության նախարարության համակարգում: «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալությունից

հետո Համալսարանականները ակտիվորեն պայքարում էին նրա անդամներին ազատ արձակելու համար: Արտակարգ իրավիճակների և պարետային ժամի ժամանակ ուժիմին չենթարկվողներին, այդ թվում նաև Համալսարանականներին բոնում, ձերքակալում էին: Յու. Մկրտումյանը մի ամրող ամիս առավոտյան գալիս էր Համալսարան և սկսում էր բանակցել, որ մեր գործընկերներին ազատեր կալանքից: Ի պատիվ Համալսարանականների՝ պետք է ասել, որ նրանք բարձր կամային հատկանիշներ ցուցաբերեցին և ոչ մի բանի առաջ չընկրկեցին, բոլոր դժվարությունները կարողացան արժանապատվորեն հաղթահարել: Կարծում եմ, որ Արցախյան գոյամարտում ԵՊՀ-ն յուրատեսակ կենտրոն էր, որը և՛ պայքարել գիտեր, և՛ պայքար ղեկավարել: ԵՊՀ-ն հաստատապես իր ուրույն դերն ունեցավ մեր նորանկախ պետության ստեղծման գործում:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Արցախյան շարժման սկզբից համալսարանը եռում էր: Ես սիրահարված եմ արցախսահայությանը. երբ տեսա նրա վերաբերմունքը հողի ու մարդու նկատմամբ, հիրավի, անկեղծորեն սիրահարվեցի: Կարծում եմ՝ դա նրանից է, որ Արցախի մելիքները պետականության կրողներ էին, և պետականության նշույներ կային այդ հողում: Բոլոր դեպքերում շատ ավանդապահ, ավանդապաշտ, հայրենիքը սիրող, նվիրական մարդիկ են արցախսահայերը: Ապացույց, երբ շարժումը գաղափարական պայքարից վերաճեց պատերազմի, որի հարաբերուն էլ, անշուշտ, Աղրբեջանն էր, արցախցիները ոտքի կանգնեցին և չլրեցին իրենց հողը, սա շատ կարևոր է: Ինչևէ, այդ ժամանակ՝ 1988 թ., համալսարանում եռուցեռ էր: Եվ մեր ֆակուլտետը առաջատար էր: Ես հիշում եմ. 1988 թ. մայիսն էր, թվում էր՝ արդեն շարժումը դեպի վայրէջք էր զնում: Ժաննա Գալստյանը Ղարաբաղից եկավ, ելույթ ունենացավ Զարենցի անվան դահլիճում: Հենց այդտեղից մենք զնացինք նստացույցի՝ Օպերայի բակ, և նստեցինք աստիճանների վրա: Նախարարների խորհրդի նախագահը Ֆադեյ Սարգսյանն էր, տեղակալը՝ Վլադիմիր Մովսիսյանը: Ֆ. Սարգսյանի հանձնարարությամբ Վ. Մովսիսյանը ընդունեց մեզ: Մենք այդ ժամանակ պահանջ էինք զնում, որ հեռուստատեսությունը և նաև մյուս լրատվամիջոցները խոսեն Արցախի մասին, ձշմարիտ տեղեկություններ տան: Բայց Արցախի մասին չէին ուզում խոսել: Այնուհետև վերադարձանք, նստացույցը շարունակվեց մինչև լույս, առավոտյան բանասերներին միացան նաև համալսարանի ֆիլիկոսներն ու մաթեմատիկոսները, որոնք շատ ակտիվ էին: Եվ, իմ կարծիքով, սկսվեց շարժման երկրորդ փուլը, որն արդեն վերելք էր: Ես որոշ օգնություն էի տանում նստացույցի մասնակիցներին՝ հաց, պանիր, երշիկ և այլն: Ասում են, թե այն ժամանակ

ինձ շատ են նկարել Պետանվտանգության կոմիտեից: Բոլորը գիտեին, որ ես կոմունիստ եմ, ես իրանից եմ կոմունիստ եկել, կուսակցության անդամ եմ եղել իրանում, ընդհատակ եմ տեսել, դատապարտվել եմ, բայց ինձ համար Հայրենիքը ուրիշ հասկացություն էր: Ես այստեղ արդեն լրիվ ուրիշ դաստիարակություն էի ստացել: Այդ ժամանակ էլ մեր ֆակուլտետի կուսկազմակերպության քարտուղարն էի: Կարծում եմ, որ համալսարանականներն իրենց շատ բարձր պահեցին այդ ժամանակ: Հետո եկավ արդեն 1990 թվականը: Ասեմ նաև, որ մինչ այդ մենք 1600 ծառ տարանք Արցախ, «Լազ» մեքենայով Կիրովաբաղով* զնացինք դեպի Մաճկալաշեն: Խորհրդանշական է, որ առաջին դպրոցը Մեարոպ Մաշտոցը հիմնադրել է Ամարասի ձորակում: Ես այդ ժամանակ ընտրվել էի «Ամարաս» բարեգործական կազմակերպության վարչության անդամ, որի անդամներն էին նաև Արմեն Հովհաննիսյանը, Ռոբերտ Ամիրիսանյանը և ուրիշներ: Եվ այդտեղ ծանոթացել էի Մաճկալաշենի գյուղապետ Արմիկ Մելքոնյանի հետ, որը հետազայում դարձավ շտարի պետ. մի հրաշալի անձնավորություն: Գնացինք, ծառատունկ կազմակերպեցինք: Առաջին համալսարանականները, որ Ղարաբաղում ծառ են տնկել, մենք ենք եղել: Նաև համերգներով հանդես եկանք: Եվ այդպես կապվեցինք այդ հողին: Հետո ավելի ծանր ժամանակներ եկան: Ես ունեի մի գերազանցիկ ուսանող՝ Սարգիս Գալստյան՝ թուրքագիտության բաժնում: Նրան առաջարկեցի, որ ասպիրանտուրա ընդունվի, քանի որ պակաս կարևոր չէ լավ լեզու իմանալը, հառկապես թուրքերեն: Զհամաձայնեց և ասաց, որ պիտի զնառ կովի: Եվ զնաց, կովեց՝ ի պատիվ իրեն: Զենքը ձեռքին պաշտպանեց այդ հողը: Այսօր զեկավարում է մի կենտրոն, որը օգնում է հղի կանանց. Նաջարյաններն** են ստեղծել... դե, ստեղծել եմ ես, բայց Փինանսավորել են նրանք: Այդ կենտրոնի պատմությունը շատ հետաքրքիր է. մենք ուղղաթիուզ զնում էինք Ղարաբաղ. այն շրջափակման մեջ էր. Հաղորդակցվելու միակ ճանապարհն ուղղաթիոն էր: Մենք մեզ հետ տանում էինք սնունդ

* Պատմական Գանձակ քաղաքը:

** Հայ բարերար բժիշկների ընտանիք Բոստոնից:

և վառելանյութ: Ես երկու անգամ նաև ինքնաթիռով եմ վառելանյութ տարել: Օգնություն տվեցի մի կնոջ, ասացի՝ խնդրում եմ, ստացեք, ասաց, որ իրենք այդքան էլ օգնության կարիք չունեն, չանհանգստանանք. իր ամուսնու հայրը կովում է, ամուսինը ֆիդայի է, իսկ երկու երեխաները, որ իր կողքին են, ֆիդայի են դառնալու, իսկ հետո ավելացրեց. «Ճեկն էլ փորումս ունեմ»: Ահա թե որն է հզոր մարդը, հզոր հայ կինը, ազգը պահող կինը: Իմ մեջ միտք հղացավ, թե ինչ կարելի է անել, որ հղիներին օգնենք: Եվ այդ կենտրոնը բացեցինք, ավելի լավ մարդ, ավելի միշտ մարդ, որը կղեկավարեր այդ կենտրոնը, քան Սարգիսը, չկար:

Կարծում եմ՝ բուն պատերազմը Գետաշենից հետո սկսվեց: 1991 թ. մայիսի կեսերն էին: Ես անընդհատ կապի մեջ էի Արցախի հետ: Այդ ժամանակ ՀՀ ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանը պաշտպանության նախարար էր: Հաղորդակցության առաջին միջոցները ես եմ բերել: Այսօր շատ մարդիկ կխոսեն, բայց փաստաթղթեր կան: Շատ մարդիկ կասեն... դե հնարավոր է մեկ-երկու... տասը հատ բերել են՝ փառք իրենց: Բայց մասշտարային չափերով՝ մենք ենք բերել: Դա այնքան անհրաժեշտ էր, այնքան կարևոր, որ Մոնթեն ինձ ասում էր՝ մեկ հատ «Ալենկո» տուր, երկու հատ տանկ կտամ քեզ: Մոնթեն, որ խելագարվում էր ուղամատեխնիկայի համար.... Մոնթեն իմ պաշտելի մարդն է: Շարժման սկզբին մենք Արցախից բերում էինք չոր թութ, մասուր, ուրց, թթի օղի և աճուրդի էինք հանում: Մարդիկ մեծ ոգևորությամբ մասնակցում էին աճուրդին: Ասում էի՝ Արցախի ձագուկների նուրբ մատիկներով է հավաքված այս մասուրը, այս թութը իրենք են չորացրել: Եվ գնում էին մեծ գումարներով: Եվ այդ ամբողջ գումարը գնում էր, անշուշտ, շատ կարևոր տեղ, ծախսվում էր շատ սուրբ ու նվիրական գործի համար: Մարդկանց մեջ մաքրությունը շատ բարձր էր: Դա, իրոք, հայերիս համար շատ սուրբ գործ էր: Համալսարանականները ինձ ոգևորում էին: Պատերազմի ընթացքում մենք բրդյա թելեր ունեինք, իմ նախաձեռնությամբ սկսեցինք զինվորների համար գործել գուլպաներ և զլիսարկներ... Եվ դա անում էին ԵՊՀ ուսանողները: Հազարավոր զույգ գուլպա, նաև զլիսարկ էր գործվում: Այդ ժամանակ կամավոր զինվորներ էին, քանակ չկար, իսկ կամավո-

րական ջոկատները առավել ևս օգնության կարիք ունեին, քանի որ պետական հոգածություն դեռևս չկար:

Համալսարանում շատերն էին այս գործին նվիրված: Ես լրիվ ուրիշ ճակատով էի մասնակցում, բայց բոլորի հետ էի: Հետո սկսվեց արդեն զենքի մատակարարումը, արկերի տեղափոխումը: Ուսանողները կանգնած էին մեր մեջքին, մենք՝ նրանց, նրանք հանդուրժում էին նաև մեր կողմից զասերի բացթողումները: Նրանք մեզ հասկանում էին: Մենք իրավունք չունեինք նրանց դասերի փոխարեն ուրիշ բան անել, սակայն նրանք մեզ հասկանում էին: Իսկ դա նշանակում է, որ իրենք մեր մեջքին կանգնած էին: Մինչև այսօր էլ այդպես է: Մի քանի փոքրիկ հայտարարություն էր արվում, և ուսանողները հավաքվում էին: Այսօր էլ ծառատունկի գնալիս այդպես ենք անում, և ուսանողները հերթագրվում են, որպեսզի գնան Արցախ՝ ծառատունկի:

**ԵՊՀ Փիզիկայի ֆակուլտետի պինդ մարմնի Փիզիկայի
ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պրոֆեսոր ԱԼԲԵՐՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Ես, իրոք, այդ ժամանակների ականատեսն եմ: Կարող եմ ասել, որ Համալսարանը նախապատրաստված էր այդ դեպքերին: Ազգային հարցերի տեսանկունից Համալսարանը տարրերվել է մյուս բուհերից, քանի որ այստեղ կենտրոնացած են եղել մտավորականներ, ովքեր հիմնականում ունեցել են ազգային մտածելակերպ: Համալսարանում դեռևս 1980-ական թվականներից գործել է հայ մշակույթի ակումբ, որի շատ անդամներ հետագայում դարձան արցախյան շարժման ականավոր ներկայացուցիչներ (Լևոն Տեր-Պետրոսյան, Վազգեն Մանուկյան, Բարկեն Արարքյան, Դավիթ Վարդանյան և ուրիշներ), ուստի պատահական չէ, որ Համալսարանականները միշտ մի քայլ առաջ են եղել, քան մյուս բուհերի ուսանողները և աշխատակիցները: Իհարկե, Հնարավոր է, որ այս հարցում ես փոքր-ինչ սուրյեկտիվ եմ: Ասկածը հիմնավորելու համար նշեմ, որ, օրինակ, Բժշկական ինստիտուտը* շարժման սկզբնական փուլում ավելի քիչ ակտիվ էր: Օպերայի հրապարակում առաջին միտինգի օրը պատմում էին, որ Բժշկական ինստիտուտի ղեկավարությունը փակել է դոները, որ ուսանողները չգնան միտինգի:

Շատ լավ եմ հիշում 1988 թ. փետրվարի 20-ը: Լուր տարածվեց, որ Օպերայի բակում հավաք է կազմակերպվել «կանաչների», ատոմակայանի, կառւչուկի գործարանի վերաբերյալ, բացի դրանցից, Ղարաբաղի հարցն էլ էր քննարկվելու: Հիշում եմ այդ օրը կուսակցական և կոմերիտական կոմիտեների աշխատողների վարքը. շատ զարմացած էին և շփոթված: Վազգում

* Այժմ Երևանի Մ. Զերացու անվ. պետական բժշկական համալսարան:

էին միջանցքներով՝ ուսանողներին հայտնելով, որ ժամը երկուսին ԵՊՀ մեծ դահլիճում ցուցադրվելու է “Օκո Յ սպաևու” գեղարվեստական կինոնկարը (այդ նույն ժամին միտինգն էր նշանակված): Նրանց կարծիքով, այդ կինոնկարը պետք է ուսանողներին հետաքրքրեր և հետ պահեր միտինգից: Սակայն ուսանողները մեծ խմբերով դուրս էին գալիս համալսարանից և զնում Օպերայի հրապարակ:

Մեր ուսանողները հենց սկզբից էլ մասնակցել են նստացույցներին, որոնք տարերայնորեն կազմակերպվել էին Օպերայի բակում. այնտեղ կային նաև ուսանողներ մանկավարժական ինստիտուտից*: Նույնով բոլորիս համար սովորություն դարձավ գործի զնալիս կամ զալիս անպայման օպերայի հրապարակով անցնել և նորություններ իմանալ:

Հիշում եմ, որ ԼՂՀՄ մարզային խորհրդի որոշումից հետո սկսվել էր հայկական ավտորուսների ջարդուխուրդը: Այդ ավտորուսները միշտ զալիս էին օպերայի բակ. քարերով խիված-ջարդված «Խկարուս»-ներ էին:

Անմոռանալի է Խորհրդային Միության իշխանությունների այն ժամանակա վարքը. ինչպես էին վերաբերվում Հայաստանում տեղի ունեցող դեպքերին, Մ. Գորբաչովի հայտարարությունները «խուլիսանների», «Հայ էքստրեմիստների մասին»: Մի բան էինք տեսնում մեր աչքով, նույն օրը Մոսկվայից հեռուստատեսությամբ լրիվ այլ բան էինք լսում և տեսնում: Ռուսական թերթերը գրում էին, խորհուրդներ տալիս «մեծ եղբոր» կողմից:

Մեծ էր ուսանողների ոգևորությունը, բայց դասախոսներն էլ պակաս ոգևորված չէին: Համալսարանի ֆակուլտետներում անընդհատ նիստեր էին տեղի ունենում, անընդհատ որոշումներ էին կայացվում, որոնք ուղարկվում էին ամենատարբեր հասցեներով, հիմնականում՝ կենտրոնական թերթերին: Դասախոսները երբեք չեն արգելել ուսանողներին գնալ ցուցերի: Սակայն,

* Այժմ Խ. Արովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարան:

Եթե նույնիսկ արգելեին, ուսանողները, միևնույնն է, գնալու էին: Դա այնպիսի հարց էր, որ ամբողջ ազգին էր վերաբերում, և տարբերություն չկար ուսանողի և դասախոսի միջև:

Եթե չեմ սխալվում, 1988 թ. նոյեմբերի 24-ին խորհրդային իշխանությունները զորք մտցրին Երևան, հայտարարվեց հատուկ դրություն, և իշխանության փաստացի տերը դարձավ զինվորականությունը: Երևանի զինվորական պարետ նշանակվեց գեներալ Մակաշովը:

Բոլոր միտինգներն ու հավաքներն արգելվեցին: Դեկտեմբերին ձերբակալվեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամների մեծ մասը, մյուսները ձերբակալվեցին 1989 թ. հունվարի սկզբներին: Օրյեկտիվ տեղեկատվություն ստանալը չափազանց դժվարացավ: Այս պայմաններում համալսարանը փաստորեն դարձավ շարժման ողին պահպանող կենտրոններից մեկը: Այդ օրերին մարդիկ գալիս էին համալսարան՝ տեղեկանալու Արցախում կատարվող իրադարձությունների մասին: Նրանք հավատում էին համալսարանին: Կցանկանայի հատուկ նշել համալսարանի կուսկոմիտեի առաջին քարտուղար Յուրի Մկրտումյանի մեծ աշխատանքն այդ ծանր շրջանում, ում հաջողվեց զինվորական դրության պայմաններում պահպանել համալսարանի հարաբերական աղատությունը:

Իմ կարծիքով, համալսարանի մտավորականությունը, իրոք, զգալի դեր կատարեց և՛ ժողովրդի լուսավորման, և՛ պրակտիկ գործում: Հիշում եմ, որ համալսարանում կազմակերպվել էր 15-հոգանոց խորհուրդ, որն զբաղվում էր ամեն տեսակի հարցերով՝ սկսած դրամահավաքից և վերջացրած զենք հայթայթելով: Ղեկավարն էր պրոֆեսոր Գ. Փանոսյանը՝ կենսարանության փակուլտետից, անդամներն էին՝ Գ. Մելիքյանը, Ն. Գալստյանը, Ֆրիկ Մելիք-Աղամյանը, Ռ. Տոնոյանը, Վ. Պետրոսյանը (ԵՊՀ գլխավոր հաշվապահ), Յու. Մկրտումյանը և էլի ուրիշներ: Մի անգամ Գ. Փանոսյանը որոշակի գումար տվեց, որ մի քանի հոգով գնանք ինքնաճիգ գնելու: Ընդ որում, ինքնաճիգ վաճառողներն էլ կոմերիտումիության կենտրոնական կոմիտեից էին: Մեզ ասացին, որ ինչ-որ մեկի հետ պայմանավորվել են, որն ինքնա-

ձիգ պետք է բերեր 40 թե 50 հազար ռուբլով: Պարզվեց, որ խարել են:

Ֆակուլտետներում բոլորն ինչ-որ բան անում էին: Օրինակ՝ մեր ֆակուլտետում, տարբեր սենյակներում հրացանների համար կոտորակ էին պատրաստում, քանի որ այն ժամանակ հիմնական զենքը որսորդական հրացանն էր: Կապարե գնդակներ էինք ձուլում Արցախի համար: Հատկապես ուզում եմ հիշատակել ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի աշխատակից, հանգույցալ Միասկ Մարտիրոսյանին և մեր ամբիոնի աշխատակից, վաղամեռիկ Արմանդ Ռոստոմյանին, ովքեր ֆակուլտետի աշխատակիցների հետ պատրաստել էին հատուկ կաղապարներ և միաժամանակ շատ գնդակներ էին ձուլում, որոնք այնուհետև տոպրակներով, հատուկ մարդկանց միջոցով ուղարկվում էին Արցախ: Յու. Մկրտումյանի ջանքերով Եղեգնաձորից թիկնոցներ (յափնջիներ) բերվեցին: Մեր ամբիոնում պատրաստած կաղապարներով դրանցից որսորդական հրացանների համար խից (ուսիշ) էինք կտրում: Հագուստ էլ էինք հավաքում և ուղարկում Արցախ: Օգնության հիմնական հոսքը սկսվեց երկրաշարժից հետո՝ հագուստ, սնունդ և այլն: Այդ ժամանակ համալսարանի ղեկավարության ձեռքերը մի քիչ «կապված» էին, և չէր կարող ամեն ինչով մեզ օգնել, բայց չէր էլ խանգարում: Որքան ինձ հայտնի է, քիմիական ֆակուլտետում էլ վառողի արտադրության հետ կապված գործեր էին արվում:

Նարման առաջին օրերին և շաբաթներին մտածում էինք, որ մի քանի ամիս հետո, մի քանի տարի անց Արցախի հարցը վերջնականապես և արդարացիորեն լուծված կլինի: Եղանդկարագույն տարիներ, հաղարավոր զոհեր և փայուն հաղթանակներ: Մտեղծվեց Հայաստանի Հանրապետությունը՝ մեր երազանքների մարմնացումք: Սակայն շարժման սկզբից 23 տարի անց էլ դեռևս Արցախի հարցը շարունակում է մնալ մեծ տերությունների աշխարհաբարձրական խաղերի առարկա:

**ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի
հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի
դոցենտ ՆՈՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ**

Մինչև արցախյան շարժումն արդեն պատմության ֆակուլտետը իր կուսակցական կազմակերպության ժողովում քննարկել և որոշում էր ընդունել Արցախի վերաբերյալ և նամակով դիմել էր ԽՄԿ կենտրոն՝ կոնկրետ հասցեազգրված Մ. Գորբաչովին: Փաստորեն նա բարձրացրել էր Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Եվ պատմաբանները այն հիմնավորել էին գիտական փաստարկներով: Այդ գործում ակտիվ դերակատարում ունեին նաև Յուրի Մկրտումյանը և Լենդրուշ Խուրշույանը: Դա տեղի ունեցավ 1987 թ. հունիսի վերջերին:

Այնուհետև, երբ սկսվեց շարժումը, երկրորդ օրը ԵՊՀ մեծ դաշլիճում տեղի ունեցավ Համալսարանի կոլեկտիվի ընդհանուր ժողով, որը կազմակերպել էին մաթեմատիկոսները: Բավականին լուրջ ժողով էր, կենտրոնից վազեցին եկան: Ժողովը նախագահում էր Ֆրիկ Մելիք-Աղամյանը: Ամբողջ դաշլիճը լեփ-լեցուն էր: Ժողովում ընդունվեց որոշում, խմբագրվեց և ուղարկվեց ԽՄԿ կենտրոն: Դրանից հետո սկսվեց շատ ակտիվ շարժում: Ընդ որում, այդ շարժման մեջ իր ուրույն տեղն ունեցավ Համալսարանը: Դա հայրենասիրական շարժում էր: Իհարկե, հետո ՀՀՆ-ն պղտորեց այդ շարժումը՝ հենց իր առաջին Համագումարից սկսած: 1988 թ. նոյեմբերի 24-ին, երբ Մոսկվայից եկան և հատուկ դրություն հայտարարեցին, հաջորդ օրն ամբողջ թափորը օպերայի բակ գնալու փոխարեն եկավ Համալսարան: Ամբողջ բակը, դաշլիճը լեփ-լեցուն էր: Երբ խորհրդային գորքերի հրամանատարը եկավ և ուղում էր ժողովը ցրել, Մկրտումյան Յուրիին թույլ չտվեց: Նա շատ համարձակ մարդ էր: ԵՊՀ-ում շատ ձերբակալություններ նա կանխեց (նա մեծ աշխատանք կատարեց, որպեսզի չկրկնվեն 1937 թ. ձերբակալությունները):

ԵՊՀ կուսակցական կոմիտեն, փաստորեն, դարձել էր շարժման կենտրոն: Կուսակցական կոմիտեն օգնում էր նաև Սպիտակի երկրաշարժից տուժածներին. ջոկատներ էր ուղարկում, որոնք տեղում մասնակցում էին փրկարարական աշխատանքներին:

1989 թ. կեսերից սկսվեցին զինված բախումները, որոնք հետագայում վերածվեցին պատերազմի: Ինչքան էլ «Ղարաբաղ» կոմիտեն ցանկանում էր սահմանադրական ճանապարհով լուծել հարցը, բոլորս գիտակցում էինք, որ դա հնարավոր չէ: Սումգայիթից հետո ամեն ինչ պարզ էր: Սումգայիթից հետո արդեն համալսարանականները՝ Ֆրիկ Մելիք-Աղամյանը, ես և ուրիշներ, հավաքվեցինք և սկսեցինք քննարկել, թե ինչով կարող ենք օգնել զինված պայքարին: 1989 թ. կեսերին համալսարանում կազմավորվեց հատուկ հանձնաժողով, որտեղ ընդգրկված էին Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանը (ակադեմիկոս, ԵՊՀ ռեկտոր), Լենդրուշ Խուրշույանը (հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ), Յուրի Մկրտումյանը (ազգագրագետ, դոցենտ, ԵՊՀ կուսակոմիտեի քարտուղար), Գարեգին Փանոսյանը (պրոֆեսոր, գենետիկայի ամբիոնի վարիչ), Ռաֆիկ Տոնոյանը (կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ղեկան), Ֆրիկ Մելիք-Աղամյանը (դոցենտ) և ես՝ Նորիկ Գալստյանն (հանձնաժողովի նախագահ): Հանձնաժողովը հիմնականում զբաղվում էր մարտական ջոկատներին օգնություն ցուցաբերելու կազմակերպական հարցերով՝ սկսած հագուստից, վերջացրած զենք-զինամթերքով: Մարտակերտի Ազատագրական բանակի (գլխավոր հրամանատար՝ Լ. Ազգալյան) սպասարկման հարցերը իր վրա էր վերցրել համալսարանի կոլեկտիվը: Զկար մեկ այլ կազմակերպություն Հայաստանում, որը կարող էր համալսարանի հետ մրցել այդ հարցում: Համալսարանականները շատ լուրջ ներդրում ունեն Արցախյան պատերազմում տարած հաղթանակում: Մենք օգնություն ենք ուղարկել Արցախ, Հայաստանի շրջաններ: Պաշտպանության կոմիտեին օգնել ենք զինամթերքի բավականին մեծ պաշարով: Օգնության չափի մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ համալսարանը հայթայթել է 1200 ձեռք զինվորական հագուստ, որի մեջ մտնում էին բաճկոն, տարատ, զինվորական կոշիկներ և զինարկ: Իսկ այնուհետև համալսարանում կազմակերպեցինք

Միաաք Մարտիրոսյանի ջանքերով կարեցինք մոտ 8000 անձ-
րևանոց: Արցախ ենք ուղարկել նաև քնապարկեր, վրաններ: Այդ
հարցում Համալսարանին շատ է օգնել «Անդրնավթզագչին»
տրեստը, որի ղեկավարն էր Սենիկ Վազգենի Գևորգյանը: Նա
բազմաթիվ անգամ օգնել է սննդով, հագուստով, վրաններով,
քնապարկերով, և այդ ամենը «Կամազ» մեքենաներով տե-
ղափոխվում էր Արցախ: Մենք շատ ենք օգնել Գետաշենին:
Գետաշենը ստացել է օգնություն ըստ պահանջի:

Հանրապետական կուսակցության կազմում ստեղծվեց «Ան-
կախության բանակ» ռազմական միավորումը, որի հրամանա-
տարն էր Համալսարանական Լեռնիդ Ազգալյանը: 1990 թ.
աշնանը Գերագույն խորհրդի նիստում դրվեց Հետևյալ հարցը՝
արգելել կուսակցություններին զինված ջոկատներ պահել: Եվ
Հանրապետական կուսակցության նախագահ Աշոտ Նավասարդ-
յանը Գերագույն խորհրդի նիստում հրաժարվեց զինված ջոկատ
պահելուց և հայտարարեց ջոկատի լուծարումը: Այդ ժամա-
նականից ջոկատի ղեկավարությունը իր վրա վերցրեց ԵՊՀ
կոլեկտիվը:

Ազատագրական բանակը սկզբում գտնվում էր Վարդենի-
սում, Շահումյանում, Հետո անցավ Մարտակերտ: Մարտակեր-
տի տարածքը Արցախի 40 տոկոսն է կազմում, երեք կողմից
շրջապատված էր թուրքերով: Եվ քանի Լեռնիդ Ազգալյանն էր
ղեկավարում այդ տարածքի պաշտպանությունը, թշնամու
նույնիսկ մի տանկ չի հատել Մարտակերտի սահմանները:

Ակտիվ էին նաև քիմիական ֆակուլտետի դասախոսները,
օրինակ՝ դոցենտ Հելբիկ Հակոբյանը և Կարապետ Դավթյանը
միասին քիմիական ֆակուլտետում Հայաստանում առաջինը
սինթեզեցին հրթիռային վառելանյութը: Հետո Կարապետ Դավթ-
յանը ուղում էր գերհզոր ոումք ստեղծել, չկարողացանք գտնել
ըենզին, որին խառնված չինեին ծանր նյութեր: Պարզվում է, որ
ըենզինին արճիճ են խառնում, որպեսզի չպոլիմերացվի:

Այդ տարիներին Համալսարանի ուսանողությունը նույնպես
շատ ակտիվ էր՝ նվիրված հայրենիքի ազատագրման գաղափա-
րին:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ ԵՊՀ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1988

№ 1

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի կոլեկտիվի 1988 թ.
փետրվարի 24-ի ընդհանուր ժողովի մասին

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԻՐԱՎԱԾ էր Լեռնային Հարաբաղի Ինքնավար Մարզում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձություններին:

Ելույթ ունեցողները մասնավորապես նշեցին, որ Լեռնային Հարաբաղում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձությունները օբյեկտիվորեն չեն լուսաբանվում և մեկնաբանվում մասսայական ինֆորմացիայի կենտրոնական միջոցների կողմից, որը և ապակողմնորոշում է սովետական հասարակայնությանը: Հատկապես ընդգծվեց, որ ԼՂԻՄ-ի մարզային սովետի որոշումը՝ «ԼՂԻՄ-ը Աղբբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու համար Աղբբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին», ոչ թե Հայքնակչության սոսկ մի մասի ցանկության արդյունքն է՝ հրահըրված իրը առանձին ծայրահեղական անձանց և ազգայնական տարրերի «անպատճախանատու կոչերով», ինչպես զա ներկայացվում է պաշտոնական հաղորդագրություններում, այլ ԼՂԻՄ-ի հայքնակչության կամքի արտահայտությունը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՎԻՐ է Հանվիր ԼՂԻՄ-ի մարզային սովետի ղեպուտատների հասցեին արված ազգայնականության և ծայրահեղականության անհիմն մեղադրանքը: Ժողովի որոշման մեջ հայտնվում է անհամաձայնություն ՏԱՄՄ-ի փետրվարի 21-ի հաղորդագրության այն դրույթին, որ ոեգիոնում գոյու-

թյուն ունեցող ազգային-տերիտորիալ կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Հայկական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ աշխատավորների ինտերնացիոնալ շահերին, վնաս հասցնում ազգամիջյան հարաբերություններին, և այն միտքն է արտահայտվում, որ հարցի դրական լուծումը միայն կամրապնդի երկու ժողովուրդների եղբայրական բարեկամությունը:

«Համոզված ենք,- ասված է որոշման մեջ,- որ ադրբեջանական ժողովուրդը հանդես կրերի Հիշյալ հարցի խոր ըմբռնում, սժամափություն և բարյացկամություն»:

Եվ քանի որ ՍՍՀՄ միութենական հանրապետությունների սահմանների փոփոխություններ նախատեսված են ՍՍՀՄ հիմնական օրենքով*՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային սովետի որոշումը՝ «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետին ու Հայկական ՍՍՀ Գերագույն սովետին՝ խոր ըմբռնման զգացում դրսեորել Լեռնային Ղարաբաղի հայքական իդաերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմ հանձնելու հարցը» լիովին համապատասխանում է ՍՍՀՄ սահմանադրության հիմնադրույթներին, ժողովը գտավ, որ ԼՂԻՄ-ի հայքական իդայի համապատասխանում է ԽՍՀ Սիոնի համապատասխանում:

* ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածում նշված է, որ միութենական հանրապետության տարածքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության: Միութենական հանրապետությունների միջև սահմանները կարող են փոփոխվել համապատասխան հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ, որը ենթակա է ԽՍՀ Միության հաստատմանը:

КОНСТИТУЦИЯ (Основной закон) СОЮЗА СОВЕТСКИХ СОЦИАЛИСТИЧЕСКИХ РЕСПУБЛИК [отрывок взят с сайта <http://www.hist-msu.ru/ER/Etext/cnst1977.htm>]

Принята на внеочередной седьмой сессии Верховного Совета СССР девятого созыва 7 октября 1977 г.

Статья 78. ТERRITORIЯ союзной республики не может быть изменена без ее согласия. Границы между союзными республиками могут изменяться по взаимному соглашению соответствующих республик, которое подлежит утверждению Союзом ССР.

րած հարցը չի կարող փակվել և պետք է քննարկվի ու լուծվի սահմանադրական կարգով, որը կհամապատասխանի ներկայում մեր երկրում իրականացվող վերակառուցման, դեմոկրատացման և հրապարակայնության ոգուն, ինչը և միահամուռ ու լիովին պաշտպանում է երևանի պետական համալսարանի բազմազարանոց կողեկտիվը:

Ժողովը հավատում է, որ առաջացած խնդիրները կլուծվեն լենինյան սկզբունքայնությամբ ու օրյեկտիվությամբ, և վստահեցնում է ՍՍՀԿ կենտկոմին, որ երևանի պետական համալսարանի բազմազարանոց կողեկտիվն այսուհետև ևս կպահպանի բարձր կարգապահություն և ուսումնադասատիարակչական ու գիտահետազոտական աշխատանքներում կհասնի նոր նվաճումների, կպայքարի վերակառուցման գաղափարների իրականացման համար:

«Երևանի համալսարան», 12 մարտի 1988 թ.

№ 2

ԴԻՄՈՒՄ ԱԴՐԵԶԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

[26 փետրվարի 1988 թ.]

Թանկագին ընկերներ:

Դիմում եմ ձեզ Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված իրադարձությունների կապակցությամբ:

Բարձրացվել է այդ ինքնավար մարզն Ադրբեջանական ՍՍՀ-ից Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ անցնելու հարցը: Դրան հաղորդվել է սրություն ու դրամատիկություն, որոնք հանգեցրել են լարվածության և անզամ օրենքի շրջանակներից դուրս եկող գործողությունների:

Անկեղծ ասեմ. ՍՄԿԿ կենտկոմն անհանգստացած է իրադարձությունների նման դարգացումից, այն Հղի է ամենալուրջ հետևանքներով:

Մենք կողմնակից չենք այն բանի, որ խուսափենք տարբեր գաղափարների ու առաջարկությունների բացահայտ քննարկումից, բայց դա հարկավոր է անել հանդիսատ, դեմոկրատական պրոցեսի և օրինականության շրջանակներում, թույլ չտալով, որ նվազագույն իսկ չափով վնասվի մեր ժողովուրդների ինտերնացիոնալիստական համախմբվածությունը: Զի կարելի ժողովրդի ճակատագրի անչափ լուրջ հարցերը ենթարկել տարերքի և հուզերի կամքին:

Նատ կարևոր են սեփական հոգսերը գնահատել ոչ միայն տեղական պայմանների առումով, այլև հաշվի առնելով երկրում ծավալված հեղափոխական նորացված պրոցեսները:

Այո, մեր կյանքում չուծված պրոբեմներ կան, բայց երկառակությունների և միմյանց նկատմամբ ժողովուրդների անվստահության բորբոքումը միայն նրանց կիսանգարի դրանց լուծմանը: Դա կհականեր մեր սոցիալիստական սկզբունքներին և մեր բարոյականությանը, սովետական մարդկանց բարեկամության ու եղբայրության ավանդույթներին:

Մենք ապրում ենք բազմազգ երկրում, ավելին, բոլոր հանրապետությունները, բոլոր մարզերը, անգամ քաղաքներն ու ավանները մեղանում բազմազգ են: Եվ լենինյան ազգային քաղաքականության իմաստն այն է, որ յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր ազգ կարողանա ազատորեն զարգանալ, որ յուրաքանչյուր ժողովուրդ կարողանա բավարարել իր պահանջմունքները հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ուրոտներում, մայրենի լեզվում ու մշակույթում, սովորույթներում ու հավատալիքներում:

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը մեր հսկայական ուժի աղբյուրն է: Ժողովուրդների իսկական եղբայրություն ու միասնություն՝ ահա սա է մեր ուղին:

Լավ է ասել հայ մեծ բանաստեղծ Ե. Զարենցը, դիմելով սովետական Աղբբեջանին.

Հանուն հնում կրած անհուն տառապանքի,
Հանուն այսօր կոփվող կյանքի լիահնչուն,
Հանուն անմահ մեր դաշինքի և հաշտ կյանքի,
Եղբայրական ժողովրդին ողջուն, ողջուն...

Եվ դրան որքան լավ են արձագանքում աղբբեջանական ժողովրդի մեծ զավակ Ս. Վուրդունի խոսքերը. «Մենք ապրում ենք ոչ թե հարեանությամբ, այլ մեկմեկու մեջ: Ժողովուրդները վաղեմի ժամանակներից օջախի կրակ և հանապազօրյա հաց են փոխ առել իրարից»:

Ոչ մի մայր չի համաձայնի, որ իր զավակներին ազգային գժտություններ սպառնան բարեկամության, հասարակության, փոխօգնության ամրակուռ կապերի՝ սոցիալիզմի հիրավի մեծ նվաճման փոխարեն:

Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում քիչ թերություններ ու դժվարություններ չեն կուտակվել: Մարզի նոր ղեկավարությունը պետք է շտապ միջոցներ ձեռնարկի վիճակը շտկելու համար: ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեն այս առումով հստակ հանձնարարականներ է տվել և անմիջականորեն կհետևի դրանց կատարմանը:

Այժմ ամենազիստակորն է՝ կենտրոնանալ ստեղծված իրավիճակի հաղթահարման, Աղբբեջանում և Հայաստանում կուտակված կոնկրետ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և այլ պրոբլեմների լուծման վրա մեր ամբողջ երկրում իրականացվող վերակառուցման ու նորացման քաղաքականության ոգով:

Հարկավոր է թանկ գնահատել և ըստ ամենայնի ամրապնդել աղբբեջանական ու Հայ ժողովուրդների բարեկամության ավանդույթները, որոնք ձեռք են բերվել սովետական իշխանության տարիներին: Միայն այսպիսի մոտեցումն է համապատասխանում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների իսկական շահերին:

Դուք գիտեք, որ մտադրություն կա մեր կուսակցության կենտրոնական կոմիտեի հատուկ պլենում նվիրել ազգային հարաբերությունների զարգացմանը: Քննարկվելու են այդ կարեորագույն հասարակական ոլորտի բազմաթիվ հարցեր և լենինյան ազգային քաղաքականության սկզբունքային նվա-

ձումների բազայի վրա նշվելու են սոցիալական, տնտեսական մշակութային և այլ պրոբլեմների կոնկրետ լուծման ուղիները:

Մենք բոլորս միասին սովետական քաղաքացիներ ենք, մենք ունենք ընդհանուր պատմություն, ընդհանուր հաղթանակներ, հետեւում ենք թողել մեծ աշխատանք, դառնություններ ու կորուստներ: Մենք դբաղված ենք վերակառուցման մեծ գործով, որի հաջողությունից է կախված սոցիալիզմի, մեր հայրենիքի, մեղանից յուրաքանչյուրի ճակատագիրը:

Ես դիմում եմ ձեզ, ընկերներ, ձեր գիտակցությանն ու պատասխանատվությանը, ձեր ողջամտությանը: Այս փորձության ժամին էլ պաշտպանենք մեր սովետական ինտերնացիոնալիզմը, այն բանի անսասան հավատը, որ միայն մեր բոլոր ժողովուրդների համերաշխ ընտանիքում մենք կարող ենք ապահովել մեր հասարակության առաջադիմությունը, նրա բոլոր քաղաքացիների բարօրությունը:

Ես ձեզ կոչ եմ անում հանդես բերել քաղաքացիական հասունություն ու համբերություն, վերադառնալ նորմալ կյանքի ու աշխատանքի, պահպանել հասարակական կարգը:

Ժամն է ողջախոհության ու սժափ վճիռների:

Մ. ԳՈՐԲԱՉՈՎ

«Սովետական Հայաստան», 27 փետրվարի 1988 թ.

№ 3

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻՆ (միտինգ երևանի պետական համալսարանում)

Փետրվարի 27-ին մեծ դահլիճում տեղի ունեցավ համալսարանի կողեկտիվի միտինգը՝ նվիրված ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Մ. Ս. Գորբաչովի դիմումին՝ ուղղված Աղրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին, ինչպես նաև Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1988 թ. փետրվարի 26-ի արտահերթ պլենումի որոշմանը:

Կուսկոմիտեի քարտուղար Գ. Սարգսյանը համալսարանի ուսանողությանն ու պրոֆեսորադասախոսական կազմին հանգամանորեն ծանոթացրեց ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի Աղրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին ուղղված դիմումին:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի արտահերթ պլենումի որոշման տեքստը հրապարակեց Համալսարանի ուսկոտը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանը:

Ելույթ ունեցան մեխանիկայի ֆակուլտետի դասախոս, դոց. Գ. Բաբաջանյանը, ՍՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ Ալ. Մկրտչյանը, ուսուաց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Լ. Մկրտչյանը, տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Սահակյանը, ՍՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ Հ. Հակոբյանը, ֆիզիկայի ֆակուլտետի գիտաշխատող Ս. Աղիզյանը. Հայ ժողովրդի պատմության ամբիոնի ասպիրանտ Ա. Պապյանը, ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Աղայանը և ուրիշներ: Նրանք իրենց ելույթներում միահամուռ հավանություն տվեցին ընկեր Մ. Ս. Գորբաչովի դիմումի բոլոր դրույթներին, չնորհակալություն հայտնեցին ու գոհունակություն արտահայտեցին ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարին դիմումի առթիվ, նշելով, որ համալսարանի բազմահազարանոց կողեկտիվը, ուսանող երիտասարդությունը խորին երախտագիտության զգացումով են ընկալում դիմումի պարու-

նակած գնահատականներն ու հետևողիցունները:

Ելույթ ունեցողները միաժամանակ նշեցին, որ ամեն ինչ կանեն երևանի պետական համալսարանում էլ ավելի ամուր հիմքերի վրա դնելու ուսանող երիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակությունը, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները կազմակերպեն առավել բարձր մակարդակով:

Միտինգի մասնակիցները միահամուռ հավանություն տալով ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Մ. Ս. Գորբաչովի դիմումին, ինչպես նաև Հայաստանի կոմկոմի Կենտկոմի փետրվարյան պլենումի որոշմանը, համոզմունք հայտնեցին, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Սովետական Հայաստանին միավորելու հարցը ՍՄԿԿ Կենտկոմի ազգային պրոդեմներին նվիրված պլենումում կդումի իր արդարացի լուծումը:

«Երևանի համալսարան», 5 մարտի 1988 թ.

№ 4

С УВЕДОМЛЕНИЕМ

ОБРАЩЕНИЕ ПРОФЕССОРСКО-ПРЕПОДАВАТЕЛЬСКОГО СОСТАВА ПЕДАГОГИЧЕСКОГО ИНСТИТУТА СТЕПАНАКЕРТА РЕКТОРАТУ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

26 мая 1988 г.

20 февраля с.г. сессия Нагорно-Карабахского областного Совета приняла постановление о воссоединении Нагорного Карабаха с Арменией с просьбой к Верховному Совету Армянской ССР принять соответствующее постановление. Однако до настоящего времени сохраняется абсолютное молчание со стороны Верховного Совета Арм. ССР. Положение армян в Нагорном Карабахе и в других регионах Азербайджана крайне тяжелое и продолжает ухудшаться с каждым

днем. В Баку, Кировабаде, Сумгаите, Мингечауре, Физули, Шамхоре и других районах продолжается избиение и насилиственное выселение армян из своих очагов. Степанакерт стал городом приюта беженцев. Положение Степанакерта наверное нельзя сравнять ни с одним городом мира. Более того, практически вся область находится в блокадном положении. 14-15 мая избиение, погромы квартир, насилиственное изгнание армянских семей, вплоть до новорожденных детей начались в Шуше. Армянское население Шуши поголовно изгнано и находится в Степанакерте и в близлежащих селах. Вместе с тем отметим, что инцидент в Арагатском районе Армении стал предметом широкого и гласного обсуждения со стороны ЦК Компартии Азербайджана, Верховного Совета республики, прокуратуры, Союза писателей Азербайджана, используя средства печати и телевидения. Спрашивается, почему один инцидент в Армении стал предметом широкого обсуждения в верхах Азербайджана, а руководство Армении упорно молчит. Видимо, ждете полного геноцида армян в Азербайджане, чтобы воздвигнуть новый памятник в Цицернакаберде.

Наличие 35 подписей заверяет старший телеграфист Минасян

ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 34, գ. 81, թ. 1:
Պատճեն: Մեքենագիր:

№ 5

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

Հունիսի 1-ին ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ, Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողների առաջարկով տեղի ունեցավ Հանդիպում ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ առաջին քարտուղար Հ. Հակոբյանի հետ:

Հանդիպման ժամանակ անկեղծ խոսակցություն ծավալվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հերթական նստաշրջանում Լեռնային Ղարաբաղի խնդիրը քննարկելու, մամուլում և հեռուստատեսությամբ Համապատասխան ինֆորմացիա տալու շուրջ: Խոսվեց նաև Լեռնային Ղարաբաղ ուսանողական շինարարական ջոկատ ուղարկելու, զարաքաղցի պիոներ-դպրոցականների հանգիստը հանրապետության պիոներական ճամբարներում կազմակերպելու, Հայաստանում գտնվող սումգայիթի երեխաներին օգնություն ցույց տալու և մի շարք այլ հարցերի մասին:

Հանդիպմանը ներկա էին ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ա. Մելքոնյանը, Հայկական ՍՍՀ ժողովրդական կրթության մինիստր Ա. Հախումյանը:

(Արմենպետ)

«Երևանի Համալսարան», 15 Հոկտեմբերի 1988 թ.

№ 14

**ПИСЬМО ТОВАРИЩА Г. ПРОКОПЕНКО
РЕКТОРУ ЕГУ С. А. АМБАРЦУМЯНУ**

25 сентября 1988 г.,
Днепропетровск

Многоуважаемый товарищ Амбарцумян С. А.!

Посылаю Вам копию моей статьи „Здравому смыслу и совести вопреки“, которую я предложил газете „Правда“, и недавно полученный из „Правды“ ответ.

Сообщаю, что я остался верен своим взглядам на ситуацию в Армении и НКАО, а после последних событий в Степанакерте и Ереване только утвердился в них.

Боритесь-поборете

Вам Бог помогает!

За вас правда, за вас слава

И воля святая!

(Т. Г. Шевченко)

Широ (искренне) Ваш Прокопенко

ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 34, գ. 86, թ. 2:

Բնագիր: Զեռագիր:

**ЗДРАВОМУ СМЫСЛУ И СОВЕСТИ ВОПРЕКИ
ПРИЛАГАЕМАЯ СТАТЬЯ]**

25 июля 1988 г.,
Днепропетровск

Заседание Президиума Верховного Совета СССР, состоявшееся в Кремле 18 июля 1988 г., и принятное им постановление о Нагорном Карабахе вряд ли могут согласоваться со здравым смыслом и совестью непредвзято мыслящего чело-

века. Я внимательно смотрел и слушал телеотчет об этом событии, а на второй день несколько раз изучающе прочел материалы об этом в газетах, и все время, как ни старался настроить себя на принятие официальной точки зрения на ситуацию в НКАО, во мне росло убеждение, что и само заседание Президиума ВС, и принятое постановление далеки от справедливости, носят половинчатый, лицемерный, демагогически-бюрократический характер.

Выступившие на заседании армянские товарищи убедительно и безоговорочно доказали, что разумной альтернативы воссоединению Нагорного Карабаха с Арменией нет и не может быть. Можно, конечно, слепо следя известной статье Конституции, продолжать принудительно удерживать Нагорный Карабах в составе Азербайджана, но это только бы загоняло внутрь и усиливало застарелую национальную несправедливость. Пять месяцев доведенные до отчаяния армяне добиваются решения простого и ясного вопроса. Страсти накалились до предела, начались каждодневные митинги, забастовки, голодовки... И спровоцировало это напряжение одно, а именно: нежелание высшего органа власти страны пойти навстречу справедливой и обоснованной просьбе населения НКАО. Власти надеялись, что все обраузется, останется по-старому, возвратится на круги своя. Ах нет! Добрый, умный, человечный армянский народ не позволил обращаться с собой как со скотиной: замычал, подбросили комбикорма — и нет проблем! Упрекают армян в националистическом угare. Какая гнусная ложь! Армяне — прирожденные гуманисты и интернационалисты. Но они, как зеницу ока, берегут свое национальное достоинство. Так и должно быть, если это народ, нация, а не аморфная человеческая биомасса. Говорят, что надо по-настоящему посоветоваться с армянским народом-чего он хочет? Так почему же еще в марте вместо „пряничных“ постановлений не провели всенародный референдум в НКАО? Стало бы ясно всем

и каждому, чего хочет население Нагорного Карабаха. А перед народным волеизъявлением не устоит никакая статья сталинско-брежневской конституции. Так нет же: тянули, тянули — и дотянули... до изготовления самопалов. Где же здесь государственная мудрость?

Несколько замечаний по ходу заседания. Этика его ведения была явно не на высоте. Выступающих прерывали, сбивали с толку, мешали им высказать свое мнение. Причем это делал не председательствующий на заседании Громыко, а генсек Горбачев /у которого это вообще вошло в привычку, не украшающую его/. Так он пытался субъективно толковать истинный смысл выступления ректора Ереванского государственного университета С. А. Амбарцумяна, но академик тактично и твердо отстоял свое право сказать правду о напряженном положении в Армении и НКАО. А вот выступление депутата Верховного Совета СССР писателя В. А. Петросяна М.С. Горбачев остановил и смял. Ухватился за высказывание Петросяна о попытке геноцида в Сумгаите. Мол, это было не проявление геноцида, а всего лишь стихийная выходка бандитов. Словарь иностранных слов трактует „геноцид“ как „уничтожение отдельных групп населения по расовым, национальным или религиозным мотивам“. В Сумгаите людей убивали только за то, что они армяне. И это не геноцид? А заранее спланированный он или стихийный — какая разница для его жертв? И вообще на заседании со стороны Горбачева сквозило некое недовольство армянами. А их, перенесших тягчайшие испытания в прошлом и до сегодня не избавившихся от национальной несправедливости, следовало бы поддерживать.

На заседании выступил Щербицкий В. В. Бесцветное, старорежимное выступление, весь смысл которого сводился к тому, что „далше такое положение терпеть нельзя“ и что надо „употребить власть“. Понятно: Щербицкий жаждет репрессий. Ах страшно! И все же осмеливаемся спросить его:

а „такое положение”, как сейчас на Украине, терпеть можно, когда украинский народ как нация агонизирует, потому что лишен родного языка? Родной язык—душа народа. Гибнет язык-гибнет народ. Это аксиома. Для Украины Щербецкий — автор экологического и духовного Чернобыля. Этого верного соратника аморальнейшего Брежнева давно пора отправить на „заслуженный” отдых. Впрочем, как и товарища Громыко, который на заседании явно пытался стать инициатором „культа” Горбачева.

Нагорный Карабах необходимо воссоединить с Арменией. Чем раньше, тем лучше. Победит справедливость — и люди возвратятся к созидательному труду, благородумию, взаимопониманию. Если же все останется по-старому — рана не заживет никогда.

Гавриил Никифорович ПРОКОПЕНКО
член КПСС. Пенсионер.

ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 34, գ. 86, թ. 3-5:
Պատճեն: Մեքենագիր:

№ 15

ՎԵՐՋ ՏԱԼ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆՆԵՐԻՆ

(բողոքի միտինգ Երևանի պետական համալսարանում)

Նոյեմբերի 18-ին համալսարանի կենտրոնական մասնաշենքի հարապարակում տեղի ունեցավ ուսանողության, պրոֆեսուրապասախոսական կազմի և աշխատողների բազմահազարանոց բողոքի միտինգ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի և նրա շուրջը բորբոքված վերջին շրջանի իրադարձություններին:

Միտինգը բացելով՝ կուսակցական կոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը նշեց, որ Լեռնային Ղարաբաղում շարունակվում է վիճակը մնալ նույնը: Դեռևս այն չի կայունացել ու կարգավորվել: Երեկ Հայաստանից ուղարկված շինանյութերով ու այլ անհրաժեշտ պարագաներով բեռնավորված երկու ավտոշարայուններ չեն հասել Լեռնային Ղարաբաղ: Նրանցից մեկը կանգնեցվել է իջևանի շրջանում, իսկ մյուսը՝ Գորիսի մոտերքում և ստեղծվել է արտակարգ կացություն: Այդ իրադրությունը շտկելու նպատակով Գորիս է մեկնել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը, իսկ իջևանի շրջան՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Վ. Արծրունին: Նրանք այժմ տեղերում համապատասխան բանակցություններ են վարում և կազմակերպական միջոցառումներ ձեռնարկում հիշյալ ավտոշարայունների անվտանգ երթնապահության գործադրությունների վեջությանը:

Իր բացման խոսքում Յու. Մկրտումյանը նշեց նաև, որ համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվին անհանգստացնում է այն կարևոր հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը մինչև այսօր խեղաթյուրված ու սխալ է լուսաբանվում և մեկնաբանվում միտութենական կենտրոնական մամուլում: Պետք է վերջ տալ մամուլի այդ հակասական, ժողովուրդների բարեկամությունը խարիսող, սաղրիչ երւոյթներին:

Մյուս հարցը, որ հուզում է համալսարանի կոլեկտիվին, նշեց նա, Սումգայիթի ոճագործությունն է: Այդ կազմակերպված, մտածված ոճիրը դեռևս չի արժանացել համաժողովրդական դատապարտման: Սումգայիթյան ոճագործությունը, որը իսկական ցեղասպանություն էր՝ իրականացված տեղի հայ բնակչության նկատմամբ, դեռևս չի ստացել իր իսկական քաղաքական գնահատականը:

Սխալ է վարվում նաև այդ մեծ ոճիրի դատավարությունը: Սումգայիթյան ոճագործությունները կազմում են մեկ միասնական քրեական գործ, չնախատեսված ծանր հանցագործություն, ցեղասպանություն՝ կազմակերպված ընդդեմ հայ ժողովրդի: Մենք բողոքում ենք այն բանի դեմ, որ այդ մեծ ոճագործությունները դիտվում են որպես խուլիզանություն: Մենք

պահանջում ենք, որ այդ հանցագործությունների վերաբերյալ գործերը միավորվեն ու դիտվեն իրեն մեկ միասնական քրեական գործ և ներկայացվեն ՍՍՀՄ Գերազույն դատարանի քննադատությանը: Այնինչ, դրանք կատարվում են ՌՍՖՌ տարբեր ժողովրդական դատարաններում: Մենք բողոքում ենք դրա դեմ և պահանջում, որ դադարեցվեն այդ դատավարությունները, և սումգայիթյան ոճագործություններն ստանան իրենց իսկական գնահատականը՝ ցեղասպանություն, և ՍՍՀՄ օրենքի ամբողջ խստությամբ իրենց արժանի պատիժն ստանան նրա կազմակերպիչներն ու կատարողները:

Այսօր Երևանի պետական համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվը, ողջ ուսանողությունը, պրոֆեսորադասախոսական կազմը վրդովված են այս ամենի համար և իրենց արդարացի բողոքի ձայնն են բարձրացնում ընդդեմ անարդարությունների:

Այնուհետև միտինգում ելույթներ ունեցան ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Գ. Ղարիբյանը, սովետահայ գրականության ամբիոնի դոցենտ Կ. Աղաբեկյանը, բանասիրական ֆակուլտետի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Հ. Հովակիմյանը, գիտական գրադարանի մեթոդիստ Ա. Ալեքյանը, իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Ս. Կարապետյանը, ուսումնական ամբիոնի գիտակայի ֆակուլտետի ուսանողներ Ա. Դաղասյանը, Լ. Բաղդասարյանը, բանասիրական ֆակուլտետի ուսանող Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նրանք դատապարտեցին Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզում ստեղծված բարդ իրավիճակն ստեղծողների գործունեությունը, որը չի բխում ժողովուրդների բարեկամության լենինյան սկզբունքներից:

Ելույթ ունեցողները նաև կոչ արեցին համախմբվել և միասնական ուժերով պայքարել հանուն արդարության վերականգնման: Նրանք ընդդեցին, որ դժբախտաբար, կենտրոնական մամուլի մեղքով, սովետական հասարակայնության շրջանում ստեղծվել է թյուր կարծիք ինչպես արցախյան շարժման էռության, այնպես էլ սումգայիթյան ցեղասպանության նկատմամբ: Մխար, հակասական կարծիքներ են ստեղծվում նաև

Խորհրդային Հայաստանում այսօր տեղի ունեցող իրադարձությունների շուրջը: Այդ ամենը, որ ստեղծել ու ստեղծում են կենտրոնական մամուլը, հեռուստատեսությունը, խարիսլում են ժողովուրդների բարեկամությունը, մթագնում հայ ժողովրդի արդարացի բողոքն ու պահանջը, նշեցին բոլոր ելույթ ունեցողները: Նրանք միաժամանակ կոչ արեցին ուսանողներին, բոլոր համալսարանականներին, ամենուր պահանել կարգապահություն, հանգստություն, զսպվածություն, վերսկսել ընդհատված դասերը, չենթարկվել ոչ մի պրովոկացիայի:

Միտինգի մասնակիցների անունից միաձայն ընդունվեց դիմում՝ ուղղված ՍՄԿԿ կենտկոմին և ՍՍՀՄ Գերազույն սովետի նախագահությանը:

«Երևանի համալսարան», 19 նոյեմբերի 1988 թ.

№ 16

ԴԻՄՈՒՄ ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ, ՍՍՀՄ ԳԵՐԱԶՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԱՌՈՒԹՅԱՆԸ

Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի կոլեկտիվը, իր ս.թ. նոյեմբերի 18-ին կայցած միտինգում քննարկելով Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզում և նրա շուրջը ստեղծված իրադրությունը, ընդունել է հետևյալ գիմումը՝ ուղղված ՍՄԿԿ կենտկոմին և ՍՍՀՄ Գերազույն սովետի նախագահությանը.

1. Ինը ամիսների ընթացքում դրությունը ԼՂԻՄ-ում ոչ միայն չի կարգավորվում, այլև շարունակում է սրվել և բարդանալ: Դա չի կարող չհուզել ոչ միայն հայ ժողովրդին, այլև ամբողջ սովետական հասարակությանը, հատկապես կուսակցական և պետական մարմիններին:

2. Մենք պահանջում ենք ԼՂԻՄ-ում և Աղբեջանական ՍՍՀ-ի բոլոր հայաբնակ վայրերում հայ ազգաբնակչության կենսագործունեության համար ստեղծել նորմալ պայմաններ,

անհապաղ վերջ տալ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ աղրբեցանցիների կողմից գործադրվող բռնություններին: ԼՂԻՄ-ի ընակչությանն այսօր աղրբեցանականացնելու ձգտումը Աղրբեցանական ՍՍՀ-ի ղեկավարող շրջանների հակահայկական քաղաքականության շարունակությունն է:

3. Մենք պահանջում ենք ԼՂԻՄ-ի պրորեմների արդարացի քաղաքական լուծում:

4. Մենք պահանջում ենք սոցիալիստական օրենքի ողջ խստությամբ պատմել Սումգայիթում հայերի ցեղասպանության ակտի կազմակերպիչներին և մասնակիցներին, որը 20-րդ դարավերջի բարբարոսության և վանդալիզմի խորհրդանիշ դարձավ: Մենք պահանջում ենք բոլոր դատական պրոցեսների արագացում և միասնացում, սումգայիթյան ոճարագործությունների՝ որպես մեկ և կազմակերպված քրեական գործի քննարկում:

5. Մենք պահանջում ենք Աղրբեցանական ՍՍՀ տարածքում վերացնել այն բոլոր խոչընդոտները, որոնք արգելակում են Հայկական ՍՍՀ-ի և ԼՂԻՄ-ի միջև իրականացվող բազմակողմանի կազմերին, որոնք ծրագրված են ՍՄԿԿ կենտկոմի և ՍՍՀՄ մինիստրների խորհրդի որոշումներով:

Պահանջում ենք Հայկական ՍՍՀ-ից ԼՂԻՄ մարդկանց և բեռների տեղափոխումը ապահովել այն դիմումների կողմից, որոնք ժամանակավոր մտցված են Հայկական ՍՍՀ-ի տարածք:

6. Մենք պահանջում ենք ՍՍՀՄ Գերագույն սովետի առաջիկա նստաշրջանում քննարկել հայ ազգարնակչության նկատմամբ իրագործված սումգայիթյան ոճարագործությունները և դրանք որակել հայերի ցեղասպանություն:

7. Խնդրում ենք մոտակա ժամանակաշրջանում Երևանի պետական համալսարանի կոլեկտիվին հաղորդել ձեռնարկվող միջոցների մասին, որոնք հատուկ կհրապարակվեն հերթական միտինգում:

«Երևանի համալսարան», 19 նոյեմբերի 1988 թ.

№ 17

**ОТКРЫТОЕ ПИСЬМО В ЦК КПСС И ЦК КП
АРМЕНИИ ОТ СОБРАНИЯ ПАРТИЙНОГО КОМИТЕТА
ФАКУЛЬТЕТА МАТЕМАТИКИ ЕГУ**

23 декабря 1988 г.

Страшная беда обрушилась на армянскую землю. Небывалое по силе землетрясение унесло десятки тысяч человеческих жизней, причинило огромный материальный ущерб катастрофическими разрушениями. Более полумиллиона людей остались без кровя.

Излечивание тяжелых ран, нанесенных республике стихийным бедствием, потребует от нас максимального напряжения духовных и физических сил. Никто не может оставаться равнодушным к судьбе сограждан, пострадавших от землетрясения. Не меньшее сострадание вызывает положение многих тысяч беженцев из Азербайджанской ССР, которые непосредственно до и после землетрясения, оставив все имущество, вынуждены были переселиться в Армению и до сих пор не нашли постоянного крова.

Для нас в этой ситуации неоценимы моральная поддержка и бескорыстная помощь, оказываемая Армении в ликвидации последствий землетрясения. Вместе с тем, казалось, можно было проявить немного такта и хотя бы на время прервать беспримерную десятимесячную антиармянскую кампанию по поводу вопроса НКАО. Однако средства массовой информации волной небывалых инсинуаций, лжи и клеветы в адрес карабахского движения с новой силой обрушились на и без того находящийся в глубоком шоке народ. Предвидя в этом подготовку почвы для организации массовых репрессий против активистов движения, считаем своим долгом выразить решительное несогласие с подобной политикой.

Мы не можем согласиться с обвинениями, предъявляемыми членам комитета „Карабах”.

Неправда, что „комитетчики” после землетрясения призывали к митингам и забастовкам. С первых минут они занялись организацией спасательных работ и старались координировать действия с правительственной комиссией. Но, к сожалению, с 10-го декабря начались аресты членов комитета и активистов движения, а газеты продолжают вещать о „противоправных” действиях, производимых от их имени.

Неправда, что комитет „Карабах” распространял слухи для дестабилизации обстановки. Большинство преподносимых слухов, как например, об отправке детей-сирот в Сибирь, ереванцы услышали впервые по ЦТ или прочли на страницах газет, поражаясь их чудовищной нелепости. Впервые мы столкнулись с таким явлением, как фальсификация слухов.

Члены комитета обвиняются также в стремлении к власти. К сожалению, не уточняется, в чем оно проявилось. Не думаем, что желание организовать помочь беженцам или пострадавшим от землетрясения можно считать стремлением к власти. Скорее всего кое-кому не понравилось, что по существу впервые за нашу историю депутатов не назначили, а выбрал народ, что впервые сессия Верховного Совета Арм. ССР не проголосовала за готовые резолюции, а приняла решения, созвучные с наказами избирателей. Но, оказалось, что требования избирателей квалифицируются как „давление на депутатов”, но в то же времяспешное введение в Ереване именно во время работы сессии ничем другим не обоснованного комендантского часа-таковым не является.

Считаем, что лишено всякого основания обвинение в связях комитета с коррумпированными элементами, дельцами „теневой экономики”, „цеховиками”, ворюгами и т. п. Где же сейчас эти дельцы? Почему их не арестовали вместе с членами комитета? Или может правоохранительным органам неизвестны их имена? Но ведь именно члены комитета

„Карабах” в своих выступлениях открыто, невзирая на имена, изобличали карьеристов и взяточников, которые, „перестраиваясь” с одной высокой должности на другую, теперь громче всех кричат „держите вора”.

Многих членов комитета и активистов движения мы знаем еще со студенческих лет и абсолютно не сомневаемся в их честности и порядочности. Но не только мы, думаем даже те, кто выдвигает подобное обвинение, в него не верят. Просто нужно было в глазах общественности дискредитировать активистов движения. Что ж, методы знакомы. (Вспомним хотя бы травлю академика А. Д. Сахарова. Неужели перестройка пошла по замкнутому кругу?!).

Неправда, что члены комитета „Карабах” разжигали межнациональную вражду. Конечно, весьма удобно, не признавая собственных ошибок, всю вину за тяжелые последствия провалов и просчетов в политике урегулирования межнациональных отношений свалить на „кучку безответственных экстремистов”. Но вина ли комитета „Карабах”, что Азербайджан ответил сумгaitской резней на справедливое, конституционное требование населения НКАО о воссоединении с исторической родиной? Вина ли комитета, что процесс над участниками сумгайтских злодействий был превращен в судебный фарс, где упорно пытались не дать докопаться до истинных организаторов и вдохновителей, представить геноцид как отдельные „убийства из хулиганских побуждений”. После такого отношения в Армении никого не удивляет то, что в Баку организуются сбороища с портретами убийц как национальных героев и с лозунгами „смерть армянам”, да еще вдобавок транслируют по телевидению. Или вспомним массовое отравление в Масисе, события в Ходжалы... Всего не перечислить.

Кто же разжигает межнациональную вражду, если на протяжении десяти месяцев средствами массовой информации дается преднамеренно искаженное и тенденциозное освещение событий, причем наиболее подстрекательские

статьи в центральной прессе появляются именно тогда, когда достигается относительное спокойствие в регионе? И до сих пор никто конкретно за это не ответил.

Если же во всем этом вина комитета, то почему их не арестовали раньше, до землетрясения? Может понимали, что именно комитет „Карабах“ по возможности сдерживает народ от ответных действий на происходящее в Азербайджане.

Беспрецедентная ложь, что якобы некоторые лидеры комитета „Карабах“ пытаются на народной беде нажить политический капитал. Если внимательно прислушаться к тому, что вешают средства массовой информации, то можно понять, кто именно желает нажить политический капитал. Не те ли из руководства республики, кто все эти десять месяцев трусливо отсиживались в своих кабинетах? Не те ли, кто сразу же после землетрясения упорно рекламирует „братьскую“ помощь Азербайджана, в то время как до сих пор не прекращается поток беженцев из Азербайджанской ССР, в которой на беду соседа откликнулись новыми погромами и бесчинствами, праздничными фейерверками и „поздравительными“ телеграммами.

Часто говорят, что в застойные годы истинное международное воспитание заменялось лозунгами о дружбе народов. Теперь вроде настал удобный случай для „международного воспитания“ армянского народа (хотя лозунгов не поубавилось). Но и без этого благодарный армянский народ всегда хранил в своей памяти имена тех, кто протягивал ему руку помощи в трудную минуту. Мы не забудем о той всесторонней помощи, которую оказывают нам грузинские друзья буквально с первых же часов после землетрясения. Мы не забудем имена советских воинов и югославских летчиков, спешивших нам на помощь и отдавших жизни, имена врачей и спасателей из нашей страны и многих зарубежных стран, которые неустанно борются за жизни пострадавших. Мы благодарны всем тем, которые откликнулись на нашу беду и от чистого сердца поддержали нас в этот трудный час.

Считаем своим долгом еще раз подчеркнуть, что комитет „Карабах“ является стихийно возникшим руководством общенационального карабахского движения, имеющего целью демократическими, мирными средствами исправить допущенную на заре становления Советского государства историческую несправедливость, политическую ошибку-воссоединить аннексированные армянские земли с матерью-родиной, и как таковой, выражает волю всего армянского народа. Квалифицируя арест членов комитета „Карабах“ как акт произвола военных властей, требуем немедленного их освобождения и прекращения травли.

В сознании многих землетрясение, опустошившее северные районы Армении, заслонило карабахский вопрос. Однако мы, сознавая, что неурегулированная политическая проблема может иметь непредсказуемые по масштабам отрицательные последствия, и заранее отвергая всякие лживые инсинуации, заявляем о необходимости скорейшего, после окончания спасательных работ, справедливого решения проблемы НКАО.

Принято на партийном собрании факультета математики ЕГУ.

Председатель собрания Н. Г. Галстян

Подпись Н. Г. Галстяна заверяю

*Зам. декана факультета математики Л. А. Матевосян**

ԵՊՀ պատմության թանգարանի արխիվ, ֆ. 34, գ. 87, թ. 1-4:

Պատճեն: Մեքենագիր:

* Фակուլտետի տակ դրված են Ն. Գ. Գալստյանի և Լ. Ա. Մաթևոսյանի ստորագրությունները՝ հաստատված մաթեմատիկայի ֆակուլտետի կողմուն:

1989

№ 18

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԿՈՒՍԿՈՄԻՏԵՒԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԹԵԶԻՍՆԵՐ***

....2. Հանրապետությունը գտնվում է ծանր վիճակում: Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության կոնֆերանսից (1988 թ. նոյեմբերի 15-18) հետո ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցան խոչոր սոցիալական և քաղաքական իրադարձություններ, անասելի ուժի ընական աղետ:

Սկսվեց Աղրբեջանական ՍՍՀ-ից հայ բնակչության մասսայական բռնագաղթը, մեր հանրապետությունում տեղի ունեցան ընդհարումներ ազգամիջյան հարաբերությունների ոլորտում, Հայկական ՍՍՀ-ում ապրող աղրբեջանական բնակչության զգալի մասն արտազաղթեց Աղրբեջանական ՍՍՀ, Երևան քաղաքում և մի շարք շրջաններում մտցվեցին պարետային ժամ և հատուկ իրադրություն, բնության արհավիրքը կյանքից զրկեց տասնյակ հազարավոր մեր հայրենակիցներին, տասնյակ հազարավոր մարդկանց հաշմանդամ դարձեց, ավելի քան կես միլիոնի անօթևան թողեց, ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, տարբեր բնույթի խախտումների համար պարբերաբար վարչական կայանքի են ենթարկվում մեր համաքաղաքացիները, սումգայիթյան եղեռնագործության կազմակերպիչների ու մասնակիցների մեծ մասը սոցիալիստական օրինա-

* Բերված է միայն Արցախին վերաբերող հատվածը:

կանության ամենայն խստությամբ դեռևս չի պատժվել:

Այս ամենը, անկասկած, չէր կարող չանդրադառնալ համալսարանի կոլեկտիվի կուսակցական և հասարակական կազմակերպությունների գործունեության վրա: Ուստի, կուսակցական ընդհանուր ժողովում պետք է վերլուծվեն այն բոլոր գործոնները, որոնք այսօր մտահոգում են մեր ժողովրդին, բացասաբար անդրադառնում ուսումնական պրոցեսի ոիթմիկ ընթացքի վրա, զգալիորեն կազմալուծում համալսարանական կյանքը: Պետք է մշակվեն առաջարկություններ, որոնք կարագացնեն պրորեմների լուծումը, նպատակառողջված կլինեն գաղափարական-քաղաքական աշխատանքների կատարելագործմանը, կառող-ջացնեն միջնորդությունում:

«Երևանի համալսարան», 8 ապրիլի 1989 թ.

№ 19

ԽՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՄՔ

(միտինգ Երևանի պետական համալսարանում)

Հանրապետության հասարակայնությունն արդեն քանիցս ալեկոծվում է «Գարուն» կարի արտադրական միավորման Մասսահի Փարբիկայում, Երևանի տրիկոտաժաձեռնոցային արտադրական միավորման գլխադաս Փարբիկայում և Եղեգնաձորի բաժանմունքում, «Անուշ» տրիկոտաժի արտադրական միավորման Երևանի գլխադաս և Աշտարակի Փարբիկաներում աշխատավորուհիների տեղի ունեցած զանգվածային թունավորման դեպքերի առթիվ: Հրապարակայնության լիակատար բացակայությունն ու հանրապետության լրատվական միջոցների շարունակվող լուսաբանումը միայն պարարտ հող են ստեղծում զանազան ասելուների տարածման համար: Հասարակայնության արդարացի վրդովմունքն իր գագաթնակետին հասավ, երբ

«Անուշ» արտադրական միավորման գլխադաս Փաբրիկայում մարտի 25-ին թունավորված բանվորներից Աղավնի Աղասու Մաթևոսյանը ապրիլի 25-ին մահացավ թունավորման հետևանքով առաջացած արտային անրավարարությունից:

Արտահայտելով իրենց համերաշխությունը, իր բողոքի ձայնը բարձրացրած «Անուշ» տրիկոտաժի արտադրական միավորման աշխատավորությանը, համալսարանի կոլեկտիվի ներկայացուցիչները ապրիլի 27-ին համալսարանի մեծ դահլիճում կազմակերպեցին միտինգ: Միտինգին հրավիրվել էին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Լ. Գ. Սահակյանը, հանրապետության դատախազի առաջին տեղակալ Վ. Ս. Օրեխովը, Առողջապահության մինիստրի տեղակալներ Գ. Մ. Հարությունյանը և Ու. Ղ. Պողոսյանը, սանէպիդ վարչության պետ Ա. Խ. Մայրապետյանը և այլ պաշտոնատար անձինք: Հրավիրված ընկերներին տրվեցին բազմաթիվ հարցեր, կայացավ կրքուտ, բայց մտահոգ երկխոսություն, որի ժամանակ համալսարանականները իրենց դժուգությունն արտահայտեցին առողջապահության և իրավապահպան մարմինների՝ թունավորումների հետաքննության հարցում ցուցաբերած աններելի դանդաղության, լրատվական միջոցների կողմից կառավարական հանձնաժողովի գործունեության լուսաբանման բացակայության, իրավապահպան մարմինների որոշ դեպքերում անհարկի փութաջանության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դատապարտելի անվճառականության համար:

Քանի որ թունավորման բոլոր դեպքերն արդյունք են Աղբեջանական ԽՍՀ-ից ներմուծված հումքի օգտագործման, վճռական պահանջ առաջադրվեց ներմուծվող հումքի նկատմամբ խստագույն վերահսկողություն սահմանելու հարցում, իսկ առանձին դեպքերում հրաժարվել որոշ տնտեսական կապերից: Մտավախություն հայտնվեց, որ չի բացառվում նմանօրինակ դեպքերի հնարավորությունը Լեռնային Ղարաբաղում, ուստի անհրաժեշտ համարվեց ԼՂԻՄ-ի տնտեսական զարգացման քաղաքականությունը կենսագործելիս նրա կապերը կողմնորոշել դեպի Հայկական ԽՍՀ և այլ հանրապետություններ:

Միտինգի մասնակիցները լիակատար համերաշխություն

հայտնեցին «Անուշ» տրիկոտաժի արտադրական միավորման երևանի գլխադաս Փաբրիկայի աշխատակիցների առաջ քաշած բոլոր պահանջներին: Քննարկված հարցերի վերաբերյալ համալսարանի կոլեկտիվի ներկայացուցիչները ընդունեցին որոշում:

«Երևանի համալսարան», 6 մայիսի 1989 թ.

№ 20

ՈՐՈՇՈՒՄ

[ԵՊՀ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՄԻՏԻՆԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ]

[27 ապրիլի 1989 թ.,
Երևան]

Համալսարանի կոլեկտիվի ներկայացուցիչների միտինգը իր վրովմունքն է հայտնում հանրապետության մի շարք արտադրական ձեռնարկություններում տեղի ունեցած աշխատավորուհիների զանգվածային թունավորման հետաքննության աններելի դանդաղության, լրատվական միջոցների կողմից կառավարական հանձնաժողովի գործունեության լուսաբանման բացակայության, իրավապահպան մարմինների որոշ դեպքերում անհարկի փութաջանության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դատապարտելի անվճառականության համար:

1. Համալսարանի կոլեկտիվի ներկայացուցիչների միտինգը իր լիակատար համերաշխությունն է հայտնում «Անուշ» տրիկոտաժի արտադրական միավորման կոլեկտիվի առաջադրած պահանջներին:

2. Միտինգը գտնում է, որ զանգվածային թունավորումների կապակցությամբ ստեղծված կառավարական հանձնաժողովի գործունեության մեջ բացակայում է անհրաժեշտ հրապարակայնությունը, ուստի միտինգի մասնակիցները պահանջում են ապահովել հանրապետության լրատվական միջոցների կողմից հանձնաժողովի աշխատանքի համակողմանի լուսաբանումը և ցայսօր կատարված հետաքննության արդյունքները հրապարակել շուտափույթ:

3. Միտինգը հանձնարարում է համալսարանի արհկոմիտեին և ԼԿԵՄ կոմիտեին՝ համալսարանականներից ստեղծել հասարակական հանձնաժողով և միջնորդում է ՀԿԿ կենտկոմին և կառավարությանը ապահովելու նրա գործուն մասնակցությունը կառավարական հանձնաժողովի հետաքննությանը:

4. Քանի որ թունավորման բոլոր դեպքերը արդյունք են Աղբբեջանական ԽՍՀ-ից ներմուծված հումքի օգտագործման, վճռականորեն պահանջել հանրապետության համապատասխան մարմիններից սահմանելու ներմուծվող հումքի նկատմամբ խստագույն վերահսկողություն, իսկ առանձին դեպքերում հրաժարվել որոշ տնտեսական կապերից: Գրացառելով նմանօրինակ դեպքերի հնարավորությունը նաև Լեռնային Ղարաբաղում, անհրաժեշտ համարել ԼՂԻՄ-ի տնտեսական զարգացման քաղաքականությունը կենսագործելիս նրա կապերը կողմնորոշել դեպի Հայկական ԽՍՀ և այլ հանրապետություններ:

5. Միջնորդել ՀԿԿ կենտկոմին և Հայկական ԽՍՀ կառավարությանը՝ ապահովելու «Անուշ» տրիկոտաժի արտադրական միավորման գործադուլային կոմիտեի անդամների անձեռնմխելիությունը:

6. Պահանջել, որպեսզի հանրապետության դեկավարությունը և իրավապահպան մարմինները պարբերաբար հանդես գան մամուլում, հեռուստատեսությամբ, ուղղիով և մանրամասն ինֆորմացիա տան աշխատավորությանը հուզող խնդիրների մասին:

7. Սույն որոշումը հրատարակել «Երևանի համալսարան» թերթում:

«Երևանի համալսարան», 6 մայիսի 1989 թ.

№ 21

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՊՈՒՏԱՏԻ ՀԵՏ

Մայիսի 12-ին բանասիրական ֆակուլտետի 220 լսարանում տեղի ունեցավ համալսարանի տարրեր ֆակուլտետների ուսանողների հանդիպումը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Աղայանի հետ: Ուսանողները դեպուտատին պատվիրան տվեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահություն ներկայացնել անհապաղ նստաշրջան Հրավիրելու մասին պահանջ՝ առաջարկելով նստաշրջանի հետևյալ օրակարգը՝

- ա. Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի ինքնորոշման խնդիրը,
- բ. «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամների ազատ արձակման հետ կապված հարցերը,
- գ. Աղետյալ վայրերի վերականգնման և կառուցման վիճակը և ընթացքը:

Հանդիպումից անմիջապես հետո դեպուտատ էդ. Աղայանը կազմեց պատվիրանին համապատասխան միջնորդագիր և այն հանձնեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի:

Դեպուտատ էդ. Աղայանի և ուսանողների հանդիպումն անցավ փոխադարձ հարգանքի ու փոխըմբռնման մթնոլորտում: Դեպուտատ էդ. Աղայանը հանդիպման ընթացքում պատասխանեց ուսանողներին հետաքրքրող բազմաթիվ հարցերի, խոսեց նաև իր՝ որպես դեպուտատի, ապագա ծրագրերի և անելիքների մասին:

«Երևանի համալսարան», 13 մայիսի 1989 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 18-ին տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի սկզբնական կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը, որը քննարկեց «Երևանի պետական համալսարանում, հանրապետությունում և Արցախում տիրող իրավիճակը և համալսարանի կուսակցական կազմակերպության խնդիրները» հարցը։ Այդ հարցի առթիվ գեկուցումով հանդես եկավ կուսակցական կոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը։

Զեկուցողը նշեց, որ համալսարանի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովների ավանդույթի վերականգնումը խոչըն իրադարձություն է համալսարանական կյանքում։ Այն մեծապես կնպաստի կոլեկտիվի գործունեության դեմոկրատացմանը, կմղի նրան ավելի հստակ, ավելի բովանդակալից, ավելի նպատակապաց աշխատանքի։

Այսօրվա ժողովում մենք քննարկում ենք մեկ կարևորագույն հարց՝ համալսարանում, հանրապետությունում ու Արցախում տիրող իրավիճակը և մեր կազմակերպության խնդիրները։ Վերջին ժամանակներս ուսումնական պրոցեսը հաճախակի է խափանվում, տեղի են ունենում դասաղույներ, կուսակցական և հասարակական կազմակերպությունների գործունեությունը էական բեկում չի մտցնում համալսարանական կյանքի նորմալ ոիթմի ապահովման գործում։ Ուստի, կուսակցական ընդհանուր ժողովում պետք է վերլուծվեն այն բոլոր պատճառներն ու գործոնները, որոնք առաջացրել են նման իրավիճակ, պետք է մշակվեն առաջարկներ, որոնք կարագացնեն գոյություն ունեցող պրոբլեմների լուծումը։

Միանշանակ կարելի է ասել, որ ուսումնական պրոցեսի խափանումները, կուսակցական և հասարակական կազմակերպությունների գործունեության քիչ արդյունավետությունը կապված չեն ներհամալսարանական պրոբլեմների ու իրադարձությունների հետ, այլ նախեառաջ հանրապետությունում և

Արցախում տիրող իրավիճակի հետ, ուստի, կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել առավել կարևոր հարցերի վրա, ասաց զեկուցողը։

Առաջին կարևոր հարցը արցախահայության պրոբլեմն է։ Այս օրերին Լեռնային Ղարաբաղում սկսվել է երկարատև գործադրության գնայած ընդունված բազմաթիվ որոշումների, արցախահայության պրոբլեմը լուծում չի ստանում, որովհետև նրա հիմնական պահանջը մերժվում է, իսկ 1989 թվականի հունվար ամսից մարզում գործող Հատուկ կառավարման կոմիտեն ի վիճակի չեղավ իրականացնելու միութենական կուսակցական ու պետական մարմինների որոշումները։ Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր Լեռնային Ղարաբաղի աղբբեջանացման վտանգը առկա է, ավելին, այն արագորեն իրավործվում է, որը չի կարող չառաջացնել ամբողջ հայության բողոքը, չգիտվել որպես լենինյան ազգային քաղաքականության կոպիտ խախտում։

Ենելով այն իրողությունից, որ մենք դեռևս գտնվում ենք վերակառուցման սկզբնական փուլում, գեռևս ի վիճակի չենք ազգային հարցերը լուծելու բուն լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներով, նպատակահարմար ենք համարում ԼՂԻՄ-ը լիովին դուրս բերել Աղբբեջանական ԽՍՀ-ի ենթակայությունից, ենթարկելով այն Միության կուսակցական, պետական ու տնտեսական մարմիններին։ Երկրորդը՝ վերականգնել մարզային կուսակցական և խորհրդային մարմինները իրենց նախկին լիազորություններով։ Մեր խորին համոզմամբ, այդ օրգանների վերացումը միանգամայն բացասարար անդրադարձավ իրադրության բարելավման վրա և հակասում է երկրում ընթացող դեմոկրատացման պրոցեսին։

Երկրորդ պրոբլեմը, որը լարվածություն է առաջացնում հանրապետությունում, սումգայիթյան եղեռնագործության քաղաքական գնահատականի բացակայությունն է միութենական կուսակցական և պետական մարմինների կողմից։ Այն ցնցեց մեր ժողովրդին, բազմազգ Խորհրդային Միությունը լայն արձագանք գտավ մոլորակի բոլոր երկրներում։ Եվ չնայած դրան սումգայիթը մինչև այժմ քաղաքական գնահատական չի

ստացել: Ետառումգայիթյան իրադարձությունները, որոնք չափազանց սրեցին առանց այն էլ լարված իրավիճակը, ցույց տվեցին, որ քաղաքական գնահատականի բացակայությունը նպաստեց ազգամիջյան հարաբերությունների վատթարացմանը, նոր գոհեր բերեց: Մենք պահանջում ենք տալ քաղաքական գնահատական սումգայիթյան եղեռնագործություններին, մենք պահանջում ենք բացահայտել սումգայիթյան եղեռնագործությունների հովանավորողներին, կազմակերպողներին և իրազործողներին: Մենք պահանջում ենք այն որակել որպես մարդկության, հումանիզմի դեմ ուղղված գործողություն: Խորապես համոզված ենք, որ եթե նման մոտեցում ցուցաբերվեր ժամանակին, Աղրբեջանում և Հայաստանում տեղի չէին ունենա հետագա ողբերգական իրադարձություններ, որոնք նոր զոհեր պատճառեցին, որոնք նույնպես դատապարտելի են, և Հանցավորները պետք է պատժին սոցիալիստական օրինականության ամենայն խստությամբ:

Երրորդ պրոբլեմը՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների անհապաղ ազատումն է, որոնց թվում են նաև համալսարանի երեք դասախոսներ: Արդեն երկար ամիսներ նրանք գտնվում են ձերբակալության մեջ, և մենք ոչ մի ինֆորմացիա չունենք նրանց առողջության մասին, նրանց կողմից կատարված հանցանքների մասին: Կարծում եմ, համալսարանի կուսակցական ժողովը մեկ անգամ ևս կպահանջի «Ղարաբաղ» կոմիտեի անդամների անհապաղ ազատումը, և միայն դատը ցույց կտա՞ կա՞՞ն արդյոք հանցավոր երևույթներ նրանց գործողությունների մեջ: Հանրապետությունում լարվածություն է առաջանում նաև այն պատճառով, որ տարրեր բնույթի խախտումների համար պարբերաբար վարչական կալանքի են ենթարկվում մեր համարդաբացիները, Երևանում և Հանրապետության մի շարք շրջաններում արդեն երկար ամիսներ գործում են հատուկ դրությունը և պարետային ժամը: Այսօրվա ժողովում մենք մեկ անգամ ևս դիմում ենք վերադաս մարմիններին հանելու այն, դրանով իսկ ստեղծելով Երևան քաղաքում և Հանրապետության շրջաններում բարենպաստ պայմաններ վերակառուցման պրոցեսների զարգացման ու խորացման համար:

Չորրորդ պրոբլեմը, որը հուզում է համալսարանի կոլեկտիվին, այն է, որ մեզ խորապես անհանգստացնում է այն իրողությունը, որ աղետի շրջաններում դանդաղ են ընթանում վերականգնման աշխատանքները, շատ դեպքերում անարդյունավետ է ստացված օգնությունը տուժածներին հասցնելու կոնկրետ գործունեությունը, վատ են օգտագործվում հանրապետության և մասնավորապես բռնագաղթված հայ բնակչության աշխատանքային ռեզերվները: Մասր և չուժված հոգսերից մեկն է բռնագաղթվածների խնդիրը, որոնց թիվը այսօր 200.000-ի շրջանակներում է: Մի բան պարզ է, որ նրանց մեծ մասը հետազարձի հնարավորություն չունի, ուստի պետք է ամեն ինչ ձեռնարկվի նրանց անցավագին տեղափորման և աստիճանական աղապտացիայի ուղղությամբ: Դրան էապես կնպաստի նաև բռնագաղթվածների լայնորեն ներգրավումը աղետի գոտում վերականգնման աշխատանքներում:

Մեծ նշանակություն ունի այսօր աղետի շրջաններում տնտեսական զարգացման ազատ գոտի ստեղծելու խնդիրը, որի լուծումը դեռևս անբավարար է ընթանում:

Կան նաև բազմաթիվ այլ պրոբլեմներ, բայց վերոհիշյալ խնդիրների ճիշտ, արդարացի լուծումը մեծապես կառողջացնի բարոյահոգեբանական մթնոլորտը հանրապետությունում և կստեղծի նախադրյալներ համալսարանական կյանքը նորմալացնելու և համալսարանականների ուժերն ակտիվորեն օգտագործելու կարևորագույն խնդիրների իրազորման ուղղությամբ:

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ Մ. Մարտիրոսյանը, իրավաբանական ֆակուլտետի ղեկան, դոց. Ռ. Պետրոսյանը, պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի դոցենտ Ա. Գևորգյանը, տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Յու. Մովսիսյանը, պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Դուրգաբյանը, կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկան, դոց. Ռ. Տոնոյանը, ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ Հ. Հակոբյանը, հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Խուրշուդյանը, Երևանի պետական հա-

մալսարանի ուեկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանը:

Ժողովը քննարկված հարցի առթիվ ընդունեց Համապատասխան որոշումներ...

«Երևանի Համալսարան», 3 Հունիսի 1989 թ.

№ 23

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

[18 մայիսի 1989 թ.,
Երևան]

Երևանի պետական Համալսարանի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը, լսելով և քննարկելով «Երևանի պետական Համալսարանում, Հանրապետությունում և Արցախում տիրող իրավիճակը և Համալսարանի կուսակցական կազմակերպության խնդիրները» հարցը (զեկ.՝ կուսկոմիտեի քարտուղար Յու. Ի. Մկրտչումյան) նշում է, որ Համալսարանի կուսակցական կազմակերպության կոնֆերանսից հետո ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցան խոչըն սոցիալական և քաղաքական իրադարձություններ, անսասելի ուժի բնական աղետ: Ակսվեց Աղրբեջանական ԽՍՀ-ից Հայ բնակչության մասսայական բռնագաղթ, Երևան քաղաքում և Հանրապետության մի շարք շրջաններում մտցվեցին պարետային ժամ և Հատուկ դրություն, բնության արհավիրքին զոհ դարձան տասնյակ հազարավոր քաղաքացիներ, հազարավոր մարդիկ հաշմանդամ դարձան, ավելի քան կես միլիոն մարդ մնաց անօթևան, ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, տարբեր բնույթի խախտումների պատրվակով պարբերաբար վարչական կալանքի են ենթարկվում մեր Համաքաղաքացիները, սումգայիթյան եղոնագործության, Հայաստանի արդյունաբերական ձեռնար-

կություններում մասսայական թունավորման դեպքերի կազմակերպիչների ու իրագործողների մեծ մասը սոցիալիստական օրինականության ամենայն խստությամբ դեռևս չի պատժվել: Վերջին ժամանակներս խիստ սրվել է իրադրությունը Լեռնային Ղարաբաղում, որի պատճառները նշված են ԼՂԻՄ-ի Հայ բնակչության ներկայացուցիչների՝ Մ. Ս. Գորբաչովին հասցեազրկած բաց նամակում: Այս ամենը, անկասկած, իր ազդեցությունն ունեցավ Համալսարանի կոլեկտիվի, կուսակցական և Հասարակական կազմակերպությունների գործունեության վրա, Հանգեցրեց ուսումնական պրոցեսի և ընդհանրապես կարգապահության խափանումների՝ դասադուլների ձևով:

Անդրադառնալով այս և մի շարք այլ քաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգային, ինչպես նաև ներհամալսարանական պրոբեմներին, կուսակցական ընդհանուր ժողովը գտնում է.

1. Հանրապետությունում դարաբայյան իրադարձությունների հետևանքով առաջացել է արտակարգ բարդ քաղաքական ու գաղափարաբարոյական կացություն, որը չի կարող չտկվել առանց դարաբայյան հայության և ամբողջ Հայ ժողովրդի արդարացի պահանջը բավարարելու: Ղարաբաղյան շարժումը վերակառուցման դեմոկրատացման արդյունք հանդիսացող համազգային շարժում է, որը ԽՄԿԿ կենտկոմի 1988 թ. փետրվարի 21-ի որոշման մեջ և մասսայական լրատվության միջոցների կողմից անարդարացիորեն որակավորվեց որպես ազգայանականություն և ծայրահեղականություն: Այսպիսով, վերակառուցման ծնունդը հանդիսացող համաժողովրդական շարժմանը հապճեպորեն փակցվեցին ստալինյան զինանոցից վերցված քաղաքական պիտակները: Իրադարձության ընթացքը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հունիսի 18-ի ԽՄԿԿ կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած Հայտնի որոշումներից հետո ընկած ժամանակաշրջանում ցույց տվեց, որ Աղրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը, ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի թողտվությամբ լուրջ խոչընդուներ է ստեղծում Լեռնային Ղարաբաղում կուսակցած պրոբեմների լուծմանն ուղղված այդ որոշումների կենսագործման ճանապարհին: Մինչև օրս էլ չեն դադարում Աղրբեջանական ԽՍՀ

ղեկավարության կողմից ազգամիջյան հարաբերությունները էլ ավելի սրելու ուղղությամբ իրականացվող սաղրիչ գործողությունները: Աղրբեջանական ԽՍՀ Հանրապետական Ծերթերում տպագրվում են բազմաթիվ նյութեր, որոնցում որոշակիորեն ժխտվում է Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծման ամեն մի համարակորություն: Աղրբեջանական ԽՍՀ ներկայիս ղեկավարության հակաօրինական վարքագիծը գալիս է անպատճելիության վստահությունից: Այս միտքը ընդգծված է նաև ԼՂԻՄ-ի հայ բնակչության ներկայացուցիչների՝ Մ. Ս. Գորբաչովին հասցեագրված բաց նամակում, որտեղ արդարացի և օրյեկտիվորեն ներկայացվում են Լեռնային Ղարաբաղում իրադրության սրման պատճառները:

Ժողովը պահանջում է ԽՄԿԿ կենտկոմից, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունից, ինչպես նաև ՀԿԿ կենտկոմից և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունից կուսակցական և պետական սկզբունքային գնահատական տալ Աղրբեջանական ԽՍՀ ներկայիս ղեկավարության նման հակաօրինական վարքագիծին: Միաժամանակ կուսակցական ընդհանուր ժողովը պահանջում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունից մինչև ԽՍՀՄ ժողովրդական ղեպուտատաների առաջիկա համագումարը, մինչև մայիսի 21-ը հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել Լեռնային Ղարաբաղում ստեղծված բարդ սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի հարցը:

2. Աշխատավորության, ինչպես նաև համալսարանի կողեկտիվի և հատկապես ուսանողության շրջանում տարվող գաղափարաքարական աշխատանքներին լուրջ հարված հասցրեց դարարացյան իրադարձությունների առնչությամբ Հանրապետությունում և Արցախում տիրող իրավիճակի խեղաթյուրված լուսաբանումը լրատվության մասսայական միջոցների կողմից:

Ժողովը պահանջում է դադարեցնել լրատվության մասսայական միջոցների նման վերաբերմունքը, որը խորապես ոտնահարում է Հանրապետության սուվերենությունը, վիրավորում մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը: Այդ ամենն ուսանող երիտասարդության շրջանում ծնում է իրավացի դժո-

հություններ, առաջ բերում լրատվության միջոցների հանդեպ անվտահություն ու թերահավատություն:

3. Երևանի պետական համալսարանի կուսակցական ընդհանուր ժողովը միանում է ԼՂԻՄ-ի հայ բնակչության ներկայացուցիչների՝ Մ. Ս. Գորբաչովին հասցեագրած բաց նամակում ներկայացվող արդարացի պահանջներին և գտնում է, որ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն իրեն չի արդարացնում և ի վիճակի չէ իրականացնելու Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կուսակցական, պետական, խորհրդային բարձրագույն մարմինների ընդունած որոշումները և պահանջում է վերականգնել կուսակցության մարզային կոմիտեն և մարզային խորհրդի գործադիր կոմիտեն:

4. Հանրապետության ծանր հոգսերից մեկն է բռնագաղթվածների խնդիրը: Պաշտոնական վիճակագրության համաձայն հանրապետություն մուտք է գործել 190 հազար բռնագաղթված: Անզուտ, բռնագաղթվածները մեծ պրոբլեմներ են ստեղծել հանրապետության ղեկավարության համար: Սակայն, պարզ է նաև այն, որ ՀԽՍՀ և Հանրապետության կառավարությունները դեռևս արմատական միջոցառումներ չեն ձեռնարկել բռնագաղթվածների սոցիալ-տնտեսական և բարոյական խնդիրները լուծելու ուղղությամբ: Պետք է ամեն ինչ ձեռնարկվի նրանց անցավագին տեղավորման և աստիճանական աղապտացիայի ուղղությամբ: Դրան էապես կնպաստի նաև նրանց ըստ ամենայնի ներգրավումը աղետի գոտու վերականգնման աշխատանքներին:

5. Համալսարանի ողջ կոլեկտիվին և կուսակցական կազմակերպությանը խորապես անհանգստացնում է այն իրողությունը, որ զանգաղ են ընթանում վերականգնման աշխատանքները աղետից տուժած վայրերում:

Շատ դեպքերում անարդյունավետ է ստացված օգնությունը տուժածներին հասցնելու կոնկրետ գործունեությունը, վատ են օգտագործվում Հանրապետության և մասնավորապես բռնագաղթված բնակչության աշխատանքային ոեզերվները:

Ժողովը պահանջում է աղետի գոտում արագացնել վերականգնման աշխատանքները, շինարարական աշխատանքներում

առաջին հերթին օգտագործել հանրապետության աշխատուժը և բոնագաղթված բնակչությանը: Զայրույթ է առաջացնում այն հանգամանքը, որ մինչև օրս վերջնականապես չի լուծվել անհատական շինարարության համար հողամասեր հատկացնելու հարցը, որը խիստ կերպով կարագացներ երկրաշարժից տուժած բնակչությանն այս տարվա ընթացքում բնակարանով ապահովելու գործը: Անհամեշտ է երկրաշարժից տուժած քաղաքներն ու շրջանները դարձնել սթափության գոտի:

Հայկական սփյուռքի խոչոր և մանր կապիտալը, առաջավոր տեխնիկան ու տեխնոլոգիան ներգրավելու նպատակով ժողովը նպատակահարմար է համարում Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության ազատ տնտեսական գոտի, ինչպես նյութական արտադրության, այնպես էլ կենցաղային ձեռնարկության, արտասահմանյան տուրիզմի և առողջապահության ոլորտներում: Բացի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արագացմանն աջակցելուց, դա կնվազեցնի կամ լրիվ կղաղաքացնի հայ ազգաբնակչության անցանկալի արտագաղթը հանրապետությունից և ԽՍՀՄ-ից:

6. Դժգոհության տեղիք է տալիս նաև կուսակցական ղեկավար մարմինների առ այսօր վարած կաղըրային քաղաքականությունը և հատկապես այն արատավոր պրակտիկան, որ հին նոմենկլատուրային, իրենց չարդարացրած շատ աշխատողներ ենթարկվում են հորիզոնական տեղաշարժերի, իսկ երբեմն էլ՝ առաջ քաշվում ավելի բարձր պաշտոնների: Այդ ամենը խիստ բացասաբար է անդրադառնում հանրապետության աշխատավորության և ամենից առաջ երիտասարդության գաղափարաքաղաքական դաստիարակության վրա:

7. Ինչպես աշխատավորության, այնպես էլ ուսանողության շրջանում տարվող գաղափարական աշխատանքը մեզանում առայժմ կտրված է իրական կյանքից, չեն գտնվում գաղափարական ներգործության նոր, արդյունավետ ձևեր, դեռ շարունակվում է խոսքի և գործի տեսության ու պրակտիկայի կտրվածությունը մասսամբ և նրանց հակադրությունը: Զկա հրապարակայնությունն, բաց երկխոսություն ու կարծիքների պյուրալիզմ: Ժողովը գտնում է, որ գաղափարաքաղաքական աշխատա-

քը մեր կյանքի ներկա պահանջներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է կազմակերպել հրապարակային բանավեճեր, գիտատեսական կոնֆերանսներ ու «կլոր սեղաններ», նրանց մասնակից դարձնելով, կուսակցական ու պետական ղեկավար մարմինների, համալսարանի և մյուս բուհերի, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի, ստեղծագործական միությունների, ոչ Փորմալ կազմակերպությունների, դարարադյան շարժման ակտիվիստների և աշխատավորության լայն զանգվածների պատվիրակներին:

8. Ժողովը գտնում է, որ անհրաժեշտ է նորովի, գիտական դիրքերից վերագնահատել մեր պատմության մինչև այժմ սխալ գնահատված ու աղավաղված էջերը, դեպքերն ու դեմքերը, լրացնել բաց մնացած «սպիտակ բծերը»: Իրեւ առաջնահերթ քայլ, հարկավոր է գոնե գիտնականների առջև բացել ՀԽՍՀ Պետական արխիվներում փականքի տակ գտնվող ֆոնդերը, գիտական գրադարանների հատուկ բաժիններում պահպող արգելված գրականությունն ու պարբերական մամուլը, հրատարակել անհատի պաշտամունքի տարիներին գոհվածների ու հանիրավի պատմվածների, ինչպես նաև նրանց գրպարտիչների ու մատնիչների ցուցակները:

9. Հայ ժողովը ամենաշական խնդիրներից մեկը արտաքին և ներքին սփյուռքի գոյությունն է: Համալսարանի կուսակցական ընդհանուր ժողովը գտնում է, որ անհրաժեշտ է արմատապես վերակառուցել արտաքին և ներքին սփյուռքի հետ տարբող աշխատանքները և համագործակցության ձևերը: Անհամեշտ է, որ արտաքին սփյուռքի հետ մշակութային կապերի հետ մեկտեղ հաստատվեն գործարար տնտեսական կապեր, որոնք էապես կնպաստեն մեր հանրապետության զարգացմանը և ազգապահպանության գործին սփյուռքում: Իր հերթին սփյուռքն էլ կարող է դառնալ Խորհրդային Հայաստանի և ԽՍՀՄ-ի պրոպագանդման հզոր միջոց արտասահմանում: Վաղուց ի վեր հասունացել է Հայկական գաղթօջախ ունեցող արտասահմանյան երկրներում սահմանադրությամբ նախատեսված դեսպանությունների ու հյուպատոսությունների ստեղծումը, ինչպես նաև Հայաստանի հանրապետական մամուլի, ուադիոյի և հե-

ոռոստատեսության ներկայացուցիչներ հաստատելու հարցը, որը էապես կնպաստեր մայր Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը:

Ինչ վերաբերում է ներքին սփյուռքին, ապա անհրաժեշտ է, որ մեր հանրապետությունը իր ներկայացուցչություններն ունենա միութենական մյուս հանրապետություններում: Վերջիններիս ստեղծումը ավելի գործնական կղարձնի կապը ներքին սփյուռքի հետ:

10. Գտնելով, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները ձերբակալված են ապօրինաբար, որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը նույնքան ապօրինաբար պատգամավորական անձեռնմխիթությունից զրկել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ղեղուտատներ Խ. Մտամբոլցյանին և Ա. Մանուչարյանին (որոշումն ընդունվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պաշտոնապես չափարարակած հերթական նստաշրջանի միջոցին, երբ Գերագույն խորհրդի նախագահությունը չուներ լիազորություններ), ժողովը պահանջում է անհապաղ ազատ արձակել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին և Ղարաբաղյան շարժման մյուս ակտիվիստներին: Իսկ մինչև նրանց ազատելը թույլատրել համալսարանի կոլեկտիվից կազմված հանձնաժողովին հանդիպելու նրանց հետ և ծանոթանալու նրանց վիճակին:

11. Անհապաղ վերացնել հատուկ դրությունը և պարետային ժամանակում և հանրապետության շրջաններում:

12. Երևանի պետական համալսարանի հիմնադրման տարեթիվը համարել 1919 թ. մայիսի 16-ը և 1989 թ. աշնանը լայնութեն տոնել նրա հիմնադրման 70-ամյակը:

13. Հարց հարուցել ՀԿԿ կենտրոնի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առջև Հայաստանի Հանրապետության ստեղծման օրը՝ 1918 թ. մայիսի 28-ը համարել Հայկական պետականության վերականգնման տարեթիվ և այսուհետև նշել այն որպես ազգային տոն: Եռագույն դրոշը ճանաչել որպես Հայկական պետականության ազգային խորհրդանիշ:

«Երևանի համալսարան», 3 հունիսի 1989 թ.

№ 24

ТЕЛЕГРАММА

Генеральному секретарю ЦК КПСС,
Председателю Верховного Совета СССР
тov. М. С. ГОРБАЧЕВУ
Председателю Совета Министров СССР
тov. Н. И. РЫЖКОВУ

Партийная организация Ереванского государственного университета, озабоченная сложившейся в Нагорном Карабахе тяжелой ситуацией, обращается к Вам с просьбой принять безотлагательные меры по урегулированию чрезмерно напряженного положения в области и вокруг нее. С февраля 1988 года по сей день не были найдены правильные пути разрешения конфликта. Обстановка осложняется с каждым днем и чревата непредсказуемыми последствиями.

Как известно, нынешнее справедливое движение за воссоединение Нагорного Карабаха с матерью-родиной-Советской Арменией — является детищем политики перестройки и демократизации. Оно направлено на ликвидацию исторической несправедливости, против попрания национальных прав армянского населения НКАО, против политики азербайджанизации области, которую в свое время применили к армянскому населению Нахичеванской АССР. Но, к сожалению, карабахское движение не удостоилось правильной оценки.

Ситуация резко обострилась после геноцида армян в Сумгаите. Были предприняты попытки скрыть от общественности истинную сущность кровавого преступления, не получившего до сих пор политической оценки.

Армянское население Нагорного Карабаха и весь армянский народ с пониманием восприняли решение Президиума Верховного Совета СССР о введении особого управле-

ния в Нагорном Карабахе как первый шаг на пути вывода НКАО из состава Азербайджанской ССР и окончательного решения карабахской проблемы. Развитие событий показывает, что деятельность Комитета не оправдывает надежды населения НКАО. На деле руководство Азербайджана продолжает свою прежнюю политику в отношении автономной области. Открытое письмо партийных и советских руководителей, ряда избранных от области народных депутатов СССР и двух членов Комитета особого управления товарищу М. С. Горбачеву объективно оценивает тревожное положение, возникшее в НКАО.

В свете всего этого мы выражаем свое возмущение по поводу продолжающейся безудержной провокационной антиармянской кампании в Азербайджане, которая направлена против политики перестройки в национальном вопросе. Одним из наглядных проявлений этого является адресованное тов. М. С. Горбачеву письмо от 14 мая 1989 г., подписанное, в числе других, также и идеологами антиармянского движения З. Буниятовым и Б. Вахабзаде. События последних дней еще раз подтвердили, что единственным путем решения карабахской проблемы является ее политическое решение.

Поэтому мы считаем необходимым:

- а) руководствуясь ленинскими принципами самоопределения, вывести Нагорный Карабах из состава Азербайджанской ССР;
- б) вывести партийную организацию НКАО из азербайджанской республиканской парторганизации и подчинить непосредственно ЦК КПСС;
- в) восстановить областной комитет партии и областной Совет народных депутатов НКАО со всеми полномочиями.

Принято единогласно на общем собрании парторганизации Ереванского государственного университета 18 мая 1989 года.

«Երևանի Համալսարան», 3 Հունիսի 1989 թ.

№ 25

ТЕЛЕГРАММА

ПЕРВОМУ СЪЕЗДУ НАРОДНЫХ ДЕПУТАТОВ СССР

[18 մայիսի 1989 թ.,
Երևան]

Коллектив Ереванского государственного университета поздравляет депутатов впервые избранного на демократической основе народного форума с открытием первого Съезда народных депутатов СССР.

Выражаем уверенность, что работа Съезда ознаменует решительный отказ от авторитарных и волюнтаристских методов руководства и станет поворотным в становлении подлинно правового социалистического государства. Надеемся, что Съезд станет прологом торжества идей демократии во всех сферах социально-экономической, общественно-политической жизни.

Считая насущной необходимостью скорейшее политическое решение проблем, связанных с межнациональными отношениями, коллектив университета выражает надежду, что Съезд народных депутатов заложит основы возврата к ленинской национальной политике и провозгласит ее краеугольным камнем неотъемлемое право наций на свободное волеизъявление и самоопределение.

Надеемся, что в духе такого подхода получит свое справедливое политическое решение проблема НКАО, и насилиственно разъединенный армянский народ получит возможность воссоединения.

Желаем Съезду успехов в его многотрудной деятельности. Уверены, что работа Съезда станет важным шагом по очищению социализма от всего чуждого, наносного и будет спо-

существовать возрождению власти Советов в ее ленинском понимании.

По поручению коллектива Ереванского государственного университета

Проректор М. А. ДАВТЯН

Секретарь парткомитета Ю. И. МКРТУМЯН

Председатель объединенного профкомитета

О. В. МКРТЧЯН

Секретарь комитета комсомола М. П. САРКИСЯН

«Երևանի համալսարան», 3 Հունիսի 1989 թ.

№ 26

**РЕШЕНИЕ
ОБЩЕГО ПАРТИЙНОГО СОБРАНИЯ ЕРЕВАНСКОГО
УНИВЕРСИТЕТА ОТ 18 МАЯ 1989 г.
О СУМГАЙСКОМ ГЕНОЦИДЕ АРМЯН**

Общее собрание партийной организации Ереванского государственного университета выражает свое возмущение по поводу того, что руководящие органы КПСС и высших государственных и правительственные инстанций до сих пор не дали правильную политическую оценку сумгайтской трагедии. Руководство Прокуратуры СССР, еще до начала расследования сумгайтских преступлений, определило состав преступлений - запланированного и организованного погрома армян в Сумгаите 27-29 февраля 1988 г., квалифицировав их как „массовые беспорядки и убийства, совершенные из хулиганских побуждений“. Кровавые события в Сумгаите не получили должной оценки и со стороны высшей судебной инстанции страны — Верховного суда СССР. Дальнейшее

расследование и судебное рассмотрение дел удивительным образом ничего не прибавили к вышеприведенной квалификации состава преступления и не стали лейтмотивом как для следствия и обвинительных заключений, так и для судебных процессов и приговоров.

Таким образом, „хулиганскими действиями“ были квалифицированы акты геноцида, совершенного против армян на почве национальной и религиозной нетерпимости.

Между тем сумгайтские злодеяния прямо подпадают под действие первых трех пунктов 2-й статьи Конвенции ООН от 9 декабря 1948г. „О предупреждении преступления геноцида и наказании за него“, считающей геноцидом действия, совершаемые с намерением уничтожить, полностью или частично, какую-либо национальную, этническую, расовую или религиозную группу.

Согласно Конвенции, участником которой является СССР, (она ратифицирована Президиумом Верховного Совета СССР 18 марта 1954 г.) виновные за геноцид должны быть привлечены к ответственности за участие в заговоре с целью совершения геноцида, за подстрекательство к его совершению, за покушение или соучастие в геноциде, независимо от того, являются ли они избранными конституционным путем правителями, общественными деятелями или отдельными лицами.

Конвенция вместе с тем подчеркивает, что вопрос о геноциде не может быть объектом лишь внутригосударственной юрисдикции и является предметом международной озабоченности.

Собрание требует на основании Конвенции ООН от 9 декабря 1948 г. дать правильную политическую и правовую оценку трагедии в Сумгаите и со всей строгостью закона наказать виновников — организаторов, подстрекателей, исполнителей акта геноцида.

Затягивание принятия данного решения может привести к непредсказуемым последствиям не только для взаимоотно-

шений армянского и азербайджанского народов, но и для межнациональных отношений в СССР в целом.

«Երևանի համալսարան», 3 հունիսի 1989 թ.

№ 27

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի կուսակցական
կազմակերպության ժողովի մասին

Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի սկզբնական կուսակցական կազմակերպության դուռը, որը քննարկեց «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում» և «Ռեգիստրացիան սրման և ԼՂԻՄ-ի պրոլեմի լուծման ուղղությամբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդին ներկայացվող Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության առաջարկությունների մասին» հարցերը:

Այդ հարցերի առմիվ ժողովը լսեց կուսկոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանի զեկուցումը:

Ժողովի ցանկությամբ լսեցին նաև քննարկման ներկայացված հարցերի առմիվ որոշման նախագծերը, որից հետո նոր միայն ժողովը անցավ զեկուցման և որոշման նախագծերի դրույթների քննարկմանն ու մտքերի փոխանակությանը:

Ժողովում ելույթներով ու առաջարկություններով հանդես եկան հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Խորշույսնը, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, տեսական Փիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գ. Սահակյանը, հայ ժողովրդի պատմության ամբիոնի պրոֆեսոր Մտ. Մելիք-Բախչյանը, տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի ղեկան պրոֆ. Յու. Մովսիսյանը, պետական, վարչական և միջազգային իրավունքի ամ-

բիոնի վարիչ, պրոֆ. Ն. Այվազյանը, հայոց լեզվի ամբիոնի պրոֆ. Մ. Ասատրյանը, բնական գիտություններում հաշվողական տեխնիկայի միջոցների կիրառման ամբիոնի դոցենտ Բ. Արարքյանը, ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ Ռ. Մովսիսյանը, պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Հովսեփյանը, քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ դոցենտ Տ. Բարսեղյանը, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս ընդհանուր լեզվաբանության ամբիոնի պրոֆ. Էդ. Աղայանը և հայ ժողովրդի պատմության ամբիոնին կից Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի վարիչ, դոց. Բ. Հարությունյանը:

Ժողովը կուսկոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանի զեկուցման դրույթների և ելույթների ու առաջարկությունների հիման վրա ընդունեց համապատասխան որոշումներ...

Ժողովի աշխատանքներին մասնակցում էր և ելույթով հանդես եկավ ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Գ. Ասատրյանը:

«Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1989 թ.

№ 28

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
1989 թ. ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԴՐԱՄԱՑ ԺՈՂՈՎԻ**

ՈՐՈՇՈՒՄԸ

ԽՄԿԿ Կենտկոմի «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում» ծրագրի նախագծի վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության դուռը, քննարկելով ԽՄԿԿ Կենտկոմի «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայ-

մաններում» ծրագրի նախագիծը, նշում է, որ նրանում ճիշտ չեն բացահայտված աղքային հարցում լուրջ պրոբլեմների ծագման և աղքամիջյան հարաբերություններում լարվածության ու կոնֆլիկտների պատճառները, քանզի դրանք հիմնականում հանգեցված են սոցիալ-տնտեսական թերությունների: Ամբողջությամբ անընդունելի են խորհրդային ֆեղերացիան նորոգելու, կատարելագործելու համար առաջարկվող ուղիներն ու միջոցները, աղքային կազմավորումների իրավավիճակի փոփխման տարրերակը: Կիսատ-պուատ են միութենական հանրապետությունների տնտեսական ու քաղաքական ինքնիշխանությունն ընդլայնելու ու ամրապնդելու համար առաջարկվող միջոցառումները: Ծրագրի նախագծում շատ հարցադրումներ չափից ավելի ընդհանուր են, զուրկ կոնկրետությունից, պարզությունից ու հստակությունից: Ընդ որում առաջին բաժինը՝ «Ինչ ժառանգություն է մեզ բաժին ընկել», գրված է ջատագովական ոճով, ցույց չի տրված աղաղակող հակասությունը, որը եղել է աղքային հարցում տեսական մոտեցումների, դեկլարատիվ ընույթի որոշումների, պրոպագանդիստական ամպագորգոության և իրական վիճակի միջև: Եթե հետեւնք նախագծի տրամարանությանը, ապա կստացվի, որ աղքային հարցում բոլոր խեղաթյուրումները և թույլ տրված կոպիտ սխալներն ու հանցագործ քայլերը եղել են հետստալինյան շրջանում: Նախագծում ասված է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աղքային հարցում սոցիալիստական ծրագրի առանցքը եղել են «աղքային ինքնորոշման և աշխատավորների ինտերնացիոնալ համագործակցության Վ. Ի. Լենինի առաջադրած լոգունգները», որը, ինչպես նշված է ծրագրի նախագծում, թույլ է տվել շատ աղքերի վերածնել կամ առաջին անգամ ստեղծել ուսալ պետականություն աղքային-տարածքային ինքնավարության տարբեր ձևերով: Նշվում է, որ միութենական սոցիալիստական պետության կազմավորումը հանրավորություն է տվել համատեղ ջանքերով անցկացնելու երկրի ինդուստրացում, գյուղի սոցիալիստական վերափոխում, հավասարեցնելու ժողովուրդների տնտեսական զարգացման և նյութական ապահովման մակարդակները, ստեղծելու ամրողական ժողովրդատնտեսական համալիր: Աս-

ված է, որ ինքնատիպության պահպանման ու զարգացման կողքին ծնունդ առան պրոցեսներ, որոնք օբյեկտիվորեն տանում էին դեպի նոր սոցիալական ընդհանրության՝ խորհրդային ժողովրդի ձևավորման: Դրանից հետո ծրագրում արվում է այն պնդումը, թե «Այս ամենը հիմք ծառայեց ժողովուրդների երբեմնի երկպառակության ու անվստահության աստիճանական հաղթահարման, նրանց բարեկամության ձևավորման համար»: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ նախակառուցողական տրամադրությունների ուղղողիվ, որից հետո անհասկանալի է մնում նախագծի այն դրույթը, թե՝ «Վ. Ի. Լենինից անմիջապես հետո սկսված հասարակական զարգացման ձևախեղումները կործանարար անդրադան աղքամիջյան հարաբերությունների վրա»: Ծրագրի նախագծի ամենաընդհանուր թերություններից մեկն այն է, որ մեթոդոլոգիական տեսակետից այն կառուցված է սուրյեկտիվիստական, ոչ մարքուլենինյան տեսությունից բխող հիմքի վրա: Մի կողմից իրավամբ շեշտվում է, որ աղքամիջյան հարաբերությունների ներկա պրոբլեմները զգալի չափով կապված են հասարակական օբյեկտիվ պրոցեսների թերագնահատման հետ, որ «Ազգերի զարգացման և նրանց մերձեցման միջև, ինքնուրույնության ձգտման և միասնացման կապերի խորացման պահանջմունքի միջև 20-րդ դարի երկրորդ կեսին ամբողջ աշխարհին հատուկ հակասությունն իրեն զգալ տվեց նաև մեր բազմազգ երկրում», որը, սակայն, «ըստ պատշաճին չվերլուծվեց և քաղաքականության մեջ հաշվի չառնվեց», իսկ մյուս կողմից աղքային հարցի զարգացման դինամիկան չի դիտվում իրեւ ընապատմական պրոցես, որը չի ենթարկվում վարչահրամայական կանոնակարգման: Ընդհակառակը, աղքային հարցում և աղքամիջյան հարաբերություններում ծագած պրոբլեմների լուծման համար նախագծի առաջարկած մեխանիզմները ամեն ինչ դնում են կախման մեջ վերադաս կուսակցական-պետական մարմինների և նրանց դեկավաների սուրյեկտիվ կամքից, շրջանցելով դեմոկրատական եղանակներն ու միջոցները: Այդ մեխանիզմների միջոցով լուծվելու դեպքում աղքային հարցն անխուսափելիորեն կրածանի վերակառուցման մյուս կարևոր խնդիրների ճակատագիրը, որոնց սպառնում է լիակա-

տար ձախողում վերևների կիսատ-պոտ, երկչու, հեղափոխական վճռականությունից զուրկ և հակասական քաղաքականության պատճառով:

Բավական է ամել, որ նախագիծը ազգային հարցի լուծման կարևորագույն ելակետի՝ ազգի ինքնորոշման սկզբունքի մասին հիշատակում է միայն երկու անգամ, հարևանցիորեն, չդարձնելով այն առանցքը ու ելակետ պրոբլեմների լուծման համար: Այդ իմաստով նախագիծը երբեմն ամենալուրջ սկզբունքային հարցերում նահանջում է մինչև իսկ գործող, բայց Հենց ազգային հարցի տեսանկյունից խիստ անկատար սահմանադրության դիրքերից: Այսպես, թերևս կանխամտածված շրջանցվել է միութենական հանրապետությունների՝ ֆեղերացիայից դուրս գալու իրավունքը, որը գրանցված է սահմանադրության 72-րդ հոդվածում և բխում է 1922 թ. դեկտեմբերի 30-ի ստորագրված ԽՍՀՄ կազմավորման պայմանագրից և միավորման կամավորության սկզբունքից: Մինչդեռ, առանց Միությունից դուրս գալու իրավունքի ճանաչման, միավորվելու կամավորության սկզբունքը դառնում է անիմաստ, կեղծ դեկլարացիա:

Հին ստերեոտիպով ազգային հարցն ըստ էության հանգեցվում է սոցիալ-տնտեսական պրոբլեմների, որը ոչ միայն չի արտահայտում ազգային և ազգային պրոցեսների զարգացման օրինաչփությունները, այլև վտանգավոր է, քանզի սխալ ախտորոշումը չի կարող հիվանդության բուժման ճիշտ ելակետ լինել:

Թվում է, թե կանխամտածված ձևով շրջանցված է նաև հանրաքեի հարցը, թեև իրրև կարևորագույն պետական հարցեր լուծելու համար հանրաքեն ճանաչված է իրրև միջոց գործող սահմանադրության 5-րդ հողման պատճենում: Նախագծում ասված է, որ ազգամիջան պրոբլեմները լուծելիս հաշվի է առնվում նաև միջազգային փորձը: Սակայն ոչինչ չի ասված նաև այն մասին, որ անհրաժեշտ է հաշվի առնել նաև միջազգային կոնվենցիաներով, պայմանագրերով, համաձայնություններով, դեկլարացիաներով ԽՍՀՄ-ի ստանձնած պարտավորությունները, որոնք վերաբերում են ազգի ինքնորոշման իրավունքին, ազգերի իրավահավասարությանը և ազգային փոքրամասնությունների իրավունքներին:

Բոլոր սկզբունքային և լուծման համար հեղափոխական

վճռականություն պահանջող հարցերում նախագիծը երկչու է, անհետևողական: Այսպես, ազգերի և ազգությունների իրավահավասարության տեսանկյունից բոլոր ազգային կազմավորումներին ընդհանուր միութենական ենթակայության իրավիճակ տալու փոխարեն, առաջարկվում է սոսկ ՌԽՖՍՀ ազգային կազմավորումներին, ցանկության դեպքում դուրս գալ մարզերի ու երկրամասերի ենթակայություններին: Դա նշանակում է պահպանել ազգային կազմավորումների ներկայիս քառասուհնա հիերարխիական համակարգը և ինքնավարության իրեն վաղուց սպառած ըմբռնումը:

Նախագծում լիովին անտեսված է բաժանված ազգերի վերամիավորման հարցը, որը նոր քաղաքական մտածողության տեսանկյունից անհրաժեշտ է համարվում միջազգային ասպարեզում, բայց, չփառես ինչու չի կիրառվում երկրի ներառում: Նախագծում չի խոսվում ցեղասպանության գործողությունների մասին Սումգայիթում, Ֆերգանայում, Նոր Ուզենում և չի տրված դրանց քաղաքական գնահատականը: Հանրապետական կոմիտեները չեն ճանաչվում իրրև ինքնուրույն, ինքնիշխան կոմիտեներ՝ ազգային խնդիրներ պարունակող ինքնուրույն ծրագրերով:

ԼՂԻՄ-ի և ազգային այլ պրոբլեմների լուծման վերաբերյալ նախագծի դրույթի երկրորդ պարբերությունը, ըստ էության, ի չիք է դարձնում առաջին պարբերության հարցադրումը, քանզի հարցերի լուծումը կապում է «տվյալ իրադրության մեջ ներդրաված բոլոր ազգերի շահերի, գոյություն ունեցող իրողությունների, մարդկանց կյանքի համար հավանական հետևանքների» պարտադիր հաշվառման հետ: Ազգային պրոբլեմները պետք է լուծեն բացառապես պատմական ճշմարտության և արդարության հաշվառումով: Ածանցյալ երևույթների բացառումը պետական հիմանության պարտքն է:

Ազգային պրոբլեմների լուծման պրոցեսում կուսակցական-պետական մարմինները պետք է հաշվի առնեն ոչ միայն միջազգային փորձը, ինչպես նշված է ծրագրում, այլև միջազգային իրավունքի նորմերը, որոնք բխում են ազգի ինքնորոշման իրավունքի և ազգերի իրավահավասարության, իրրև միջազգային իրա-

վունքի պաշտպանության տակ առնված համամարդկային արժեքների վերաբերյալ կոնվեցիաներից, պայմանագրերից, համաձայնություններից և դեկլարացիաներից: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները պարտավոր են ըստ ամենայնի հարգել իրենց վավերացրած փաստաթղթերից բխող պարտավորությունները:

Ժողովը գտնում է, որ նախագիծը իր առաջարրած դրույթներով չի կարող հիմք ծառայել ազգային հարցի լուծման գործում արդյունավետ քաղաքականություն մշակելու համար:

Ծրագրի նախագիծը լուրջ փոփոխություններից ու լրացումներից հետո միայն կարող է ներկայացվել ԽՄԿԿ կենտրոնական պետական համար ընդունելի փաստաթուղթ:

«Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1989 թ.

№ 29

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 1989 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԴՐԱՄԱՑ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Ռեգիստրության սրման և ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ուղղությամբ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ ներկայացվող Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության առաջարկությունների մասին

Ելնելով համընդհանուր ճանաչում գտած այն կանխադրույթից, որ բոլոր ժողովուրդները իրավահավասար են և ունեն իրենց քաղաքական իրավիճակը որոշելու անկապտելի և անժամկետ իրավունքը,

- Ելնելով նրանից, որ պետության տարածքային ամբողջականությունը պետք է հիմնվի ժողովուրդների կամքի ազատ արտահայտության վրա և չի կարող հիմնվել

ուրիշ ազգերի տարածքների անեքսիայի և ժողովուրդների տարածքային ամբողջականության խախտման վրա,

- Հաշվի առնելով նաև, որ ազգամիջյան հարաբերությունների վերակառուցման իմաստը, նոր մտածողությունը և խորհրդային իրավական պետության զաղափարն անհամատեղելի են պետության սահմանների մեջ որևէ ժողովրդի կամ նրա մի հատվածին բռնությամբ պահելու հետ, նկատի ունենալով նաև ոեգինում ազգամիջյան հարաբերությունների լարվածության աճը, օրակուր ահազնացող առճակատումը, Աղրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի նկատմամբ իրականացվող շրջափակման քաղաքականությունը, ինչպես նաև Հայտարարված պատերազմի վիճակը երկու հանրապետությունների միջև ու Աղրբեջանական ԽՍՀ Հայազգարնակչության նկատմամբ կիրառվող վայրագ հայածնաբի քաղաքականությունը և խորապես մտահոգված ատեղծված իրադրությամբ, Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության ժողովը քննարկելով կացությունը, որոշում է.

1. Ճանաչել ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը որպես մարզի խորապես ղեմոկրատական ճանապարհով ընտրված միակ օրինական իշխանություն, մինչև ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի և կուսակցության մարզային կոմիտեի գործունեության վերականգնումը:

2. Ելնելով Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի արտահերթ նստաշրջանի որոշումից և այն իրողությունից, որ արցախահայությունը, իրականացնելով ինքնորոշման իր իրավունքը, ԼՂԻՄ-ը հոչակել է անկախ խորհրդային տարածք, ժողովը պահանջում է վավերացնել ԼՂԻՄ-ի Աղրբեջանական ԽՍՀ կազմից զուրս գալը:

3. Միաժամանակ ժողովը հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի և վերջնական լուծումը պահանջում է մարզի միավորումը մայր Հայրենիքին և գտնում է, որ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի

պատմական որոշումն արտահայտում է ողջ Հայ ժողովրդի, այդ թվում նաև ԼՂԻՄ-ի Հայության կամքը:

4. Պահանջել ԽՍՀԿ ԿԿ-ից, ԽՍՀՄ Գերագույն խորհրդից և կառավարությունից շուտափույթ գործուն միջոցներ ձեռք առնել Լեռնային Ղարաբաղի և Աղրբեջանական ԽՍՀ-ի տարածքում բնակող Հայ ազգաբնակչության կյանքի և գույքի անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև մարդի ու ՀԽՍՀ-ի շրջափակումը վերացնելու համար:

5. Ժողովը գտնում է, որ ԼՂԻՄ-ի արմատական Հայ բնակչության շարժումը մայր Հայրենիքին վերամիավորվելու համար ազգային-ազատագրական շարժում է, քանզի Արցախի Հարցը Հայկական Հարցի անբաժան մասն է, իսկ Հայկական Հարցի լուծման Համար մղված պայքարը մշտապես եղել է և մնում է ազգային-ազատագրական:

6. Ղարաբաղյան շարժումը ազգային-ազատագրական է, քանզի արտացոլում է 20-րդ դարի 2-րդ կեսին հատուկ ազատագրական պայքարի ողին, որը հասցեց զաղութափիրության կործանմանը: Աղրբեջանական կողմի թշնամական վերաբերմունքը արցախսահայության արդարացի պահանջի նկատմամբ սոսկ ընդգծում է զարաբաղյան շարժման ազգային-ազատագրական բնույթն իրեն շարժում՝ ուղղված աղրբեջանական զաղութափիրական կայսերապետական քաղաքականության դեմ, որը վայելում է ԽՍՀՄ Կենտրոնական իշխանությունների պաշտպանությունը:

7. Իրեն ազգային-ազատագրական շարժում, որն ունի իր ղեկավարությունը, հանձին լիազոր ներկայացուցիչների համագումարի վերջերս ընտրած Ազգային խորհրդի, զարաբաղյան շարժումն իրավասու է օգնություն խնդրել Համաշխարհային Հանրությունից: Ուստի ժողովը գտնում է, որ ԼՂԻՄ-ի դիմումը ՄԱԿ-ին իրավագոր է և միանում է այդ դիմումին՝ պահանջելով դրա շուտափույթ քննարկում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում:

8. Ժողովը գտնում է, որ եթե ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններն անհրաժեշտ միջոցներ չձեռնարկեն ԼՂԻՄ-ի և Հայաստանի շրջափակումը 24 ժամում վերացնելու համար, սկսած 1989 թ. սեպտեմբերի 17-ի տեղական ժամանակով 00 ժամից,

ապա այդ ղեկարում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունից և կառավարությունից պահանջել, իրեն ԽՍՀՄ սահմանադրության 76-րդ Հողվածի^{*} համաձայն ինքնիշխան պետության մարմիններ և հետևաբար միջազգային իրավունքի սուբյեկտ, դիմել ՄԱԿ-ին, բոլոր երկրների պառամենտներին ու կառավարություններին, խնդրելով՝ Անվտանգության խորհրդում անհապաղ քննարկել ԼՂԻՄ-ի և Հայաստանի շրջափակումը վերացնելու հարցը, իրեն միջազգային իրավունքի նորմերի կողիտ խախտում և ազգային գործողությունն, և ԼՂԻՄ-ի Հարցը մտցնել Գլխավոր ասամբլեայի առաջիկա նստաշրջանի օրակարգի մեջ:

«Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1989 թ.

* Հողված 76-ում նշված է, որ Միութենական հանրապետությունը ինքնիշխան, խորհրդային սոցիալիստական պետություն է, որն այլ խորհրդային հանրապետությունների հետ միավորվել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ:

ԽՍՀՄ Սահմանադրության 73-րդ Հողվածում նշված սահմանումներից զատ Միութենական հանրապետությունը ինքնուրույն է իրականացնում պետական իշխանությունը իր տարածքում:

Միութենական հանրապետությունը ունի ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխանող և հանրապետության առանձնահատկությունները հաշվի առնող Սահմանադրություն:

КОНСТИТУЦИЯ (Основной закон) СОЮЗА СОВЕТСКИХ СОЦИАЛИСТИЧЕСКИХ РЕСПУБЛИК [отрывок взят с сайта <http://www.hist-msu.ru/ER/Etext/cnst1977.htm>]

Принята на внеочередной седьмой сессии Верховного Совета СССР девятого созыва 7 октября 1977 г.

Статья 76. Союзная республика - суверенное советское социалистическое государство, которое объединилось с другими советскими республиками в Союз Советских Социалистических Республик.

Вне пределов, указанных в статье 73 Конституции СССР, союзная республика самостоятельно осуществляет государственную власть на своей территории.

Союзная республика имеет свою Конституцию, соответствующую Конституции СССР и учитывающую особенности республики.

№ 30

ՈՒՍՏՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

Սեպտեմբերի 15-ին համալսարանի մերձակա հրապարակում տեղի ունեցավ ուսանողական հանրահավաք: Ելույթ ունեցողները խոսեցին Արցախում, ինչպես նաև մեր հանրապետության սահմանամերձ շրջաններում ստեղծված լարված իրադրության մասին, արդարացիորեն դժգոհեցին ԽՍՀՄ կենտրոնական կառավարության պասիվությունից՝ հարևան հանրապետության կողմից ԼՂԻՄ-ը, ինչպես նաև Խորհրդային Հայաստանը տնտեսական շրջափակման մեջ առնելու դեմ կոնկրետ միջոցներ չձեռնարկելու համար: Քննարկվեցին ներկա իրավիճակում հանրապետության ուսանողության անելիքները, ծրագրերը:

Ելույթ ունենալով համալսարանի կուսկոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը նշեց, որ ինչպես ողջ հայ ժողովուրդը, այնպիսի էլ համալսարանականները մեծ սպասելիքներ ունեն ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հաջորդ օրը կայանալիք նստաշրջանից, որը քննարկելու է մեր ազգի համար հույժ կենսական հարցեր: Նա հայտնեց, որ նստաշրջանի աշխատանքներից հետո համալսարանականները կրկին կհավաքվեն, կտան նրա գնահատականը, կարտահայտեն իրենց վերաբերմունքը այս կամ այն հարցի քննարկման նկատմամբ: Ապա Յու. Մկրտումյանը ողջունեց հանրապետության երիտասարդական տարրեր ոչ ֆորմալ կազմակերպությունների աստիճանաբար համագործակցման իրողությունը:

Վերջում կազմվեց առաջարկությունների ծրար, որը պետք է ներկայացվեր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանին:

«Երևանի համալսարան», 7 Հոկտեմբերի 1989 թ.

№ 31

ТЕЛЕГРАММА

МОСКВА. КРЕМЛЬ
ПЛЕНУМУ ЦК КПСС

18 сентября 1989 г.

Коллектив Ереванского государственного университета протестует против выступления первого секретаря ЦК Компартии Азербайджана Везирова по программе „Время“ 17 сентября сего года, вводящего в глубокое заблуждение советскую общественность насчет причин и сущности поистине критического, взрывоопасного положения в регионе, способного в каждую минуту перерасти в межнациональную войну. В весьма экспрессивной форме, без тени серьезности, присущей политическому деятелю, тов. Везиров постарался убедить телезрителей, что ныне межнациональными называются фактически конфликты, которые раньше были известны как бытовые. Не упоминая о блокаде, которой подверг Азербайджан НКАО и Армению, в результате чего уже второй месяц по Азербайджанской железной дороге не поступают грузы в Армению, а по ней республика получает около 87 процентов грузов, когда почти иссякли резервы сырья, топлива и продовольствия, в республике свертывается производство, разрушается инфраструктура и почти полностью приостановлены восстановительные работы в зоне бедствия, первый секретарь компартии Азербайджана фарисейски работал за нормальные взаимоотношения между республиками, в частности между Азербайджаном и Арменией.

Мы протестуем также против сообщения в программе „120 минут“ о внеочередной сессии Верховного Совета Армянской ССР, где дело представлялось таким образом, что в нарушении нормального ритма работы, в том числе и в зоне

бедствия, виноваты сами армяне, ибо в нем совершенно не упоминалось о блокаде.

Мы думаем, что Пленум ЦК КПСС, посвященный межнациональным проблемам, не может построить свою работу на подобных лживых и дезинформирующих страну и ее партийное руководство свидетельствах. Даже если они исходят от таких ответственных источников, как члена ЦК КПСС, первого секретаря компартии республики и Всесоюзного телевидения.

Повторяя свой протест, мы настоятельно требуем огласить настоящее письмо на пленуме ЦК КПСС.

От имени коллектива Ереванского госуниверситета

Исполняющий обязанности ректора

профессор Г. А. Гарибян

Секретарь парткомитета Ю. И. Мкртумян

Председатель профкомитета О. В. Мкртчян

Секретарь комитета ЛКСМ А. П. Енгоян

«Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1989 թ.

№ 32

ТЕЛЕГРАММА
ПЛЕНУМУ ЦК КПСС

21 сентября 1989 г.

17 сентября с. г. по Центральному телевидению состоялось интервью первого секретаря ЦК КП Азербайджана А. Х. Везирова. Неискорененному телезрителю вновь преподнесли очередное фарисейство об „интернационализме“ и стремлении азербайджанского руководства к „добрососедским отношениям со всеми, особенно с Арменией“. Между тем, на том же заседании сессии Верховного Совета Азербайджанской ССР, о котором корреспондент ЦТ в течение трех дней пере-

давал информацию по программе „Время“, выступающие депутаты, при полном одобрении всех участников, в том числе и от бюро ЦК КП Азербайджана, призывали к ужесточению блокады НКАО и Армении, а некоторые из них браяцали оружием. Тем не менее, Везиров ни словом не обмолвился об этом, особенно о том, что руководимая им республика ведет необъявленную войну с НКАО и соседней Республикой. Будто бы он не знает, что в результате организованной ими блокады десятки тысяч вагонов со строительными материалами, топливом, продовольствием и другими жизненно важными грузами не пропускаются через территорию Азербайджана. Будто он не знает, что в результате этой блокады создалась крайне критическая обстановка как в НКАО, так и в Армении, особенно в зоне землетрясения. Ведь для него не секрет, что в Баку и в других местах Азербайджана начался новый раунд насилия над армянским населением и погромов их жилищ с одновременным препятствием безопасному выезду в другие районы страны. Не является секретом и то, что в приграничных районах азербайджанские боевики ежедневно совершают набеги, убивают и калечат людей, угояют скот.

Вместо выражения тревоги по этим вопросам, руководитель партийной организации Азербайджана совершенно спокойно, положив руку на сердце и без зазрения элементарной гражданской совести вводил в заблуждение общественность всей страны. Трудно найти оценку проявления такой безнравственности.

Практика давно показала, что полное несоответствие между словом и делом стало традиционным в деятельности лидеров азербайджанского руководства.

Вызывает недоумение заинтересованная последовательность Центрального телевидения в пропаганде политического лицемерия, которое не задумывается над тем, что тем самым оно принимает активное участие в подогревании межнациональной розни, в дальнейшей эскалации создавшейся взры-

воопасной обстановки между соседними народами.

Широкие слои армянского народа возмущены тем, что интенсивно развивающаяся агрессивно-националистическая необузданность определенных кругов Азербайджана и их покровителей в средствах массовой информации не осуждается высшим партийным и государственным руководством страны, чем и подрывается его авторитет.

Просьба огласить текст телеграммы на Пленуме ЦК КПСС.

От имени профессуры Ереванского государственного университета:

Аветисян А. А., Мовсесян Ю. Т., Агаян Э. Б., Овсепян А. А., Амирян С. С., Осипян Л. Л., Ананян Г. Г., Паносян Г. А., Арутюнян В. М., Саакян Г. С., Атаян Э. Р., Саркисян В. С., Вартанян Ю. Л., Талалян А. А., Гарифян Г. А., Тамразян Г. С., Карапетян Л. М., Хуршудян Л. А., Мкртчян Л. М., Чилингяян Ю. С.

«Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1989թ.

№ 33

ТЕЛЕГРАММА

Генеральному секретарю ЦК КПСС
Председателю Верховного Совета СССР

Горбачеву М. С.

21 сентября 1989 г.

Беспрецедентная акция блокады Армянской ССР со стороны Азербайджана, осуществляемая определенными кругами Азербайджанской ССР при попустительстве республиканских и центральных органов власти, привела к расстройству всех сфер жизнеобеспечения Армянской ССР, к

полному прекращению восстановительных работ в зоне бедствия.

Сложившаяся чрезвычайная ситуация требует принятия решительных, действенных мер по восстановлению нормальных условий в деле обеспечения экономической жизни Армянской ССР и ее связей с остальной территорией Союза. Коммунистическая мораль, авторитет партии и союзного правительства страдают от непринятия мер уже в течение нескольких месяцев. Дальнейшее промедление будет чревато катастрофическими последствиями. Вызывает крайнее удивление, что это позорное для нашего общества явление не получило должной политической оценки со стороны прошедшего Пленума ЦК КПСС.

Справедливость требует срочного возмещения ущерба, нанесенного республике блокадой и, в особенности, районам, пострадавшим от землетрясения, выявления и наказания лиц и организаций, ответственных за создание блокадной ситуации.

По поручению партийного комитета
Ереванского госуниверситета секретарь парткомитета
Ю. И. МКРТУМЯН

«Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի 1989թ.

№ 34

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 12-ին Համալսարանի խորհրդի նիստերի դաշտամասում տեղի ունեցած պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հանդիպումը ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, Համալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանի հետ:

Ակադեմիկոս Ս. Համբարձումյանը ներկաներին պատմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընթացիկ նախաշրջանի աշխատանքների մասին, ներկայացրեց Հայաստանից և ԼՂԻՄ-ից

ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների գործունեությունը՝ ուղղված Խորհրդային Հայաստանը և Արցախը Աղբեջանի կողմից տնտեսական շրջափակման ենթարկելու արտառոց երևույթին քաղաքական գնահատական տալուն, ինչպես նաև ԼՂԻՄ-ի հարցի քննարկման արագացմանը։ Նա նշեց նաև, որ Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատները հեռացան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դահլիճից՝ չհամաձայնելով այն բանին, որ շրջափակման հարցի քննարկումը չմտցվեց օրակարգ։

Այնուհետև ակադ. Ս. Համբարձումյանը պատասխանեց ներկաների բազմաթիվ հարցերին։

«Երևանի Համալսարան», 14 հոկտեմբերի 1989 թ.

№ 35

ԽՍՀՄ ԱՐՏԳՈՐԾՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Նոյեմբերի 19-ին կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ծրագրով, իսկ Հաջորդ օրը «Պրավդա» օրաթերթում հրատարակվեց ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրի առաջին տեղակալ Ա. Ա. Բեսսմերտնիխի ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Զ. Մեթլոկին արված հայտարարությունը ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ ընդունած բանաձեռի կապակցությամբ։ Այդ հայտարարությունը բողոքի մի նոր ալիք բարձրացրեց մեր հանրապետությունում։ Մենք փաստորեն նորից կանգնեցինք մի առեղծվածի առջև։ Ի՞նչ բանաձեռ են ընդունել ԱՄՆ-ի օրենսդիրները, ինչպես են փորձել միջամտել ԽՍՀՄ-ի ներքին գործերին, որ այդպես բորբոքել են մեր երկրի սուվերեն ժողովուրդների զայրույթը։ Անմիջապես առաջացած այս հարցերի պատասխանները գտնելու աշնույս փորձերը հան-

գեցրին եթե ոչ բոլոր ժողովուրդների, ապա գոնե հայ ժողովրդի շահերի ոտնահարմանն ու անտեսմանը։

ԽՍՀՄ արտգործմինիստրության այդ հայտարարությանը չէին կարող անտարբերությամբ վերաբերվել նաև մայր կրթօջախի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողությունը։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Պատմության ֆակուլտետի ղեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ) – Մեր արտգործմինիստրության նոյեմբերի 19-ի հայտարարությունը առաջին հերթին զարմանք առաջացրեց։ Պարզ դարձավ, որ մենք՝ Հայերս, խորհրդային մյուս ժողովուրդների հետ միասին բողոքում ենք մի անհասկանալի, անորոշ ու անիմանալի իրողության դեմ։ Հարց է առաջանում. բանական արարածը, եթե նա հոգեպես խեղված չէ, ինչպես կարող է առանց պատճառի զայրանալ կամ հրճվել։ Ժողովուրդների մեկ անգամ ևս ցույց տվեց, որ ԽՍՀՄ արտգործմինիստրությունում դեռևս ղեկավարվում են պատմությունից հայտնի հին մեթոդներով, այսինքն՝ ամեն ինչ որոշում և իրականացնում են առանց ժողովրդի կարծիքը հաշվի առնելու։ Ճիշտ այդ մեթոդներով դեռևս 1921 թ. Հայաստանը բաժանեցին Թուրքիայի և Աղբեջանի միջև, այլ կերպ 1953-ին առանց հայ ժողովրդի կարծիքը հաշվի առնելու հայտարարեցին, թե Հայաստանը հարժարվում է իր արևմտյան մասի տարածքներից։

Դե ինչ, մնում է եղբակացնել, որ այս անգամ արդեն մի նոր շղարշի տակ փորձ է արվում բզկտել Հայաստանն ու վիրափորել մեր ժողովրդին և դա այն դեպքում, երբ նրան սկսել են հավատացնել, թե իրավական պետություն են ստեղծում։

Փորձենք հարցին մոտենալ նաև մեկ այլ տեսանկյունից։ Ընդունենք, որ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի հիշյալ բանաձեռ իրոք միջամտություն է (թեև ամեն ինչ չէ, որ կոպիտ միջամտություն կարելի է համարել ու սառը պատերազմի լեռանկարով սպառնալ) մեր ներքին գործերին։ Այդ դեպքում էլ անհամեշտ էր հրապարակել նաև ԱՄՆ-ի օրենսդիրների ընդունած որոշումը։ Եվ եթե այնտեղ որևէ խոսք լիներ լեռնային Ղարաբաղի հարցը ձգձգելու վերաբերյալ մենք ստիպած կլինենք միայն ընդունել և ողջունել նման որոշումը։

Վերջում ցանկանում եմ լրնղգծել, որ մեր ժողովուրդը պայքարում է և կշարունակի պայքարել Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության պահանջին արդարացի լուծում տալու համար, անկախ այն բանից, թե ինչ կորոշի ԱՄՆ-ի սենատը, կամ թե ինչ պատասխան կտա ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունը:

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ (Իրավաբանական ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ) – Ցավով պետք է նշեմ, որ մեր արտգործմինիստրության հայտարարության մեջ ոչինչ չկա նշված ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի բանաձեռնության մասին, և ես ստիպված եմ խոսել ենթադրություններով: Նախ և առաջ վրդովմունք է առաջացնում մեր կառավարության փորձը՝ խոսելու բազմազգ երկրի ժողովուրդների անունից, այն դեպքում, երբ միայն իրեն է հայտնի խնդրո առարկա բանաձեռնությունը: Անելով այդ հայտարարությունը, մեր կառավարությունը անտեսում է մի հանգամանք ևս: Բանն այն է որ, եթե ՄԱԿ-ի կանոնադրությունն ընդունած և միջազգային բոլոր իրավական ակտերը ստորագրած երկու երկրներից մեկը առաջարկություն է անում մյուսին այս կամ այն հարցը տվյալ երկրի ներսում լուծելու ուղիների վերաբերյալ, դա իրավական տեսակետից ներքին գործերին միջամտելու փորձ համարել հանրավոր չէ: Այնպես որ այս երկու հանգամանքներն էլ հենց ավելի շատ բողոք են առաջացնում ոչ թե ԱՄՆ-ի սենատի որոշման, այլ ԽՍՀՄ արտգործմինիստրության հայտարարության դեմ:

Ի. ԲԱԼՅԱՆ (Սոցիալիզմի տեսության ամբիոնի վարիչ, դոցենտ) – Ինձ հայտնի չէ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի ընդունած բանաձեռնությունը, և այն միջազգային իրավական նորմերի խախտում համարել չեմ կարող:

Կարդալով ԽՍՀՄ արտգործմինիստրության հայտարարությունն անմիջապես զգում եմ հին ձևակերպումների ողջ դինանոցը, որի օգնությամբ ոչ միայն թաքցվում է ճշմարտությունը, այլև ոտնահարվում են մարդու (տվյալ դեպքում ԽՍՀՄ ժողովուրդների) իրավունքները, որոնց պաշտպանությունը համարվում է մեր երկրի քաղաքականության հիմնաքարը: Ես այն

կարծիքին եմ, որ նման հայտարարությունը հանգիստ խղճով կարելի է համարել միջազգային իրավական նորմերի խախտում, այն կարելի է համարել նաև քայլ, որ լուրջ հարված է հասցնում մեր ֆեղերացիայում նոր-նոր վերականգնվող ազգամիջյան նորմալ, մարդկային հարաբերություններին:

Նման հայտարարությունը այն իրողության վառ ապացուցն է, որ մեր երկրում դեռևս չի վերացված ժողովուրդների ինֆորմացիոն բլոկադան, որն ավելի վտանգավոր է, քան տնտեսականը, ավելի ճիշտ դեռևս գոյություն ունի դեղինֆորմացիան, որն անորոշ վիճակի մեջ է պահում ժողովուրդներին:

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ (Քիմիական ֆակուլտետի դեկանի տեղակալ, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ) – 1988 թ. փետրվարից այս կողմ ես առաջին անգամ իմացա, որ կենտրոնական իշխանությունները ջանք ու եռանդ չեն խնայում Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության պրոբլեմը լուծելու համար: Եվ դա չնորհիկ ԽՍՀՄ արտգործմինիստրության նոյեմբերի 19-ի հայտարարության: Ինչո՞վ ուրեմն բացատրել Արցախի հարցի այս ձգձգումը, եթե ոչ ուղիղություն լարվածությունը պահելու մեջ շահագրգիռ կողմերի առկայությամբ:

Բացի այս, հիշյալ հայտարարության մեջ խոսվում է նաև այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի հարցն առանձնապես նրբանկատ ու պատասխանատու մոտեցում է պահանջում: Ի՞նչ նրբանկատ մոտեցման մասին է խոսքը, երբ հայ ժողովրդի երեսին մինչև օրս միայն սումգայիթ, խոջալու և շրջափակում են շպրտել ու հոգ էլ չեն տանում այդ արտառոց իրողությունների մեղավորներին պատմելու մասին:

Այս հայտարարության մեջ ի լուր աշխարհի խոսվում է նաև այն մասին, թե հարցը լուծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ գործոններ: Պարզապես ապշել կարելի է: Նման հարց լուծելու պատմական փաստաթղթերից ու ժողովրդի կամքից բացի ուրիշ ի՞նչ գործոններ են պահանջվում:

Ցանկանում եմ նաև ափսոսանք հայտնել այն առիթով, որ այս հայտարարությամբ խորհրդա-ամերիկան հարաբերությունների հետագա լավացումն ու խորացումը բերվում կապվում է արցախահայության պրոբլեմին: Նման քայլը շատ ավելի

ցցուն է դարձնում պրոբլեմը և վաստ վիճակի մեջ դնում հայ ժողովրդին՝ մեր երկրի մյուս ժողովուրդների առջև:

Ցավալի է, որ ԽՍՀՄ արտգործմինիստրության այս հայտարարությունը նորից ապակայունացրեց առանց այն էլ ոչ հաստատուն իրավիճակը ուսումնական գործընթացում և բացասական աղղակ կարող է հանդիսանալ քննաշրջանից առաջ:

Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ (Ֆիզիկայի ֆակուլտետի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար) – Մեր ուսանողությունը զայրույթով ընդունեց ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության ս. թ. նոյեմբերի 19-ի հայտարարությունը՝ ուղղված ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովին ԽՍՀՄ ժողովուրդների անունից: Կոմերիտականների խորին համոզմամբ հարկ չկար ԱՄՆ-ի կոնգրեսի կոմպետենտ օրգանի առջև բացելու ճացման ժամանակների պիտակների ողջ գինանոցը, երբ այդ պիտակներից շատերը կարելի է օգտագործել բնութագրելու համար Արցախի հարցում ԽՍՀՄ իշխանությունների անվճուական ու կաշկանդված քայլերը:

Ինքնորոշման բնագավառում ԽՍՀՄ ժողովուրդների ղեմոկրատական տարրական իրավունքներ չափահովելու պայմաններում մեր երիտասարդությունը և հատկապես ուսանողությունը հակված են հույս դնելու համայն աշխարհի առաջադեմ ուժերի, այդ թվում նաև ԱՄՆ-ի կոնգրեսի վրա:

Նյութը պատրաստեց Էդ. Անդրեասյանը
«Երևանի համալսարան», 25 նոյեմբերի 1989 թ.

№ 36

ՀԱՅՈՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

(Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր ժողովը)

Նոյեմբերի 17-ին սկսվեց և երեք օր (20-ին ու 24-ին) տևեց երեսնի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին նաև ուսումնաօժանդակ կազմի ու վարչատնտեսական մասի ներկայացուցիչները: Ժողովը հրավիրվել էր համալսարանի ուկտորատի, կուսկոմիտեի և արհկոմիտեի նախաձեռնությամբ: Այն քննարկեց «Սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը հանրապետությունում և համալսարանի մտավորականության խնդիրները» հարցը, որի շուրջ բացման խոսքով հանդես եկավ կուսկոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը:

Նա ընդգծեց, որ մայր բուհի վերջին հինգ տասնամյակների պատմության մեջ առաջին անգամ է հրավիրվում համալսարանի դասախոսների ընդհանուր ժողով, և դա թելազրված է հանրապետությունում ստեղծված իրավիճակով: Մեր օրերում, երբ շատ ոչ ֆորմալ կազմակերպություններ արդեն ունեն իրենց ծրագրերը և ազգօգուտ գործ են կատարում, համալսարանի կոլեկտիվը ևս պետք է լրջորեն մտածի մեր ազգի կարող ուժերը համախմբելու մասին, իր մոտեցումն ունենա մեր ժողովրդին հոգող հարցերի նկատմամբ: Դա հնարավոր է անել ոչ թե պառակտվելու ու միմյանց քննադատելու, այլ միայն միավորման շնորհիվ: Եվ ես ցանկանում եմ, որ մեր զրույցը լինի հենց միավորման տարրերակների շուրջը, ասաց Յու. Մկրտումյանը:

Այնուհետև տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին և հայոց համազգային շարժման վերաբերյալ իրենց կարծիքներն ու վիճակարույց տեսակետները արտահայտեցին հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Խուրշուղյանը, տնտեսագիտական կիրեռնետիկայի ֆակուլտե-

տի դոցենտ Մ. Սահակյանը, խորհրդահայ գրականության ամբիոնի դոցենտ Ա. Ավագյանը, ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ Ա. Մկրտչյանը, արտասահմանյան ուսանողների և ասպիրանտների համար ոռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, դոց. Ս. Զոլյանը, Փիզիկայի ֆակուլտետի դոցենտ Դ. Վարդանյանը, պետական, վարչական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ Վ. Հովհաննիսյանը, գիտական աշխատանքների գծով պրոռուեկտոր, պրոֆ. Լ. Կարապետյանը, տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Յու. Մովսիսյանը, փիլիսոփայության պատմության ամբիոնի պրոֆեսոր Հր. Միրզոյանը, պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի դոցենտ Ա. Գևորգյանը, մեխանիկայի ֆակուլտետի դոցենտ Գ. Բարձանյանը, ինժեներական հոգեբանության լաբորատորիայի ավագ գիտաշխատող Ա. Սադոյանը, համակարգերի տեսության ամբիոնի վարիչ, դոց. Ա. Չուբարյանը և ուրիշներ:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին նաև ժողովում ներկա գտնվող այլ բուհերի դասախոսներ ու ոչ ֆորմալ կազմակերպությունների անդամներ՝ պրոֆ. Ֆ. Սաֆարյանը, Ի. Մուրագյանը, Էդ. Սարգսյանը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները, խոսելով մեր հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի շուրջ, քանից անդրադասն հայ ժողովրդին հուզող ամենակենսական հարցերին: Նրանք լուրջ մտահոգություն հայտնեցին Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության հետագա ճակատագրի և մայր բուհի կողեկտիվի ձեռնարկելիք միջոցառումներին կշռադատված ուղղություն տալու հետ կապված դժվարությունների կապակցությամբ: Այն միահամուռ կարծիքը հայտնվեց, որ ամեն գնով պետք է խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի Խնքնավար Մարզում թուրք ազգաբնակչության տեսակարար կշիռը արհեստականորեն մեծացնելու աղբբեջանական իշխանությունների կամայականություններին և ղեռ ավելին, մշակել պետական միջոցառումների պլան, որով հնարավորություն կտրվի Հայաստանում բնակվող նախկին արցախցիներին և Աղբբեջանից բռնագաղթած շատ հայ ընտանիքների տեղափոխելու և բնակություն հաստատելու Լեռնային Ղարաբաղում:

Ելույթ ունեցողները խոսեցին նաև աղետի գոտու պրոբլեմների, Հայկական ԽՄՀ Գերագույն խորհրդի ղեպուտատների առաջիկա ընտրությունները լրիվ դեմոկրատիայի, Հրապարակայնության պայմաններում անցկացնելու, հանրապետությունն ազատ ձեռներեցության գոտի դարձնելու մեխանիզմների մշակման անհրաժեշտության և շատ այլ հարցերի մասին:

Լուրջ ու համակողմանի քննարկման առարկա դարձան Հայոց համագային շարժման առաջին համագումարի արդյունքները: Այս հարցի կապակցությամբ ելույթ ունեցողները, նշելով համագումարի աշխատանքներում և նրա ընդունած որոշման մեջ տեղ գտած որոշ թերություններ, այն հիմնական կարծիքն արտահայտեցին, որ ՀՀՆ համագումարը առաջին փորձն էր միավորելու հայկական տարրեր կուսակցությունները, շուրջ 60 հասարակական ու ոչ ֆորմալ կազմակերպությունները: Համալսարանը, ուր հայ մտավորականության մեջ պոտենցիալ է կուտակված, պետք է ողջունի ՀՀՆ-ի ստեղծումն ու ամեն կերպ աջակցի նրա աշխատանքներին:

Ժողովը քննության առավ նաև համալսարանում ներքին կարգապահության մի շարք հարցեր: Մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմին կոչ արեց միավորելու ուժերը, ինչպես մեր ուսանողներից իսկական հայրենանվեր մասնագետներ պատրաստելու, այնպես էլ հանրապետության կյանքում վճռորոշ նշանակություն ունեցող պրոբլեմների լուծման գործում:

Բուռն ու բանավիճային մթնոլորտում անցավ որոշման նախագծի քննարկումը, որը տևեց երկու օր: Որոշման նախագծի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկություններն արեցին բազմաթիվ համալսարանականներ: Դրանք խմբագրական հանձնաժողովի կողմից խմբավորվեցին ու մտցվեցին որոշման նախագծի մեջ: Եվ այդ ամենից հետո նոր միայն քննարկվեց և ժողովի կողմից ընդունվեց ընդունվեց ընդունվեց:

«Երևանի համալսարան», 9 դեկտեմբերի 1989 թ.

ՄԻԱԿՈՂՄԱՆԻ, ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՈՐՈՇՈՒՄ

(բողոքի միտինգ երևանի պետական համալսարանում)

Նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ երևանի պետական համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվի բողոքի միտինգը, որը նվիրված էր «Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերազույն խորհրդի որոշման քննարկմանը:

Միտինգը բացելով, կուսկոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը նշեց, որ երեկ՝ նոյեմբերի 28-ին, ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նստաշրջանը որոշում է ընդունել Արցախի մասին, որը միակողմանի է, չի բխում հայ ժողովրդի շահերից, կրում է հակահայկական հակաժողովրդական բնույթը:

«Պրավդայի» նույն օրվա համարում տպագրված այդ որոշումը միտինգի մասնակիցներին ներկայացրեց պատմության Փակուտետի կուսարցույթի քարտուղար Ա. Միմոնյանը:

Այնուհետև, շարունակելով իր խոսքը, Յու. Մկրտումյանը ասաց, որ հայ ժողովուրդը արդեն երկու տարի է, ինչ պայքարում է իր արդարացի պահանջների իրականացման համար: Եվ ահա, այդ ամենից հետո, ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նստաշրջանը ընդունում է այսպիսի խայտառակ որոշում: Երևանի պետական համալսարանի կոլեկտիվը բողոքում է այդ որոշման դեմ, պահանջում այն բեկանել: Այդ որոշումը ոտնահարում է ոչ միայն Ղարաբաղի հայկական մարդի հայ ազգաբնակչության, այլև ողջ հայ ժողովրդի շահերը:

Այնուհետև ձայնը տրվում է հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Խուրշույզանին:

- Ժողովուրդների կյանքում լինում են պահեր,- ասաց նա, - որոնք բախտորոշ ու ճակատագրական նշանակություն են ունենում: Այսօր հայ ժողովրդի համար այդպիսի պահերից մեկն է: Մեր ժողովուրդն արդեն քսան ամսից ավելի պայքարում, իր ար-

դարացի բողոքն է բարձրացնում յոթանասուն տարի տևած անարդարության դեմ: Եվ մենք այսօր, ի պատասխան մեր ազգային պահանջների, մեր երկրի բարձրագույն մարմնից ստանում ենք այսպիսի հակասազգային, հակահայկական որոշում, որը չի բխում ազգային հարցի լուծման դեմոկրատական հիմունքներից: Մենք որևէ ակնկալիք այլևս չունենք, կամ պետք է հրաժարվենք Լեռնային Ղարաբաղից, կամ պետք է միակամ, մեկ մարմին դարձած պայքարենք մինչև վերջ ու հաղթանակենք: Մենք պետք է չընդունենք երեկվա որոշումը, մենք պետք է մեր անվտահությունը հայտնենք երկրի ղեկավարությանը և չճանաչենք նրա թելաղրանքով ընդունած որոշումը:

Հայ ժողովուրդը արդարացի է, նրա պահանջը՝ օրինական: Մենք պետք է ունենանք մեր հստակ ծրագիրը, որով կարելի կիմին մեր ժողովրդին հանել այս ճգնաժամային վիճակից, իր ելույթի վերջում ասաց պրոֆ. Լ. Խուրշույզանը:

Միտինգում ելույթ ունեցան նաև կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկան, դոց. Ռ. Տոնոյանը, սոցիալիզմի տեսության ամբիոնի վարիչ, դոց. Ի. Բայրանը, պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Հովսեփյանը, պետական, վարչական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ Վ. Հովհաննիսյանը և ուրիշներ:

Նրանք միահամուռ կերպով դատապարտեցին ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նստաշրջանի որոշումը, իրենց գոհունակությունը հայտնեցին և հավանություն տվեցին Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների կողմից, ի նշան բողոքի, ս. թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նստաշրջանից հեռանալու ակտին:

Ելույթ ունեցողները ասացին, որ պետք է անհապաղ հրավիրել Հայաստանի կոմկուսի կենտրոնի արտահերթ պիենում և ՀԽՍՀ Գերազույն խորհրդի նստաշրջան: Նրանք միաժամանակ կոչ արեցին հայ ժողովրդին միավորել բոլոր ուժերը և մինչև վերջ պայքարել իր ոտնահարված իրավունքների վերականգնման, Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծման համար:

Միտինգում նշվեց, որ ոեզիոնում դրությունը կարելի է կարգավորել միայն մայր հայրենիքից անջատված Լեռնային Ղար-

բաղի ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորումով:

Միտինգում կոչ արվեց դիմել միջազգային կազմակերպություններին, ներքին և արտաքին սփյուռքի ամբողջ Հայությանը՝ Համախմբվել և միահամուռ ուժերով օգնել, օժանդակել Խորհրդային Հայաստանին ու Հայ ժողովրդին՝ ներկա ծանր վիճակից դուրս գալու համար:

Միտինգը ընդունեց համապատասխան որոշում:

«Երևանի համալսարան», 2 դեկտեմբերի 1989 թ.

№ 38

**ՀՐԱՊԱՐԱԿԱՑՆՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՊԱՀԱՆՁՈՒՄ
ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Մ. Ա. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ԼՂԻՄ-ԻՑ
ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ**

Հենց այս կամ այն պրոբլեմը փակ դռների հետևում քննարկելու գաղափարը ինքնըստինքյան արատափոր է և հակասում է վերակառուցման ճարտարապետների կողմից հոչակվող հրապարակայնությանը:

Մենք չենք կարողանում հասկանալ և ընդունել այս անգամ էլ Լեռնային Ղարաբաղի արյունալի պրոբլեմը փակ նիստում քննարկելու համագումարի ղեկավարության որոշումը: Փորձը ցույց է տալիս, որ փակ դռների հետևում, որպես կանոն, արդարացի որոշումներ չեն ընդունվում: Ասենք նաև ինչու պետք է հայ ու աղբբեջանական ժողովուրդներից և երկրի ամբողջ հասարակայնությունից թաքցնել արեստականորեն բարդացված պրոբլեմի լուծումը: Զէ՞ որ ԼՂԻՄ-ի պրոբլեմը ոչ միայն երկու հակադիր ժողովուրդների, այլև հակասություններով բգկտվող մեր ամբողջ երկրի պրոբլեմն է: Հրապարակայնությունը բեղմնավոր է հենց այն պատճառով, որ ենթադրում է ազնվություն: Ոչ մի բարձր քաղաքական նկատառումներ չկան և չեն կարող լինել հօգուտ դռնփակ գաղտնի որոշումների: Ցավոք սրտի, արդեն նորմա է դառնում, որ դարաբաղյան հարցի քննարկման ժա-

մանակ դահլիճից հեռացվում են լրագրողները, իսկ նրանց հետ միասին նաև՝ հրապարակայնությունը:

Երևանի պետական համալսարանի կոլեկտիվը Հայաստանի ղեպուտատներից պահանջում է հասնել այն բանին, որ դարարացյան պրոբլեմը քննարկվի բացահայտ: Զէ՞ որ առանց այն էլ քիչ չեն արյունահեղությունները կեղծ լուրերի և չստուգված տեղեկությունների պատճառով: Պետք է վերջ տալ ժողովուրդների ճակատագիրը գաղտնի վճռելու՝ հոգատարությամբ պահանվող ստալինյան սիստեմին:

Միայն հրապարակայնությունը և բացախոսությունը կարող է նպաստել հարցի արդարացի լուծմանը: Ուստի մենք ճիշտ չենք համարում ԼՂԻՄ-ից և Հայաստանից ընտրված պատգամավորների մասնակցությունը գաղտնի, դռնփակ նիստերին: Մենք մուժ, գաղտնի հարցեր չունենք:

Երևանի պետական համալսարանի կոլեկտիվ

«Երևանի համալսարան», 23 դեկտեմբերի 1989 թ.

1990

№ 39

ՆԱՄԱԿ ԱՐՁԱԽԻՑ

Արցախի հայությունը դժվարին օրեր է ապրում: Շրջափակումը և ոտնձգությունները ծանր վիճակի են հասցրել շատ զուղերի: Մայր Հայաստանը շարունակում է հնարավորին չափ օգնություն ցույց տալ իր զավակին: Այդ գործում իր մասնակցությունն ունեն համալսարանի կոլեկտիվը, նրա առանձին օղակները:

Արցախահայությանը սննդամթերքով օգնելու նախաձեռնության հեղինակներ են նաև աշխարհագրական ֆակուլտետի ուսանողները, որոնք ֆակուլտետի ողջ կոլեկտիվի կամավոր հանգանակությամբ հավաքած գումարով գնել և [1989 թ.] նոյեմբերի սկզբին ԼՂԻՄ-ի Մարտունու շրջանի Հաղորտի գյուղ են տեղափոխել 1 տոննա այցուր և 1 տոննա շաքարավագ:

Վերջերս ֆակուլտետի ուսանողները [«Երևանի համալսարան» թերթի] խմբագրություն բերեցին գյուղի ղեկավարությունից ստացված մի նամակ, որտեղ արցախցիներն իրենց շնորհակալական խոսքն են հղել համալսարանականներին՝ ցույց տրված օգնության համար:

Տպագրում ենք այդ նամակը*:

«Հաղորտի գյուղի աշխատավորները, հայ ժողովրդի, արցախահայության հետ միասին, ապրում են տապնապի, հույսի, հավատի, շրջափակման, չհայտարարված պատերազմի ժամանակներ: Մեկ անգամ չեն, որ հայ ժողովուրդը, արցախահայությունը դիմակայել են դաժան փորձություններին: Մենք կարծում ենք,

որ դարասկզբի փորձությունները չեն կրկնվի դարավերջին: Ինչեւ: Եղան դաժան իրողություններ՝ Սումգայիթի, Կիրովարագի, Խոջալուի ոճրագործություններ, արդարության համար պայքարի ժամանակներում՝ անարդարություններ, հրապարակայնություն: Մեր օրերի իրողությունները ճակատագրական իրողություններ են: Վերակառուցման, զեմոկրատիայի, հրապարակայնության ենթադրյալ արդար ֆոնի վրա, համայն աշխարհին արցախահայությունն իր արդար վճիռն է ներկայացրել՝ վերամիավորվել մայր ժողովրդի հետ, ապրել կապանքներից ազատ, ապագայի նկատմամբ հավատով: Դա հաստատված է ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի նստաշրջանի հայտնի որոշմամբ: Մենք կղիմանանք կացության փորձություններին: Մեզ համար հեշտ չէ ընդարձակ աղետի գոտի ունեցող, բազմահազարանոց փախստականների հոգսերի ժամանակներում Մայր Հայաստանից սննդամթերք ընդունելը: Այստեղ արցունքն ու ժպիտը միախառնվում են: Խորապես չնորհակալ ենք ուշադրության համար: Գյուղին ուղարկված մեկ տոննա շաքարավագը և մեկ տոննա ալյուրը ամբողջապես բաշխվել է գյուղի բնակիչներին հանձնաժողովի միջոցով: Դա եղավ այն բանի ապացույցը, որ մենք բռունքք ենք, որ արցախյան արդար պայքարում են մի ամբողջ ազգ, արդար ուժեր*: Նեշտում ենք, որ նյութապես կղիմանանք: Մեզ մտահոգում է արցախյան պրոբլեմի քաղաքական լուծման հնարավորության արագ իրականացումը:

Մենք ցանկանում ենք, որ ձեր ամբողջ հոգեսոր ջանքերը նպատակամղեք հենց այդ խնդրին, որից կախված է ոչ միայն մեր ապրելակերպը, այլև գոյատեսումը: Նորից խնդրում ենք, չմտածել մեր առօրյա ապրելակերպի նյութական կողմի մասին: Կրկին շնորհակալություն: Մենք նույնիսկ հնարավորություն ունենք նման կարգի օգնության ձեռք պարզել մեր հայրենակիցներին, որոնք անշափ մտահոգված են արցախահայության ճակատագրով»:

«Երևանի համալսարան», 6 հունվարի 1990 թ.

* Տեքստում այդպես է:

* Նամակը տեղադրել ենք ըստ թերթի տպագրման ամսաթվի:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի կուսակցական կոմիտեի հերթական նիստը, որը նվիրված էր համալսարանի կուսակցական կազմակերպության և կոլեկտիվի անդամների անհետաձգելի անելիքներին:

Առաջինը քննարկվեց «ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպությունը ՀԿԿ-ի մեջ ընդունելու մասին» հարցը, որի շուրջ ելույթներ ունեցան կուսկոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը, պետական, վարչական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ Վ. Հովհաննիսյանը, կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, դոց. Ռ. Տոնոյանը, XX դարի քաղաքական պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Ամիրյանը, Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Խուրշույանը, նույն ամբիոնին կից Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի վարիչ, դոց. Բ. Հարությունյանը:

Արտահայտելով Հայ ժողովրդի արհեստականորեն տրուկված երկու հատվածների կամքը՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի միացյալ նախաչռջանը 1989 թ. դեկտեմբերի 1-ին Հոչակեց ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի վերամիավորումը, նշեցին նրանք: Պատմական որոշմանը հաջորդած շրջանում անհրաժեշտ գործնական քայլեր են կատարվել վերամիավորման փաստացի իրականացման ուղղությամբ: Այսօր ԼՂԻՄ-ի շատ հիմնարկներ և ձեռնարկություններ արդեն սերտաճել են իրենց բնագավառում գործող Հայկական ԽՍՀ-ի համապատասխան հիմնարկների հետ: ԼՂԻՄ-ի կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները միավորվել են ՀԼԿԵՄ-ին և ՀԱՄԽ-ին, տեղի է ունեցել ստեղծագործական միությունների միավորում: Նման պայմաններում տրամարանական և օրինական է հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հազարավոր կուսակցականների առաջարկը արագ կերպով լուծելու ԼՂԻՄ-ի ԽՄԿԿ մարդային կուսակցական կազմակերպության և Հայաս-

տանի կուսակցական կազմակերպության միավորման հարցը: Ենելով ստեղծված վիճակից, ելույթ ունեցողները նշեցին, որ ՀԿԿ-ի և ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպությունների միավորման հետագա հապաղումը է հանրապետության երկու հատվածների սերտաճման գործընթացին, ուստի միավորումն իրականացնելու համար նպատակահարմար է հրավիրել ՀԿԿ կենտկոմի և ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպության արտահերթ միացյալ պլենում:

Երկրորդ հարցը նվիրված էր Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության խնդիրներին՝ կապված ՀԿԿ XXIX համագումարի նախապատրաստության և կուսակցության առաջիկա վերակառուցման ու նորացման հետ: Ելույթներ ունեցան բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ. Անանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Գ. Ղարիբյանը, տնտեսագիտական կիրեռնետիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Յու. Մովսիսյանը և ուրիշներ:

Նրանք նշեցին, որ Հայաստանի կոմկուսը ԽՄԿԿ-ի անրաժան մասն է, նրա մեջ մտնող հանրապետական կազմակերպություն, որը չունի իր կանոնադրությունն ու ազգային ծրագիրը, իր առանձին անդամատոմար: Այնինչ, հանրապետության կոմկուսի ինքնուրույնությունը, ասացին նրանք, առաջին հերթին պետք է փաստվի իր ազգային ծրագրով ու ինքնուրույն կանոնադրությամբ: Սրանք լուրջ խնդիրներ են, ընդգծեցին ելույթ ունեցողները, որոնք պետք է քննարկվեն առաջիկայում տեղի ունենալիք ՀԿԿ XXIX համագումարում: Այդ կապակցությամբ առաջարկվեց Համալսարանի 26 սկզբնական կուսկազմակերպություններում անցկացնել ժողովներ ու քննարկել այդ հարցերը: Դրանից հետո Հայկական Երևանի պետական համալսարանի կուսկազմակերպության ընդհանուր ժողով և ժողովի որոշումներն ու նյութերը ներկայացնել Հայաստանի կոմկուսի կենտկոմ՝ համագումարում քննարկելու համար:

Քննարկվեց նաև «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ժողովրդական դեպուտատաների առաջիկա ընտրությունները և Համալսարանի կոլեկտիվի ու կուսակցական կազմակերպության խնդիրները» հարցը:

Նիստում ԽՍՀՄ բուհերի կուսակցական կոմիտեների քարտուղարների համամիութենական խորհրդակցություն հրավիրելու մասին հաղորդում տվեց կուսակոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը:

Կուսակցական կոմիտեի քննարկած բոլոր հարցերի առթիվ ընդունվեցին համապատասխան որոշումներ՝ ուղղված հանրապետական կուսակցական ու պետական վերադաս մարմիններին:

«Երևանի համալսարան», 20 հունվարի 1990 թ.

№ 41

ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՅՍ

Աղբբեջանից նորից ցավալի լուրեր են գալիս տեղի հայերի նկատմամբ կիրառվող վայրագությունների մասին: Ի տարբերություն Սումգայիթի նախաձիրի, որի կազմակերպիչներն այդպես էլ մնացին ստվերում, այս անգամ ամեն ինչ կատարվում է բացեիրաց, օրը ցերեկով, «Աղբբեջանի ժողովրդական ճակատ» հորջորջվող ավագակային կազմակերպության միջոցով: Այդ կազմակերպության ղեկավարությամբ ոչնչացվեցին խորհրդանական սահմանային կառուցվածքները, դրանից առաջ իրականացվեց Հայաստանի շրջափակումը, որը դեռ լիովին չվերացված, նորից սկսվեց առավել սաստկությամբ: Այս բոլորը կատարվում է Աղբբեջանի խորհրդային իշխանությունների աշքի առջև, և անկախ այն բանից, այդ իշխանությունները դրանց հավանություն են տալիս, թե ոչ, նրանք լիակատար պատասխանատվություն են կրում տեղի ունեցածի համար:

Այն, ինչ այսօր կատարվում է Աղբբեջանում՝ Բաքվում, Շահումյանի շրջանում, Գետաշենում, Հիշեցնում է քարե դարի քարանձավային նիստուկացը, և Հարկ չկա, իհարկե, այսքանից հետո խոսելու բարոյականության մասին, որովհետև մեր հարեանների և նրանց ամեն տեսակ այսպես կոչված ղեկավարնե-

րի ականջներին դա, անշուշտ, չինարեն կհնչի:

Ցավալին այն է, որ նույնիսկ այս պայմաններում կենտրոնական իշխանությունները հարկ չեն համարում կամ կրկին «մոռանում են» ցավակցություն հայտնել մեր ժողովրդին՝ տասնյակ (տասնյակ) զոհերի համար. արդյոք դա պատահականություն է: Տարօրինակ է և այն, որ մոսկովյան ղեկավարները հանցագործի ձեռքը բռնելու և նրան պատժելու փոխարեն օկուպացիոն խիստ ռեժիմ են հաստատում Արցախի՝ արդեն երկու տարի հալածանքի, բարոյական ու ֆիզիկական շրջափակման ենթարկված հայ ազգաբնակչության համար:

Համընդհանուր հիասթափություն և խորհրդային կարգերի հանդեպ հավատի լիակատար կորուստ. աշա այն ամենը, ինչը բնորոշ չէր մեր ժողովրդին սրանից ընդամենը երկու տարի առաջ, աշա այն ամենը, ինչը արդյունք է կենտրոնական իշխանությունների կողմից մեր ժողովրդի արդար պահանջների և օրինական իրավունքների ուժնահարման:

Այո, հայ ժողովուրդը հիասթափված է, բայց ոչ հուսալքված: Նա մի բան է գիտակցում միայն, այն որ իր պայքարն արդար է, հաղթանակը՝ անխուսափելի:

Մառեն Հովհաննիայան,
Պատմության ֆակուլտետի ղեկան, դոցենտ
«Երևանի համալսարան», 20 հունվարի 1990 թ.

№ 42

ՎԵՐՋ ՏԱԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (Երևանի պետական համալսարանի ակտիվի ժողովում)

Հունվարի 18-ին խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության, ինչպես նաև կուսակցական ու հասարակական կազմակերպությունների ակտիվի ժողովը: Այն ներածական

խոսքով բացեց կուսկոմիտեի քարտուղար Յու. Մկրտումյանը: Նա ներկաներին ծանոթացրեց նիստի օրակարգին, այն է՝ Աղրբեջանական ԽՍՀ մի շարք շրջաններում ու Բաքվում ստեղծված ծանր իրավիճակի և ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության ս. թ. Հունվարի 15-ի՝ ԼՂԻՄ-ում և նրան հարող մի քանի այլ շրջաններում արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրի քննարկումը:

Ելույթ ունեցողը ներկայացրեց ստեղծված տագնապալի իրադրությունը, նա խոսեց Բաքվում մինչև այսօր շարունակվող ջարդերի ու սպանությունների, հայ ազգաբնակչության անելանելի վիճակի մասին, տվեց որոշ նոր տեղեկություններ: Հակիրճ ներկայացնելով համալսարանի կիրառական մաթեմատիկայի և աշխարհագրական ֆակուլտետների ուսանողների կազմակերպված գործունեությունը ռեգիստրացիայի մեջ այն կարծիքը հայտնեց, որ ուսանողական, երիտասարդական նման ջոկատների աշխատանքը պետք է լինի կոորդինացված համապատասխան մարմինների կողմից: Նա մտահոգություն հայտնեց որոշ շրջանների ՆԳ բաժիններում գենքի հետ կապված անօրեն գործողությունների մասին, միաժամանակ նշելով այս երեսույթի պատճառները:

Այնուհետև տեղի ունեցավ մտքերի, կարծիքների ու առաջարկությունների ակտիվ փոխանակություն, որին մասնակցեցին քաղաքական պատմության ամբիոնի դոցենտ Զ. Հակոբյանը, նույն ամբիոնի պրոֆեսոր Էդ. Զոհրաբյանը, իրավաբանական ֆակուլտետի դեկան դոց. Ռ. Պետրոյանը, սոցիալիզմի տեսության ամբիոնի վարիչ, դոց. Ի. Բայրան, հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Խուրշուզյանը, նույն ամբիոնի պրոֆեսոր Ստ. Մելիք-Բախչյանը, ուսուաց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Լ. Մկրտչյանը, կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, դոց. Ռ. Տոնոյանը, ուսուառիքի կայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Վ. Անանյանը, ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ. Դիլոյանը, պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի ավագ դասախոս Հ. Գարրիելյանը, ուսումնական աշխատանք-

ների գծով պրոռեկտոր, պրոֆ. Գ. Ղարիբյանը, տնտեսագիտական կիրեռնետիկայի ֆակուլտետի դոցենտ Մ. Սահակյանը, արհկոմիտեի նախագահի տեղակալ Լ. Ղարիբյանը, դոցենտներ Ռ. Մովսիսյանը, Բ. Հարությունյանը և ուրիշներ:

Բոլոր ելույթ ունեցողները նշեցին, որ այն, ինչ ներկայումս տեղի է ունենում Աղրբեջանում ու նրա մայրաքաղաքում, դա մարդկային երևակայությունից զուրս մի բան է: Թուրք ելուգակները խոչտանգում են հայ ժողովրդին, սպանում, թալանում անմեղ մարդկանց, ավերում ու կործանում ամեն ինչ: Նրանք խստագույն դատապարտեցին Աղրբեջանի կոմկուսի ու կառավարության ղեկավարների վարած հակահայկական քաղաքականությունը, որի հետևանքով հարևան հանրապետությունում ստեղծվել է այդ վիճակը: Ժողովը դատապարտեց նաև կենտրոնական կառավարության անտարբերությունն ու թողտվությունը, նրա անկարողությունը՝ կամեցնելու հայերի ցեղասպանությունը Բաքվում ու Աղրբեջանի մյուս հայարնակ շրջաններում:

Վերջում ընդունվեց հայտարարություն, որով ակտիվի ժողովն իր վերաբերմունքն արտահայտեց ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության 1990 թվականի Հունվարի 15-ի հայտնի հրամանագրի վերաբերյալ, նշելով, որ այն չի բխում գոյություն ունեցող իրողություններից, կազմված է կողմերի միջև հավասարակշռություն պահպանելու միտումով, ինչպես նաև հավասարապես մեղադրում է Հայաստանի և Աղրբեջանի ղեկավարներին՝ ռեգիստրացիայի մեջ լարվածության սրման համար:

Ժողովը վճռականորեն մերժեց հրամանագրի այն դրույթը, թե իր ազգամիջան հարաբերությունների ծայրատիճան լարվածության ծավալմանը նպաստել են ԼՂԻՄ-ի վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած՝ ԽՍՀՄ սահմանադրությանը չհամապատասխանող ակտերը: Ժողովն իր խոր դայրույթն արտահայտեց այն առթիվ, որ հրամանագրով արտակարգ դրություն է մտցվել ոչ թե Բաքվում, ուր Աղրբեջանի ժողովրդական ճակատը հունվարի 13-ից գրաղված է անարգել հայասպանությամբ, այլ ԼՂԻՄ-ում և ՀԽՍՀ Գորիսի շրջանում: Այն պահանջեց տալ Բաքվի իրադարձությունների զնահատա-

կանը իրրև Սումգայիթի շարունակություն, հայերի նոր ցեղասպանություն, միաժամանակ հայերի բռնագաղթը, ըրջափակումը և Հայասպանությունը որակելով իրրև Աղրբեջանի իշխանությունների վարած կանխամտածված քաղաքականության հաջորդող օղակներ, որոնց նպատակն է ուժասպառ անել հայ ժողովրդին, ընկճել նրա պայքարելու կամքը և ստիշել հրաժարվել իր արդարացի պահանջներից:

Ընդունված հայտարարության մեջ մասնավորապես պահանջվում է անհապաղ արտակարգ դրություն հայտարարել և պարետային ժամ մտցնել Բաքվում, Գանձակում, լարվածության մյուս թեժ կետերում, ինչպես նաև հրավիրել Հայկական ԽՍՀ Գերազույն խորհրդի արտահերթ նստաշրջան՝ քննարկելու ստեղծված արտակարգ իրազրությունը և Հայաստանի պառլամենտի անունից դիմելու աշխարհի բոլոր դեմոկրատական երկրների կառավարություններին ու պառլամենտներին, ՄԱԿ-ին, ոչ կառավարական միջազգային կազմակերպություններին և Հաազայի դատարանին, խնդրելով քննարկել Աղրբեջանում հայերի դեմ կազմակերպված ցեղասպանության հարցը և զորավիգ լինել հայ ժողովրդի արդար գործին:

«Երևանի համալսարան», 20 հունվարի 1990 թ.

№ 43

ТЕЛЕГРАММА

Председателю Верховного совета СССР
товарищу ГОРБАЧЕВУ М. С.

Слова бессильны передать наше гневное возмущение в связи с беспрецедентным актом варварского насилия со стороны азербайджанских экстремистов, совершивших свое очередное чудовищное преступление.

12 безвинных армян, проживающих в доме престарелых

в г. Гяндже (Кировабад), были зверски убиты и тайно захоронены фашистующими молодчиками ХХ века.

Неужели у этих оголтелых садистов, потерявших всякий человеческий облик, нет ни матерей, ни отцов, неужели их «милосердный» аллах отнял у них душу, совесть и разум, вложив в их сердца кровожадные инстинкты хищников-шакалов, утоляющих неуемную жажду свою кровью и слезами ни в чем не повинных людей.

История не простит им этих чудовищных злодеяний, однако мы требуем, чтобы сегодня Верховный совет СССР решительно осудил этих распоясавшихся палачей, растаптывающих все самое святое и священное на этой земле, и принял неотложные меры для прекращения разнузданной антиармянской истерии, искусственно нагнетаемой по всей нашей стране провокаторами из так называемого народного фронта Азербайджана.

Просим Вас и всех народных депутатов СССР положить конец этому варварству и насилию, обогряющим кровью и слезами безвинных жертв демократические устои нашего общества.

Одновременно просим обсуждения вопроса о положении в Армении и Азербайджане провести на открытом заседании, чтобы советская и мировая общественность получила наконец возможность услышать голос правды и справедливости.

Нашему народу нечего скрывать перед лицом цивилизованного мира.

Просим телеграмму огласить на сессии.

От имени коллектива Ереванского госуниверситета

И. о. ректора Г. А. Гарibyan
Секретарь парткомитета Ю. И. Mkrtumyan
Председатель профкома О. В. Mkrtchyan
Секретарь комитета ЛКСМ А. П. Енгоян

«Երևանի համալսարան», 24 փետրվարի 1990 թ.

№ 44

ТЕЛЕГРАММА

Председателю Верховного Совета СССР

Товарищу ГОРБАЧЕВУ М. С.

*Народному депутату СССР, первому секретарю
ЦК КП Армении товарищу АРУТЮНЯНУ С. Г.*

Считаем недопустимым, что рассмотрение вопроса о положении в Армении и Азербайджане было отложено по причине ухода с заседания сессии азербайджанской делегации сразу же после выступления Министра обороны СССР товарища Язова Д. Т.

Ведь при аналогичной ситуации, когда в ноябре прошлого года армянская делегация депутатов в знак протеста в связи с процедурными нарушениями покинула зал заседания Верховного Совета, сессия продолжила свою работу и даже, несмотря на ее отсутствие, приняла соответствующие постановления, что не могло не вызвать законного возмущения со стороны армянского народа.

Прошу справедливого и равнозначенного отношения к аналогичным проблемам всех народов и республик нашей страны.

От имени коллектива Ереванского госуниверситета

И. о. ректора Г. А. Гарян

Секретарь парткомитета Ю. И. Мкртумян

Председатель профкома О. В. Мкртчян

Секретарь комитета ЛКСМ А. П. Енгоян

«Երևանի համալսարան», 24 փետրվարի 1990 թ.

№ 45

ТЕЛЕГРАММА

Сессии Верховного Совета СССР

*Народному депутату СССР, первому секретарю
ЦК КП Армении товарищу АРУТЮНЯНУ С. Г.*

За последние два года в результате варварских преступных действий со стороны бесчинствующих азербайджанских экстремистов почти все четырехсоттысячное армянское население Азербайджана вынуждено было покинуть пределы республики.

Жестокие расправы над армянами, зверские убийства, изнасилования, погромы, огромное количество беженцев — все это мы расцениваем как явный геноцид в отношении нашего народа.

В этих условиях мы считаем глубоко аморальным и бесчеловечным оставление 160 тысячного населения НКАО в составе 7 миллионного Азербайджана.

Прошу незамедлительного и справедливого решения этого вопроса, который является судьбоносным для всего армянского народа, находящегося сегодня на грани физического и духовного уничтожения.

От имени коллектива Ереванского госуниверситета

И. о. ректора Г. А. Гарян

Секретарь парткомитета Ю. И. Мкртумян

Председатель профкома О. В. Мкртчян

Секретарь комитета ЛКСМ А. П. Енгоян

«Երևանի համալսարան», 24 փետրվարի 1990 թ.

**ԶԿԱ ԱՎԵԼԻ ՍՈՒԻՐԲ ՆՊԱՏԱԿ,
ՔԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

Աղքաբեջանի կողմից մեր հանրապետության և Արցախի շրջափակումը, սահմանամերձ հայկական ընակավայրերի վրա չղաղարող զինված հարձակումները, հայ ազգաբնակչության նկատմամբ զաղանքարարո գործողությունները մեծ ցասում ու վրդովմունք են առաջացնում մեր ժողովրդի մեջ: Այլև «վերևներից» դրանց դեմն առնող միջոցներ չակնկալելով (մանավանդ, որ ժամանակն ու դեպքերի ընթացքը ապացուցեցին դրանց անիրական լինելը), հայ ժողովրդի զավակները ուստի ելան՝ պաշտպանելու պատճենական հողը, հայրենի օջախը:

Համալսարանականները, որ արցախյան շարժման սկզբից և եթ նրա առաջամարտիկների շարքերում են, ակտիվորեն հանդես եկան նաև մեր ժողովրդի համար օրհասական պահերին: Ստեղծելով կամավորական ջոկատներ, մի շարք ֆակուլտետների ուսանողներ մեկնեցին Արցախ, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններ՝ բարոյական ու նյութական աջակցություն ցույց տալու տեղի ընակչությանը, օժանդակելու նրա ինքնապաշտպանությանը:

- Հունվարյան դեպքերից հետո, իրադրության թելադրանքով համալսարանում ստեղծվեց արտակարգ իրադրության շտաբ, - պատմում է շտաբի անդամ, համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Ա. Ենգոյանը:

- Մինչ այդ, [1989 թ.] սեպտեմբերից սկսած ֆակուլտետներում ստեղծվել էին կամավորական ջոկատներ, որոնք մեր աջակցությամբ ու նաև ինքնուրույն տարրեր ժամանակահատվածներով եղել են Արցախում: Միաժամանակ համալսարանականները, իրենց վրա վերցնելով բոլոր ծախսերը, կազմակերպել և իրականացրել են Հագուստով, սննդամթերքով և առաջին անհրաժեշտության ապրանքներով բեռնավորված 10-ից ավելի ուղղաթիռների թոփչքը ԼՂԻՄ: Սակայն պետք է ասել, որ այդ ամենն արվում էր ոչ կենտրոնացված ձևով: Նտարի ստեղծումից

հետո համախմբվեցին բոլոր ուժերը, ավելացավ կամավորական ջոկատների թիվը:

... Դեռևս [1989 թ.] նոյեմբերին մաթեմատիկայի ֆակուլտետից մի խումբ ուսանողներ դիմեցին ֆակուլտետի ղեկավարությանը, ինչպես նաև համալսարանի ԼԿԵՄ կոմիտե՝ հնարավորություն տալու մեկնել Արցախի որևէ գյուղ, որը անտեսական աշխատանքներում կարիք ունի օգնող ձեռքի: Հնարավորությունը տրվեց, և ահա 12 հոգանոց մի ջոկատ (ջոկատի կազմում ընդգրկվել էին նաև մեկական ուսանողներ մեխանիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետներից) [1989 թ.] նոյեմբերի 10-ին մեկնեց ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի Շոշ գյուղ: Գյուղը դժվարին օրեր էր ապրում: Սահմանակից լինելով աղբեջանական մի քանի գյուղերի, այն վերջիններիս կողմից հաճախակի հարձակումների վտանգի տակ էր: Միանալով գյուղի երիտասարդների կամավորական ջոկատներին, համալսարանները ուժեղացրին նրանց ինքնապաշտպանությունը՝ օժանդակելով բնակիչների կյանքի ապահովագրմանը: Հիմնականում գիշերները հերթապահելով գյուղի սահմանային տարածքում, տղաները ցերեկները մասնակցում էին տնտեսական աշխատանքներին: Կարծ ժամանակարկնթացքում նրանք հողակումերից մաքրեցին Շոշի մոտ գտնվող եկեղեցու շրջակայքը, օգնեցին գյուղացիներին՝ հարևան գյուղից բերելու և պահետավորելու գարնանացանի սերմացուն, հյուր եղան մանկապարտեզում, դպրոցում: Ի դեպ նրանց անշափ դուր է եկել դպրոցականների անցկացրած «Ուրախների և հնարամիտների» ակումբի մրցույթը: 20 օր մնացին ապագա մաթեմատիկուները Արցախ աշխարհում, և այդ ընթացքում քիչ չէ նրանց արածը: Սակայն իրենց իսկ վկայությամբ, գյուղը դեռևս օգնության կարիք ունի: Այն տնտեսապես բավականին վատ վիճակում է: Տղաները որոշել են ամուսնը կրկին շինջոկատային աշխատանքի մեկնել Շոշ, հիմնականում նպատակ ունենալով գյուղի մոտ կառուցել անասնապահական ֆերմա, քանի որ ներկայիս ֆերման շատ հեռու է բնակավայրից, և «Հարևանները» բազմիցս փորձեր են արել անասուններ գողանալու:

Հրաժեշտ տալով արդեն հարազարդացած տեղացիներին,

ուսանողները վերապարձան երևան՝ շարունակելու ուսումը: Սակայն նրանք իրենց միսիան ավարտած չեն համարում. որոշակի ծրագրած անելիքներ ունեն, որը, կարծում ենք, կիրականացնեն նույնքան պատասխանատվությամբ ու հետևողականությամբ:

Կամավորական ջոկատի կազմում կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մի խումբ ուսանողներ մեկնեցին Բերդաձոր, որտեղ նույնպես ինքնապաշտպանությունն ուժեղացնելու անհրաժեշտություն կար: Իրենց հովանավորության տակ առնելով Հին Շեն, Մեծ Շեն, Եղծահող և Մաղկաձոր գյուղերի բնակիչների անվտանգությունը, տղաները պատվով կատարեցին սեփական նախաձեռնությունը, հասկացնելով գող գագանի կերպ ունեցող «հարևաններին», որ հայոց հողը սուրբ է ամեն հայի համար և այն երբեք չի տրվի օտարին:

Բերդաձորն անառիկ կմնա, դա հաստատ է,- մեր գրուցի ժամանակ ասում են այստեղ մեկնած տղաները,- և նրա ամրությունը սեփական ուժով պիտի լինի, իսկ այստեղ մենք լրած շատ տներ գտանք: Որտե՞ղ են նրանց բնակիչները, որ հիմա կոչվում են «նախակին»:

Ցավով են խոսում տղաները փոքրացած գյուղերի մասին, ապա ավելացնում, որ եթե նրանց բնակիչները ապահոված լինեին համապատասխան աշխատանքով, եթե գյուղերը երկար ժամանակ անտեսված չմնային, հավանաբար ոչ մի բնակիչ չէր լրի իր պապենական օջախը: Եվ այնուամենայնիվ այսօր հարկավոր է դրանք վերականգնել, վերաշինել ու հզորացնել: Տղաները մեծ ցանկություն ունեն անմիջականորեն մասնակցելու այդ խիստ կարևոր գործին, որոշել են ամառը աշխատանքային քննաշրջանն անցկացնել այդ գյուղերում, վերաբնակիչների համար տնակներ հավաքել, այլ շինարարական աշխատանքներ կատարել:

Արցախյան և ոչ մի սահմանամերձ շրջան ապահոված չէ անվտանգությամբ: Ուստի ինքնապաշտպանության պատրաստ լինելն անհրաժեշտ է: Հունվարի 6-21-ը Ասկերանի շրջանի Փիրջամալ, Աղբուլաղ և Դահրազ գյուղերում հերթապահություններ անցկացրին աշխարհագրական ֆակուլտետի կամավորները: Նշված գյուղերը սահմանակից են Աղդամի շրջանի

Ավդալ և Գյուլափլու աղբբեջանական գյուղերին: Վերջիններիս կողմից ևս կրկին կիրառության մեջ է դրվել նախնիներից ավանդված և միայն իրենց ցեղին հատուկ սովորույթը՝ հարձակվել, գողանալ, ավերել... Տղաները պատմում են, որ իրենց գալուց առաջ «հարևանները» բազմիցս անասուններ գողանալու փորձեր են արել:

Տղաների ժամանակավոր հանգրվանումը բարոյական մեծ լիցք հաղորդեց տեղի բնակիչներին: Ուսանողները կապ հաստատեցին նաև դպրոցականների հետ: Դասերից հետո նրանք հաճախ էին միասին զրուցում հայաստանյան կյանքի, համալսարանական առօրյայի մասին, ֆիդայական երգեր սովորեցնում:

Փիրջամալ գյուղում երևանցի ուսանողները հանդիպեցին իրենց ֆակուլտետի շրջանավարտ Ալբերտ Բաղդասարյանին, որը գյուղի դպրոցում ուսուցիչ է աշխատում: Ու իրենք էլ որոշեցին ավարտելուց հետո մեկնել որևէ գյուղ, աշխատել այնտեղ:

Կամավորների շարքերում առաջններից էին իրավաբանական ֆակուլտետի այն ուսանողները, ովքեր զինվորական ծառայությունն անց էին կացրել Աֆղանստանում: Օտար հողում «ինտերնացիոնալիստական պարտը» կատարած հայորդիները չէին կարող հանգիստ նստել, երբ վտանգ էր սպառնում հարազատ, հայրենի աշխարհին: Նախ Գորիսում, ապա և Արցախում նախկին զինվորները այժմ աշխարհագորայինների ջոկատի կազմում մեր ժողովրդի այդ հատվածների ինքնապաշտպանությանն էին մասնակցում: Մարտակերտի շրջանի կիչան և Քոլատակ գյուղերը, որ Արցախ աշխարհի հրաշք անկյուններից են, անզուգական իրենց բնությամբ, տեղանքով, հիրավի պետք է ամուր լինեն, որ «հարևանի» մտքով անգամ չանցնի նրա մի թիզ հողն իրենը դարձնել:

Հայ ժողովրդի համար դժվարին օրերին շատ համալսարանականներ աշխարհագորայինների կազմում եղան նաև մեր հանրապետության սահմանամերձ շրջաններում, ուր նույնպես դրությունը չափազանց լարված է: Արծվամիրտ տղաների փոքրաթիվ մի ջոկատ (տարբեր ֆակուլտետների ուսանողներից կազմված) մասնակցեց հայտնի Արծվաշեն գյուղի ինքնապաշտ-

պանությանը: Նոյեմբերյանի շրջանի Բարեկամավան գյուղ արևելագետ ուսանողների մեկնումը պատահական չէր, ոչ Էլինքնանպատակ: Սահմանամերձ հայկական այս բնակավայրը ևս կարող էր փորձության ենթարկվել, եթե քաջարի տեղացիների և նրանց օգնության գնացած արիասիրտ հայորդիների վճռական կամքը տեղի տար:

Ասում են՝ մարդուն ավելի լավ ճանաչում են փորձության պահերին: Զհիշատակելով ոչ մի անուն (դա իրենց՝ տղաների, ցանկությունն է), այդուհանդերձ ուղում ենք, որ նրանց՝ նորօրյա քաջ Փիդայիններին ճանաչեն բոլորը: Հիրավի մենք պետք է հարգալից գլուխ խոնարհենք բոլոր նրանց դեմ, ովքեր վտանգելով իրենց կյանքը, ավելի սուրբ նպատակ չունենալով, քան հայրենիքի փրկությունն է, կամովին, միայն մայր հողի կանչը անապով ոտքի ելան՝ այն պաշտպանելու, սեփական ժողովրդի ճակատագրին տեր կանգնելու:

Անահիտ Բրուտյան

«Երևանի համալսարան», 10 մարտի 1990 թ.

№ 47

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ՀԵՏ

[մարտ 1990 թ.,
Երևան]

Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանը ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նստաշրջանից վերադառնարկուվ, օրերս հանդիպում ունեցավ համալսարանի ակտիվի հետ:

Նա ներկաներին մանրամասն ներկայացրեց ԽՍՀՄ Գերազույն խորհրդի հերթական նստաշրջանի ընթացքը, խոսեց այն հարցերի շուրջը, որոնք բարձրացվել են նստաշրջանում: Ակադեմիկոս Ս. Համբարձումյանը հատկապես կանգ առավ հայ դե-

պուտատների գործունեության վրա: Նա ասաց, որ Հայաստանից և Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզից ընտրված ժողովրդական դեպուտատները դժվարին պայքար են մղում Արցախի հայ ազգաբնակչության բարձրացրած հարցերի լուծման, նրանց օրինական իրավունքների ճանաչման համար: Հայ դեպուտատները նստաշրջանում, իրենց ելույթներում անում են լուրջ հարցարքումներ, միասնական ուժերով պաշտպանում հայ ժողովրդի շահերը: Նրանց ջանքերի չնորհիվ երկրի հասարակայնությունը և, մասնավորապես, ԽՍՀՄ Գերազույն խորհրդի անդամները ներկայումս ավելի լավ են պատկերացնում Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի հոգսերն ու պրոբլեմները, ինչպես նաև Աղրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը: Դա իր հերթին լավ նախադրյալներ է ստեղծում հարցի արդարացի լուծման հնարավոր ուղիների որոնման համար:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Ս. Համբարձումյանը միաժամանակ ընդգծեց, որ այսօր, քան երեսէ, հայ ժողովրդին պետք է համախմբվածություն, միասնականություն և աշխատանքային ամուր կարգապահություն: Միայն աշխատանքով, ուսմամբ ու կարգապահությամբ կարող ենք դուրս գալ ստեղծված ճգնաժամային իրավիճակից, վերջում ասաց նա:

Այնուհետև ակադեմիկոս Ս. Համբարձումյանը պատասխանեց մի շարք հարցերի:

«Երևանի համալսարան», 17 մարտի 1990 թ.

№ 48

ԴԻՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻՆ

Սիրելի Հայրենակիցներ, քույրեր և եղբայրներ:

Մեր հանրապետությունը կանգնած է համազգային ճգնաժամի եղբին, եղր, որից մեկ քայլ է մնում մինչև կործանում, եղր, որից այն կողմ հարցական է դառնում մեր ժողովրդի գոյատեսումը:

Վերջին օրերին ծայրաստիճանն սրվել է իրաղրությունը, մերթընդմերթ (ամենուրեք) ընդհարումներ են տեղի ունենում ուղղմական ուժերի և ինքնապաշտպանական ջոկատների միջն, որի պատճառով զոհ են դառնում և վիրափորվում տասնյակ անմեղ հայեր, տասնյակ մայրեր դառնում են այրի, տասնյակ մանուկներ՝ որբ: Եվ այս ամենը հիմնականում սաղրիչ տարրերի գործունեության արդյունք է:

Եթե վերջին երկու տարիների ընթացքում սաղրանքների մեջ մենք մեղադրում էինք կենտրոնական կառավարությանը և մամուլը, ապա այսօր պետք է սթափ նայել իրականությանը և ասել, որ մեզանում ևս կան անխոհեմ մարդիկ, որոնք վարկաբեկելով ֆիդայու սուրբ կոչումը, իրենց անպատճախանատու և անվայել արարքներով էլ ավելի վատթարացնում են իրավիճակը:

Ոչ մի բացատրություն չունեն հրազենով զբոսանքները երևան քաղաքում, հարձակումները տարբեր կազմակերպությունների շնչերի վրա և նրանց «գրավումը», այդ թվում նաև վերջերս տեղի ունեցած հարձակումը Հայաստանի կոմերիտմիության կենտրոնի շնչերի վրա:

Մենք խստորեն դատապարտում ենք նման ապակողմնորոշող գործողությունները, որոնք խուճապ և ծայրահեղ անհանգստություն են առաջացնում մեր, առանց այդ էլ նյարդայնացած ժողովրդի մոտ, անվտահություն և անելանելիություն առաջացնում վաղվա օրվա նկատմամբ:

Մենք կոչ ենք անում Հայաստանի կոմերիտականներին, բոլոր երիտասարդներին՝ ողջամտության և խուճեմության, համախմբված գործողությունների ընդդեմ սաղրիչ տարրերի, և ամենակարևորը՝ միասնության:

Մեր ժողովրդին այս իրավիճակից դուրս բերելու միակ ուղին միասնությունն է և համախմբվածությունը:

Մենք ուրիշ ճանապարհ չունենք:

Վաղը ուշ կլինի:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼԿԵՄ ԿՈՄԻՏԵ
Քարտուղար Ա. Փ. Ենգոյան
«Երևանի համալսարան», 2 հունիսի 1990 թ.

№ 49

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԿԵՄ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Վերջերս Հայաստանում էր ՀամԼԿԵՄ կենտրոնի քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, ազգամիջյան հանձնաժողովի նախագահ Դ. Պ. Բրագիչը: Հունիսի 12-ին նա եղավ համալսարանում և հանդիպեց ԼԿԵՄ կոմիտեի անդամների հետ: Դ. Պ. Բրագիչը ներկաներին տեղեկացրեց իր այցելության նպատակի մասին, մասնավորապես նշեց, որ ցանկանում է առավել հանգամանորեն ծանոթանալ Արցախյան պրոբլեմին, նրա հետ կապված բոլոր հարցերին: Ասաց նաև, որ նպատակ ունի լինել Բաքվում և Ստեփանակերտում՝ իրավիճակին խորությամբ ծանոթանալու համար: Դ. Պ. Բրագիչը հայտնեց, որ ստեղծված ազգամիջյան հանձնաժողովը նպատակադրվել է զբաղվելու Արցախի ֆինանսական, ուսանողական ջոկատների, ուղեգրերի և նման բազմաթիվ այլ հարցերով:

Հանդիպման ընթացքում նա ներկայացրեց Արցախյան պրոբլեմի լուծման իր տարբերակը, որն էր՝ բանակցություններ վարել աղքածանցիների հետ և հարցերը լուծել խաղաղ ճանապարհով:

Իհարկե, նման դիրքորոշում միայն Բրագիչը չէ, որ ունի: Այն շրջանառության մեջ է շուրջ երկու տարի և, թեև բացարձակապես չի արդարացրել իրեն, սակայն, ինչպես տեսնում ենք, դեռևս չի կորցրել իր ուժը: Մասնակիցների այն հարցին, թե զորքն ինչու դուրս չի բերվում Արցախից, ՀամԼԿԵՄ կենտրոնի քարտուղարը պատասխանեց, որ զորքը հավանաբար կմնա Արցախում, և հատկապես Ստեփանակերտում այնքան ժամանակ, քանի դեռ նման բանակցություններ չեն սկսվել, և չի նկատվել դրական որոշակի տեղաշարժեր:

Վերջում Դ. Պ. Բրագիչը պատասխանեց ներկաների բազմաթիվ հարցերի, որոնք առնչվում էին հիմնականում Արցախյան պրոբլեմին՝ սկսած 1988 թվականի փետրվարյան դեպքերից մինչև այսօր, ներառյալ սումգայիթ, կիրովաբարդ, խոջալու, բա-

քու*, շրջափակում և այլն: Նա ներկաներին հավաստիացրեց, որ լինելով նշված բոլոր վայրերում, ավելի մոտիկից ծանոթանալով աղքամիջյան բարդ ու խճճված հարցերին, ավելի օրյեկտիվ մոտեցում ցուց կտա Արցախյան պրոբլեմին և համապատասխան օղակներում այն անաչառ ձևով կներկայացնի:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Հակոբյանը, ՀՀԿԵՄ Մյասնիկյանի շրջկոմի առաջին քարտուղար Ս. Փայալյանը, համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Ա. Ենգոյանը և ուրիշներ:

«Երևանի համալսարան», 16 հունիսի 1990 թ.

1991

№ 50

ԵՐԲ ՇՂԹԱՑՎԱԾ Է ՀՈՂԴ

Իմ սերունդը իր կյանքի փոքր ու մեծ իրողություններին անդրադառնալիս միշտ ասելու է՝ մինչ 88-ի փետրվարը և՝ 88-ի փետրվարից հետո:

Այսպես քրիստոնյա աշխարհն է իր ապրած ու չապրած տարիները կիսում չիսուս Նազովրեցու ծնունդով, այդպես մարդկությունն է իր երկրորդ ծնունդը կապում աշխարհակործան ջրհեղեղի անսուստ առասպելին: Ահա այդպես, փետրվարյան հայտնի յոթ օրերի լեզենդն է հյուսվել մեր կենսագրությանը և ստիպում է, որ գոնե տարին մեկ հիշենք իր դասերը:

Արցախյան շարժումը, ինչպես ամեն մի համազգային շարժում, նախ երիտասարդական էր, ավելի ճիշտ՝ ուսանողական: Հետո պիտի դառնար համաժողովրդական, պիտի իր մեջ ներառեր հայրենիք ու սփյուռք. հասկացնելով մեր բարեկամին ու թշնամուն, որ Հայաստան կոչվածը միայն այն չէ, որ բլոկադայի կարող են ենթարկել, որ Հայաստանի սահմանները շատ ավելի լայն են, քանի որ ուր մի հայ է ապրում՝ հայաստանուտ է ու գրեթե Հայաստան: Ասացի, որ շարժումը սկսվեց որպես ուսանողական, ուստի այս օրերին, երբ լրանում է արցախյան ընդվզումի երրորդ տարին, ես ցանկացա հանդիպել, զրուցել համալսարանական այն ուսանողների հետ, որոնք ի սկզբանե հավատացել են և հիմա էլ հավատում են, որ Արցախը մի օր դառնալու է Հայաստանի անբաժան մասը, որ Արցախն էլ Հայաստան է:

Խոսքն իրենցն է:

ԷՌՈՒԱՐԴ ԴԱՐԲԻՆՅԱՆ (Փիզիկայի ֆակուլտետի 5-րդ կուրս) 88-ի փետրվարի 20-ին թատերական հրապարակ էինք

* Խոսքը աղբբեջանցիների կողմից կազմակերպված հայկական ջարդերի մասին է:

գնում և մեր ձեռքին փոքրիկ մի պաստառ էր՝ «Ղարաբաղը մերն է»: Առաջինը մենք՝ համալսարանականներս, հրապարակ մտանք, հետո՝ մյուս բուհերի ուսանողները: Ժողովուրդը խմբեց մեր շուրջ: Ոմանց ձեռքերին Գորբաչովի նկարն էր, իսկ բոլորիս մեջ այն հավատը, թե ինքն է սատարելու մեր արդար պահանջատիրությանը: Միամիտ էինք ու դուրահավատ: Բայց որքան հեռացանք փետրվարյան պայծառ օրերից, հասկացանք, որ ամեն ժողովուրդ ինքն է լուծում իր փոքր ու մեծ խնդիրները: Զգիտեմ, գուցե ուշ հասկացանք, չնայած Հիմա էլ կան մարդիկ, որ դեռ շարունակում են նամակներ հղել այս ու այն կողմ, կուրծք ծեծել, լաց լինել, ապացուցել, որ մենք լավն ենք, իսկ... իգուր է: Ելքը (առայժմ գուցե միակ) Արցախի լրված գյուղերի շտապ վերաբնակեցումն է, արցախցիների վերադարձը և Հայաստան-Արցախ տնտեսական, մշակութային ու մյուս կապերի ամրապնդումը:

ՄԻՔԱՅԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ (ուսումնակայի ֆակուլտետի 5-րդ կուրս) – Արցախյան շարժումը մեկ անգամ ևս ապացուցեց, որ սուստ է մեր ազգային անմիաբանության մասին հորինվածքը, որ եթե դրված է ժողովրդի ու երկրի գոյության հարցը, մենք մի բոռնցք ենք, մի հոգի և մի մարմին: Երանի միշտ այդպես լինենք: Շուտ ենք թեսաթափ լինում: Հիմա ես երազում եմ փետրվարյան մեր միասնությունը, ուսանողական մեր հումկու շարժումը: Հոգնեցի՞նք, բարձր դռնից պատասխանը շա՞տ ուշացավ... Օրերով այս մասին եմ մտածում, և ինձ մեկ-մեկ թվում է, թե Արցախը մեր գոյապայքարի վերջին լինել-չլինելն է, պարտությունը կհուշի միայն մեկ միտք՝ այլևս կոիվ ու հաղթանակ չունենք:

ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆ (բանասիրական ֆակուլտետի 5-րդ կուրս) – Ոմանց թվում է, թե մեր պայքարը անկում է ապրում: Այդպես մտածելն արդեն իսկ վտանգավոր է: Թե այդպես ես մտածում, ուրեմն քեզ դուրս ես դնում մեր ազգային պայքարից, որը շարունակվում է և դադարել է միտինգային լինելուց: Ուղղակի ասեմ, անցել է գեղեցիկ ճառերի ժամանակը, հիմա Արցախը գեղեցիկ խոսքերի կարիք չունի: Օգնելու հնար ունե՞ս, օգնիր, ելք փնտրիր: Հիմա գործ անող է պետք, որը իր հոգու

խորքում հավատում է, որ արցախյան խնդիրը վաղուց լուծվել է, և միայն նվաճումը պահել է պետք:

ՍԱՄՍՈՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ (փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետ 4-րդ կուրս) – Ասում են՝ կորուստներ ունեցանք, ու ժվում են՝ Կամո, Ազատ, Չարդախլու... Իսկ ես պատասխանում եմ այնպես, ինչպես Զորի Միրոն իր Հարությորդուն՝ հողի կորուստը անդարձ չէ, մարդու կորուստն է անդարձ: Կուզեի թվել արցախյան շարժման բոլոր նահատակներին, անուն առ անուն: Խոնարհվում եմ իրենց Հիշատակի առաջ: Ինձ համար, մեզ համար իրենք սրբացած անուններ են: Իրենց գործը եկող սերունդների պայքարի դաս և ուղեցույց պիտի լինի, մեզ համար՝ նույնպես: Արցախն իրենց համար լոկ պատմաշխարհագրական տեղանուն չէր, այլ կյանքի իմաստ ու նպատակ, կապանքված հայրենիք, որի շղթաները նաև իրենցն էին: Նրանց կենդանի հոգիները մեզ միշտ այդ շղթաների մասին են հուշելու և թույլ չեն տալու, որ մի պահ անգամ մոռանանք այդ մասին:

ԳՈՒԻՐԳԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ժուռանակայի բաժնի 5-րդ կուրս) – Վերջերս կրկին Արցախում էի: Առաջին անգամ այնտեղ եղել եմ 1988 թ. ամռանը, որպես «Արցախ-88» ուսանողական շինուալիտի անդամ: Այդ օրերին Մոսկվայից սպասելիք ունեինք ու զարմանում էինք, որ ոչ մի արցախցի այդպես էլ չի հարցնում: Մոսկվայից ի՞նչ լուր: Իրենց սպասածը Երևանից էր: Այս անգամ նույնպես՝ Երևանում ի՞նչ են ասում, վերջն ի՞նչ է լինելու:

Ստեփանակերտի օդանավակայանում, երբ փաստաթղթերս էին ստուգում, նկատեցի, որ զինվորականներից մեկը թուրք է և զաղազած աչքեր ունի: Հասկացել էր, որ ինչ էլ լինի՝ Արցախն իր ժողովրդով Հայաստանին] է մնալու:

Ես շատերին հանդիպեցի, զրուցեցի, բայց ընտրեցի միայն այս հինգ խոսքը: Ուրախ եմ, որ իմ սերնդակիցների մեջ այսպես կենդանի է փետրվարյան օրերի շունչը, անընկճելի ոգին: Մեր դժվար ճանապարհին այն եեռ մեզ շատ է սատարելու:

ԺՈՒԱՆԱԼԻՍՈՒԲԻԿԱՅԻ բաժնի
5-րդ կուրսի ուսանող Նաղաշ Մարտիրոսյան
«Երևանի համալսարան», 2 փետրվարի 1991 թ.

Ե՞ՐԲ ԵՆ ՊԱՏԺՎԵԼՈՒ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ

Հայաստանի սահմանամերձ շրջաններում պատերազմական իրադրություն է: Կենտրոնի Հովանավորությամբ խորհրդային բանակի ստորաբաժանումները և աղքարեջանական ելուզակները բացահայտ ազրեսիա են իրագործում Հայ ազգաբնակչության նկատմամբ: Բոնի տեղահանվել է Գետաշենի և Մարտոնաշենի բնակչությունը, հիմնահատակ ոչնչացվել է Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղը: Կան բազմաթիվ սպանվածներ, վիրավորներ, գնդակոծվում են սահմանամերձ հայկական բնակավայրերը:

Այսօր արդեն ակնհայտ է կենտրոնական իշխանությունների սենագ դիրքորոշումը անկախ, ժողովրդավարական իր պետությունը հիմնել ցանկացող Հայ ժողովրդի նկատմամբ: Վերջին օրերի բացահայտ ուղղմական գործողություններն արդեն որերորդ անգամ հավաստեցին դա:

Ողջ Հայ ժողովրդի համար վրդովեցուցիչ ու զայրացնող այդ դիրքորոշման կապակցությամբ իրենց կարծիքները հայտնելու համար դիմեցինք մի շարք համարարանականների:

Լ. ՕՀԱՆՑԱՆ (քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ) - Ես հավատում եմ մեր կառավարությանը և համամիտ եմ նրա այն կարծիքին, որ կենտրոնը վրեժ է լուծում մեզնից՝ անկախության ճանապարհն ընտրելու համար և օգտվելով մեր ներկա վիճակից (մեծ աշխարհի հետ կապ չունենք) «պատժում է» մեզ՝ ձգտելով բռնությամբ պահել Միությունը: Սակայն դա նրան ոչինչ չի տա, քանի որ ժողովուրդն ինքն արդեն համոզվել է, որ 70 տարի բռնությամբ պահող Միության մեջ ոչինչ լավի չի հասել: Կենտրոնի կողմից բռնությունն այլևս սահման չունի: Անդրկովկասում միակ հենարան ունենալով Աղբբեջանը (որը ստորագրել է միութենական պայմանագիրը) նա ամեն կերպ աջակցում է վերջինիս՝ հայատ-

յաց քաղաքականություն վարելու մեջ: Բացի այդ, Աղբբեջանի թիկունքին կանգնած է մուսուլմանական աշխարհը, որից իր օգուտն ունի նաև կենտրոնը և այս առումով նա, համենայնդեպս, չէր ուղենա վնաս կրել: Եվ այդուհանդերձ, օրհասական այս վիճակից դուրս գալու համար, ըստ երևույթին, ժամանակավոր կոմպրոմիտի պետք է գնալ նրա հետ, չնայած դժվարանում եմ ասել, թե դա ինչով պետք է արտահայտվի: Միաժամանակ անհրաժեշտ է սեփական, ազգային բանակ ստեղծել՝ ամեն տեսակ ոտնձգություններից մեր ժողովրդին ու հայրենիքը պաշտպանելու համար:

Այսօր նորից հեղվում է մեր ժողովրդի արյունը: Եվ եթե Միության մեջ իսկապես կա գործող օրենք, ապա պետք է խստագույնս պատժվեն մեղավորները՝ ինչպես հանցագործությունների հանձնարարողները, ղեկավարները, այնպես էլ կատարողները: Հանցագործություն է նաև երկրի բնակչությանը և միջազգային հասարակայնությանը մոլորության մեջ գցելը, ապակողմնորոշելը, քայլ, որին անվարան դիմում են կենտրոնական իշխանավորները:

Եվ վերջում պետք է կրկնեմ, որ բացի համբերությունից մեզ այսօր նաև զինվել է պետք՝ պաշտպանվելու և անկախության համար պայքարը շարունակելու:

Զ. ՇԱՔԱՐՅԱՆ (փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր) - Ես միշտ խաղաղության և ստեղծված բոլոր իրավիճակները քաղաքակիրթ միջոցներով հարթելու կողմնակից եմ:

Այսօր մեր ժողովրդի նկատմամբ ամենավայրագ գործողություններն են կիրառվում. Բայց մենք չպետք է նմանվենք նրանց, չենք կարող մոռանալ մեր քաղաքակիրթ ավանդույթները, մեր գործելու ավանդական լեզուն: Պետք է կարողանանք ստիպել նրանց՝ երկխոսություն ծավալել քաղաքակիրթ ձեռվ և ոչ թե ուղամական լեզվով:

Կենտրոնը միշտ էլ վայրագ է եղել, տոտալիտար և այդպիսին է նաև այսօր: Սակայն պետք է նրա հետ էլ դիվանագիտական ճանապարհ որոնել, չգնալ առձակատման: Մեր ուժը մեր

մտքի մեջ պետք է լինի: Սկզբունքային սխալներ չպետք է կատարել: Իսկ մեր հակայական մշակույթի մեջ մենք ամենաշատը աղքատ ենք եղել դիվանագիտությունից:

Մենք մեր խոսքը միշտ գործից առաջ ենք գցել, նախապես լողունգներ ստեղծել, իսկ հետևած գործողությունները չեն համապատասխանել դրանց կամ չենք հասցրել դրանք իրագործել: Մինչդեռ այդպես չպետք է լինի:

Ա. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ (նույն ամբիոնի դասախոս, փիլ. գիտ. թեկ.) - Ես համամիտ եմ պարոն Շաքարյանի ասած երկխոսությանը, բայց համոզված եմ, որ ուժի դեմ ուժը կարող է երկխոսություն ծնել: Ցանկացած դեպքում, եթե ուժերն անհավասար են, դու մենախոսության մեջ ես մնում և արդյունք չես ունենա: Ես բնավ էլ կողմնակից չեմ Հայաստան-Ռուսաստան պատերազմին, բայց եթե խորհրդային բանակն է միջամտում, պետք է նրան դիմադրել:

Որքան էլ ցավալի լինի մտքի, հոգևորի արժեքը գնահատող մարդուս համար, այնուամենայնիվ ողջ պատմությունը ցույց է տալիս, որ լինի անհատ, սոցիալական խումբ, թե ազգ, նրա հետ հաշվի են նստում միայն այն դեպքում, եթե նրա կողմից ուժ է ցուցադրվում կամ շահ է շահարկվում: Մենք պետք է օգտվենք, որից կարող ենք:

Մ. ԲԱԼՅԱՆ (պինդ մարմնի Փիզիկայի ամբիոնի ավագ լաբորանտ) - Այս ամենը փաստորեն շարունակությունն է մեղ ստրուկ պահելու քաղաքականության: Այսօր մենք պահելի պարզ ենք հասկանում, որ մեր հիմնական թշնամին կայարությունն է, և մենք պետք է կովենք կայսերական բանակի դեմ: Կենտրոնն ամեն ինչ անում է ամբողջատիրության պահպանման համար և այդ գործընթացում մեր դեմ օգտագործում բոլոր միջոցները, այդ թվում՝ ազգամիջյան պատերազմի բորբոքումը: Մետեմբերի 21-ին մենք պետք է մեր խոսքն ասենք անկախությունն ընտրելու մասին: Կենտրոնին դա դուր չի գալիս, և նա փորձում է խոչընդոտել այդ ուղին: Ուստի անհրաժեշտ է որքան հնարավոր է շուտ անցկացնել հանրաքվեն, քանի որ միայն անկախ լինելու դեպքում կարողանանք գոյատեսել: Կոմպրոմիսի մասին

խոսք լինել չի կարող: Մենք կամ պիտի կովենք, պայքարենք հանուն մեր նպատակների և իրականացնենք դրանք, կամ պիտի զլուխներս խոնարհենք իրեւ ստրուկ: Այլընտրանք չկա:

Պատրաստեց Անահիտ Բրուտյանը

«Երևանի համալսարան», 11 մայիսի 1991 թ.

№ 52

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 5-ին Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում ուսանողությունը հանդիպում էր կազմակերպել ՀՀ նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանի հետ: Զրույցը Հայաստանում ստեղծված իրավիճակի, անցած ուղու և հետագա անելիքների մասին էր: Անդրադառնալով Ղարաբաղյան շարժման պատմությանը, Վ. Մանուկյանը նշեց, որ թույլ են տրվել մի շարք սխալներ: Ըստ նրա, այդ Շարժումը ինքնարուխ երևույթ էր, որն ուղղակիորեն չէր կառավարվում դրանց, սակայն կարող էր ենթարկվել ամենատարբեր ազդեցությունների: Օրինակ, «Պրավդայի» որևէ հողվածով կարելի է ցանկալի ուղղվածություն առաջացնել:

Պատասխանելով պահանջատիրության մասին հարցերին, Վ. Մանուկյանն ընդգծեց, որ պետական քաղաքականությունը պետք է տարբերել ազգային քաղաքականությունից: Անկախացող Հայաստանը որպես պետություն հիմա չի կարող սահմանային փոփոխությունների հարց դնել, սակայն ազգը, նրա հասարակական կազմակերպությունները պետք է միանչանակ կանգնեն պահանջատիրության դիրքերում, մատաղ սերունդը պիտի դաստիարակվի Միացյալ Հայաստանի տեսլականով: «ՀՀՇ մի շարք անդամներ, որոնք ազգային քաղաքական հարցերում սկսնակ են, - ասաց նա, - պահանջատիրության հարցում սխալվեցին»: Ըստ Վ. Մանուկյանի, Արցախը մեղ համար ուղղ-

մավարական կարևորություն ունի ոչ միայն տարածքային առումով, այլև հոգեբանական իմաստով: Այն պետք է պահել ըոլոր միջոցներով: «Թեև մենք սխալվեցինք՝ ընդունելով Արցախի և Հայաստանի վերամիավորման մասին ղեկտեմբերի 1-ի որոշումը*, սակայն հիմա ավելի մեծ սխալ կլիներ այդ որոշումից հրաժարվելը»: Անկախացող Հայաստանը պիտի օգնի Արցախին որպես ազգային-ազատագրական պայքար մղող առանձին միավորի:

Խոսելով ազգային ավանդական կուսակցությունների մասին՝ նա նշեց, որ երազում էր դաշնակցական լինել, սակայն հիմա մի շարք հարցերում սկզբունքային տարածայնություններ ունի: Մասնավորապես նա չի ընդունում ՀՅԴ ընկերային գաղափարախոսությունը և իր Հայացքներին ավելի մոտ է Համարում Ռամկավար Ազատական Կուսակցության սոցիալական դոկտրինան: Վ. Մանուկյանը գտնում է, որ Հայաստանում մասնավոր սեփականության հիմքի վրա պետք է հաստատել դրամատիրական (կապիտալիստական) հարաբերություններ, որը, սակայն, նախկինը չէ և սոցիալական պաշտպանվածություն կարող է ապահովել:

Կառավարման համակարգը վերլուծելով նա ասաց, որ նշանակումների պրակտիկան իրեն չարդարացրեց, և, իր կարծիքով, ճիշտը լայն լիազորություններով օժտված տեղական իշխանությունների ձևավորումն է, որոնք պետք է ընձեռվեն** ժողովրդի կողմից:

Վերջում Վ. Մանուկյանը խոր մտահոգությամբ արտահայտեց ժողովրդի բարոյա-հոգեբանական վիճակի մասին՝ ամփոփելով, «Շարժում եղավ, բայց ազգային դարձունք չեմ տեսնում»:

«Երևանի համալսարան», 7 դեկտեմբերի 1991թ.

* 1989թ. դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդը համատեղ նիստում որոշում ընդունեցին Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին:

** Տեքստում այդպես է, հավանաբար պետք է լինի՝ ընտրվեն:

№ 53

1992

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 21-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ՝ Բարեկեն Արարքյանը Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի ընդլայնված նիստում հանդիպում ունեցավ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման սկզբում ներկաները հոտնկայս Հարգեցին երկու օր առաջ Ստեփանակերտի ոմբակոծության ժամանակ զոհված Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Վիգեն Շիրինյանի հիշատակը:

Համառոտ ելույթներից հետո խորհրդարանի նախագահը, պատախանելով մասնակիցների բազմաթիվ հարցերին, Հանգամանորեն ներկայացրեց Լեռնային Ղարաբաղում իրադրության կայունացմանն ու բնակչության կենսապահովմանն ուղղված Հայաստանի իշխանությունների կողմից իրականացվող միջոցառումները, շարադրեց հիմնահարցի կարգավորման քաղաքական ուղիների վերաբերյալ պաշտոնական տեսակետը:

Բարձրացվեցին նաև շուկայական հարաբերությունների ձևավորման պայմաններում սոցիալական անապահով խավերի սոցիալական պաշտպանվածության, կրթական համակարգի կատարելագործման հարցերը:

Վերջում Բարեկեն Արարքյանը ցանկություն հայտնեց, որ Հանրապետության մտավորական կենտրոնները և առաջին հերթին պետական համալսարանը, առավել սերտորեն համագոր-

ծակցեն իշխանության համապատասխան մարմինների հետ, օժանդակելով կյանքի տարբեր ոլորտներին առնչվող պետական ծրագրերի մշակման, օրինաստեղծ գործունեության արդյունավետության բարձրացման աշխատանքներին:

Հույս հայտնեց, որ եկուստեք օգտակար նման հանդիպումներն ու կարծիքների անկաշկանդ փոխանակությունը հետայսու կանոնավոր բնույթ կրեն:

«Երևանի համալսարան», 25 հունվարի 1992 թ.

№ 54

«ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ»

Մարտի 24-ին, ժամը 12.00-ին, Երևանի պետական համալսարանի հրապարակում ՀՅԴ «Նիկոլ Աղբայան» ուսանողական միության նախաձեռնությամբ տեղի ունեցած «Ուսանողությունը հանուն Արցախի» համառուսանողական հանրահավաք: Նրանք հրապարակ էին եկել «Հայ ուսանողություն, Արցախը սպասում է մեզ», «Այսօրվա Ավարայրը Արցախի լեռներն են», «Մեր միասնությամբ պատնեշենք աղբքեջանցի-թուրք գործակցությունը», «Արցախը յուրաքանչյուրիս օգնության կարիքն ունի», «Հայ ուսանողությունը պահանջում է վերաբացել ուսումական ամբիոնները» և այլ կարգախոսներով:

Հանրահավաքի բացումը կատարեց ՀՅԴ «Նիկոլ Աղբայան» ուսանողական միության ներկայացուցիչը, որը խոսքը փոխանցեց ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական Կոմիտեի անդամ Խաժակ Մկրտչյանին: Վերջինս մասնավորապես շեշտեց ուսանողությանը վերապահված դերը Արցախի ազգային-ազատագրական պայքարում: Նա ուսանողությանը որակեց որպես Հայաստանի քաղաքական կյանքին գաղափարական լիցք տվող ամենավտահելի ուժ և անհանդուրժելի համարեց ուսանողու-

թյան կրավորական դիրքը պատմականորեն իրեն վերապահված այս դերում:

Ապա ելույթ ունեցավ ՀՅԴ խորհրդարանական ֆրակցիայի անդամ Ռուբեն Հակոբյանը, որը քաղաքական վերլուծության ենթարկեց 1991 թվականի^{*} մարտի 16-ի ոռու-թուրքական համաձայնագիրը չեղալ հայտարարելու նպատակով ՀՅԴ «Նիկոլ Աղբայան» ուսանողական միության նախաձեռնությամբ տեղի ունեցած բողոքի նստացուցից մինչև օրս երկարող ժամանակաշրջանը՝ մերկացնելով թուրքիայի հակահայ դիրքորոշումը:

Այսուհետև հանդես եկավ համալսարանի պատմության փակուլտետի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, ՀԳԱ թղթակից անդամ Լ. Խուրշույանը, որը շեշտեց թե այսօր Արցախի դատից հրաժարվելով՝ մենք կործանած կլինենք Հայաստանը: Այս իմաստով նա կոչ արեց ամբողջ ուսանողությանն ու հայությանը համախմբվելու Արցախյան պահանջատիրության շուրջ:

ՀՅԴ «Նիկոլ Աղբայան» ուսանողական միության խոսքը փոխանցեց Արտաշես Տոռովյանը: Նա, անդրադառնալով Արցախում նահատակված Թաթուլի, Արթուրի, Գագիկի ու Վարդանի հիշատակին, կոչ արեց ուսանողությանը՝ հետեւ նրանց օրինակին:

Վերջում խոսքը տրվեց ԱԻՄ-ի միջբուհական մասնաճյուղի ներկայացուցչին:

Հանրահավաքի ավարտին ՀՅԴ «Նիկոլ Աղբայան» ուսանողական միության ներկայացուցիչը հաղորդեց, որ միության ընկերները մտադիր են բուհերում կազմակերպել հանգանակություն՝ ի նպաստ Արցախի, և ուսանողությանը կոչ արեց մասնակցել այդ միջոցառմանը:

Հանրահավաքի անունից ընթերցվեցին երկու դիմում՝ ուղղված աշխարհի և սփյուռքահայ ուսանողությանն ու երիտասարդությանը:

Նշենք, որ հանրահավաքի առիթով ՀՅԴ «Նիկոլ Աղբայան»

* Տերսում այդպես է, պետք է լինի 1921 թվականի:

ուսանողական միությունը պատրաստել էր «Ուսանողությունը՝ Հանուն Արցախի» հատուկ թուցիկներ, ինչպես նաև որմնագդեր: Իսկ միության պաշտոնաթերթ «Ուսանող»-ը այս առիթով լրայ էր տեսել բացառիկ համարով, որը ամբողջությամբ նվիրված էր Արցախին, նրա ուսանող նահատակներին և իր խմբագրականով անդրադառնում էր այս գործում հայ ուսանողության անմիջական պարտավորություններին:

* * *

Հանրահավաքն անցավ կազմակերպված ու բարձր մակարդակով: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ համալսարանում ցրտի պատճառով բավականին երկար ժամանակ ընդհատվել էին դասերը, ավելի լավ կլիներ այն անցկացնել դասերի ավարտից անմիջապես հետո, որպեսզի առանց այն էլ տուժած ուսումնական գործընթացը կրկին չտուժեր:

«Երևանի համալսարան», 28 մարտի 1992 թ.

№ 55

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 0ԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻՆ

Պատերազմը ծանր վնաս է հասցրել Արցախի ժողովրդին ու նրա տնտեսությանը: Բայց, չնայած դրան, Արցախի նորաստեղծ հանրապետությունը կամաց-կամաց սկսում է բուժել իր վերքերը: Օգնության նպատակով մայր Հայաստանից և աշխարհական հայության կողմից ուղարկվում են զանազան մթերքներ, դեղորայք, անց են կացվում դրամական հանգանակություններ:

Արցախին ցույց տրվող օգնությունից անմասն չի մնացել նաև Երևանի պետական համալսարանը:

Քիմիական ֆակուլտետում Արցախի օգնության ֆոնդի հա-

մար հանգանակությունը անցկացվեց կազմակերպված՝ ըստ ամբիոնների:

Ցուրաքանչյուր դասախոս հանգանակության ժամանակ տրամադրեց 100-ական ոուրիշի, ուսանողները՝ 10-ական, օժանդակ կազմի աշխատողները՝ 25-ական:

Արցախին ցույց տրվող օգնության հայրենանվեր գործում իրենց համեստ ներդրումն ունեցան նաև ուղիտվիզիկայի ֆակուլտետի ուսանողները: Նրանք հանգանակել են 11 հազար ոուրիշի, որը Արցախի մեր հայրենակիցներին սատար կանգնելու ուսանողության ազնիվ մղումների արդյունքն է:

«Երևանի համալսարան», 30 մայիսի 1992 թ.

№ 56

«ԱՅՍՈՐ ՄԵՆՔ ԿՕԳՆԵՆՔ, ԻՄԿ ՎԱՂՀԸ ԴՈՒՔ»*

Բարեգործական առաքելությամբ Հայաստանում գտնվող չեսենի մշակության միության նախագահ Արթին Քեչեչյան Օքյուզը համալսարանում հանդիպում ունեցավ ժուռնալիստիկայի բաժնի ուսանողների հետ և պատասխանեց նրանց հետաքրքրող մի շարք հարցերի:

.... Իսկ գերմանական թերթերը անդրադառնո՞ւմ են հայկական համայնքին և Հայաստանում կատարվող իրադարձություններին:

- Գերմանիայի լրատվական միջոցները միշտ էլ անդրադառնել են Հայաստանի իրադարձություններին, փորձելով օբյեկտիվ գնահատական տալ: Միայն Խոջալուի դեպքերին նրանք սուր-

* Ներկայացված է միայն Արցախին վերաբերող հատվածը:

յեկտիվ մոտեցում ցուցաբերեցին, մեղաղբելով հայերին: Իմ այստեղ գալու նպատակներից մեկն էլ հենց դա է. ճշտել այդ ամենը և տալ քաղաքական ճիշտ գնահատական:

Ժուռնալիստիկայի բաժնի
4-րդ կուրսի ուսանողուհիներ
Ալվարդ Թաղեսոյսյան,
Նունե Հայրապետյան

«Երևանի համալսարան», 30 մայիսի 1992թ.

№ 57

ՆԱՄԱԿ, ՈՐԸ ԲՆԱՎ ԷԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԶԵ

նոյեմբեր, 1992 թ.,
թաքսոն

Հարգելի պարոն Ռաֆայել Մաթևոսյան*.

Չերմ ողջուններս Զեղ բոլորին Երևանում: Ամերիկայում այսպիսի մի ասացվածք կա. «Երբ մի դուռը փակվում է քո կյանքում, մյուս դուռը կբացվի»: Վերջին այս մի քանի տարվա ընթացքում դոները փակվել են Հայաստանում, բայց նոր դոներ են բացվում: Նոր հեռանկարներ, նոր ձգտումներ են ի հայտ գալիս՝ ստեղծելու ավելի լավ կյանք և ավելի ուժեղ, միասնական ազգ, և ավելի լավ ամեն առումով: Զեր տրամադրությունները բարձր պահեք: Երբեք ետ մի նայեք: Ամենը գորչ է մինչև արևածագը: Ես գիտեմ, որ հայերի տված մեծ քանակությամբ զոհերը անպարզ չեն մնա: Կարևորը՝ հետևեք պրեզիդենտին: Մի հավատացեք արագ պատասխանի և հիմար խոստումների: Լևոն Տեր-

*ԱՄՆ-ի Հորիզոնի նահանգի թաքսոն քաղաքի բնակիչ Հելեն Թաքեսյանի նամակը եՊՀ միջազգային կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մաթևոսյանին:

Պետրոսյանը օրինական հիմքերի վրա հիմնվելով է շարունակում իր պայքարը Հայաստանում ավելի լավ կյանքի համար: Եվ դա միակ ուղին է մշտապես նպատակներին հասնելու: Որպես համալսարանի ղեկավարող մարմին, ուսանողներին զբաղեցրեք՝ ներգրավելով երաժշտական խմբերում, հնագիտական արշավախմբերում: Կազմակերպեք կենսաբանական արշավներ՝ լուսանկարելու և՝ հետազոտելու ծաղիկներ, և՝ կազմելու գրքեր, և՝ նաև լուսանկարելու Հայաստանի կենդանական աշխարհը: Բացի այս, ֆուտբոլը և մյուս մարզաձևերը պետք է խրախուսվեն: Ես գիտեմ, որ այսպիսի գործունեությունները Ամերիկայում համալսարանական կյանքի մի մասն են կազմում և պետք է կազմակերպվեն նաև Երևանի պետական համալսարանում: Սա շատ առավելություններ ունի և ուսանողությանը պահում է արդյունավետ զբաղվածության մեջ:

Ինչպես են գործերը այժմ համալսարանում: Նորություններ կա՞ն:

Ես հույս ունեմ, որ Ամերիկայից Զեղ այցելող բոլոր պրոֆեսորներին կտեղեկացնեք իմ գրադարանի մասին, և դա նրանց համար հարազատ մթնոլորտ կստեղծի (նման գրքեր ձեռքի տակ ունենալը):

Ես պատվիրել էի անգերեն լեզվով մի քանի հոլովակներ, սակայն սրանք ժամանակին տեղ չհասան և ես չկարողացա դրանք հիմա ուղարկել, կուղարկեմ մյուս անգամ:

Հեռուստացույցով ես դիտեցի մի հաղորդում «Փլուզված կայսրությունը» Սթիվ Հըրստի կողմից, որը CNN Մոսկովյան Բյուրոյի ղեկավարն է: Նա այցելել էր Բաքու, ինչպես նաև Հարցագրուց էր ունեցել պրեզիդենտ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Այնուամենայնիվ, քաղաքականությունը Կովկասում նրա համար դեռևս մնում է անհասկանալի: Աղրբեջանի մասին խոսելիս նա ասաց, որ աղրբեջանցիները տնտեսական զժվարություններ են կրում Աղրբեջանի և Հայաստանի միջև պատերազմի հետևանքով: Ես չեմ հավատում, որ դա ճիշտ է: Ես հավատացած եմ, որ Աղրբեջանի տնտեսական դժվարությունները կապված են նախկին խորհրդային բոլոր հանրապետությունների ընդհանուր տնտեսական դժվարությունների հետ և որ ցանկացած

Փինանսական դժվարություն, որ Աղրբեջանը կրում է Լեռնային Ղարաբաղի պատերազմում, հետևանք է այն բանի, որ աղրբեջանցիները նախընտրում են իրենց միջոցները սպառել սպառագինության վրա՝ լուծելու խնդիրներ, որոնք պետք է իրենց լուծումը ստանային բանակցությունների և օրինական ուղիների միջոցով: CNN-ը չի գիտակցում այս կարևոր հանգամանքը: Բացի այդ, բախումը գիտվում է որպես «պատերազմ Հայաստանի և Աղրբեջանի միջև»: Ես կարդացել եմ, որ Հայաստանի պրեզիդենտը մշտակես բացեիրաց ասել է, որ Հայաստանը պատերազմի մեջ չէ: Ես այսպես եմ հասկանում, որ որոշ Հայեր որոշել են գնալ Լեռնային Ղարաբաղ օգնելու Լեռնային Ղարաբաղի Հայերին: Ինձ թվում է, որ Աղրբեջանի կառավարությունը պատերազմում է աղրբեջանա-Հայկական փոքրամասնության դեմ: Սա նույնպես կարևոր հանգամանք է, որ պետք է հասկանա CNN-ը: Հայաստանի տնտեսական դժվարությունները ներկայացվում են այսպես. «Հայերը նախընտրում են քայլայել իրենց սեփական տնտեսությունը՝ պատերազմելով Աղրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի համար, որին երկուսն էլ հավասարապես հավակնում են»: Մրանք այն հիմնական հարցերն են, որոնք պետք է պարզաբանվեն գրավոր պաշտոնական առարկությամբ կամ CNN-ի Մոսկովյան Բյուրո պատվիրակություն ուղարկելով: Զնայած պրեզիդենտի հետ անցկացրած հարցազրույցում շատ բաներ են կրծատվել, և մնացել է պրեզիդենտի այն մի հայտարարությունը, որ Հայաստանը ունեցել է տխուր պատմություն, որ նրանք ետ չեն նայում, այլ լավատես են իրենց ապագայի նկատմամբ, ես զգում եմ, որ սկզբնապես շատ ավելին է ասվել և հետագյում շատ բան է կրծատվել:

CNN-ը շատ մեծ ազդեցություն ունեցող կազմակերպություն է, և պետք է ամեն գնով այնպես անել, որ Հայկական պրոպագանդան համար դիտորդներին, որոնք համաշխարհային ազդեցություն ունեցող առաջնորդներ են: Ընդունված է նաև, որ, նախքան հարցազրույցը, պետք է խորհրդակցել՝ թե ինչ է ասվելու և ինչն է եթեր տրվելու, և ինչն է կրծատվելու: Այս բոլորն անհրաժեշտ է անել նախապես, որպեսզի ներկայացված լրատվությունը յուրովի չընկալվի:

Ես խորապես համոզված եմ, որ Սթիվ Հըրստի հետ պետք է կապ պահպանել և նրան քաղաքավարի ձևով հարցնել, թե ինչո՞ւ է նա կարծում, որ Հայաստանը ազգեսոր է: Եվ ինչո՞ւ է նա ներկայացնում Խոջալուի արյունահեղությունը նույնիսկ այսքան ժամանակ անց, որպես մի կարևորագույն փաստ, մինչդեռ այն ժամանակ իսկուն ապացուցվել էր, որ այն ոչ այլ ինչ է, քան աղրբեջանցիների կողմից տարվող պրոպագանդա:

Ես կզբակացնեմ և կբողոքեմ CNN-ին այս հարցերի չուրջ: Սակայն այնտեղ շատ ավելի ծանրակշիռ կլինի մտքերի պաշտոնական փոխանակումը:

Այսպիսով, ես մեկ անգամ ևս Ձեզ խաղաղություն եմ մաղթում և բարգավաճման նոր օր:

Սրտանց՝ Հեղեն Թաքեայան

«Երևանի համալսարան», 15 հուլիսի 1993 թ

1993

№ 58

ՄԱՐՏԱԿԵՐՏ. ԱՆՀԱՐԻՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԱՐՁՆԵԼՈՎ

(«ԵՐԿԻՐ» թերթի թղթակից Գրիգոր Բարայանի զրույցը դումարտակի փոխհամանատար Պետրոս Ղևոնյանի հետ)

Պ. Ղ. Ղարաբաղյան այս պատերազմում, որքան ես կարող եմ հասկանալ ու գնահատել որպես զինվոր, անդադար արվում է անհնարինը և այդ անհնարինն արվում է անրնդհատ: Անհնարինը բոլոր առումներով ու կանոններով, որովհետև այս կոիվը ոչ մի կանոնով չի պայմանավորված: Դիրքերն անդադար պահում են նույն մարդիկ և պահում են գերմարդկային ուժերի գնով: Հոգնած ու գիշերը չքնած մարդը քայլում է 40 կիլոմետր, կատարում է մարտական գործողությունը և փոխարինող չունենալով՝ նորից հոգնած ու անքուն նստում է՝ իր գրաված դիրքը պահելու: Ես չեմ կասկածում, որ այս կովի վրա նաև քաղաքական գործողությունը և փոխարինող չունենալով՝ հոգնած ու անքուն նստում է՝ իր գրաված դիրքը պահելու: Ես չեմ կասկածում, որ այս կովի վրա նաև քաղաքական գործոններ են ազդում, բայց այն, որ այս կովի սահմանները պետք է քաղաքական գործոններն ու շարժառիթները գծագրեն ու որոշեն՝ երբեք չեմ կարող ընդունել ու չեմ ընդունի: Եթե նոյնիսկ համոզված լինեմ, որ մեր կովի արդյունքները քաղաքական ոլորտներում պետք է շահագործվեն կամ չարաշահվեն, մեկ է՝ ինձ համար այլընտրանք չկա. պետք է կովենք:

Գ. Բ. Ծայրահեղ հոգնածության ժամանակ պահ է գալիս, ինձ հետ գոնե եղել է, երբ սկսում ես մտածել՝ արդյոք անիմաստ չէ՞ այս ամենը:

Պ. Ղ. Երբ խոսում են այն մասին, որ անիմաստ են մեր զոհերն ու չարչարանքը, որովհետև այս երկրի սահմանները գծա-

գրվում են ամերիկաներում, մոսկվաներում կամ չգիտես ինչ եվրապաղամենտում, խոսում են՝ մոռանալով, որ եթե այս սահմանը պահող չիներ, թուրքը կզար ու վերջնականապես կրոնաբարեր այս հողը, և ամեն մի սահմանի մասին ամեն մի խոսակցություն իսկապես կղառնար անիմաստ: Միևնույն ժամանակ՝ կազմակերպված ուժերը կարող են փոխել ցանկացած քաղաքականության ընթացք, անկախ նրանից, թե այդ քաղաքականությունն ինչ ուժեր են որոշում. այդ ուժերը, լինեն ամերիկան, ոռուսական, թե թուրքական, կազմակերպված ուժեր են, որոնց կարելի է հակադրել մեկ այլ կազմակերպված ուժ:

Գ. Բ. Ք Կարծիքով, որտե՞ղ է վճռվում Ղարաբաղի բախստ՝ Մոսկվայում, Անկարայում, Վաշինգտոնում, Բաքվում, Երևանում, մեր այս դիրքերում...

Պ. Ղ. Զգիտեմ որտեղ է վճռվում, բայց գիտեմ, որ հայերը կարող են իրենց բախստը վճռել: Կարող են իրենց զենքի և իրենց պետության միջոցով որոշել իրենց սահմանները, իրենց քաղաքականությունը, իրենց անելիքը:

Գ. Բ. Ռ Հայերը: Վերջին ժամանակներում, որքան էլ դատարօրինակ է, հայի երկու տեսակ տարրերակվեց՝ զարաբաղցի ու հայաստանցի: Ռո՞ր տեսակն է վճռելու Ղարաբաղի բախստը:

Պ. Ղ. Երկուսը միասին: Մեկը մյուսից անկախ ոչինչ չեն կարող որոշել:

Գ. Բ. Վերջին ամսին մեր դիրքում 8 գոհ ենք տվել: Թշնամու զոհե՞րը քանին են:

Պ. Ղ. Շատ: Շատ, բայց դա ինձ բոլորովին չի մխիթարում: Խնդիրը մեր ունեցածը պահպանելն է, ոչ թե թուրքի կորուստ հաշվելը: Հարյուրներով նրանց սատկելը հետ չի բերի մեր այն տղերքին, որ այս դիրքում զոհվեցին:

Գ. Բ. Այնուամենայնիվ, ինչպես ես բացատրում այդ անհամամասնությունը:

Պ. Ղ. Ինձ համար, նորից ասեմ, մխիթարություն չէ, որ նրանք ավելի վատ են կազմակերպված, ավելի ապուշ են, քան թե մենք: Վաղը կարող են և կազմակերպվել, քանի որ նրանց սխալների վրա իրենց պետությունն է աշխատում: Եթե բանակի դիմաց բանակ չինի՝ հնարավոր չէ այս հողը պահել: Շատ եր-

կար ժամանակ դարաբաղյիները պահում են իրենց հողը: Բայց միայն իրենց ուժերով հավերժորեն չեն կարող:

Գ. Բ. Վերջը:

Պ. Ղ. Եթե ամեն ինչ թողնենք զարգանա այս ընթացքով, վերջը կարող է շատ տխուր լինել: Ուղղակի նրանք, ովքեր ուղում են իրենց հողը պաշտպանել, վերջանալու են, և մեզ համար լավագույն ելքի մասին երկար ժամանակ ստիպված ենք լինելու լոել, որովհետև հաջորդ սերունդը, որ գալիս է, ուղղակի չի հացնում մտնել այս մթնոլորտի մեջ: Կովողները կվերջանան, և կոփն էլ այդպես կվերջանա: Նաև շատ վատ կլինի, եթե դարարայան կոփը տարբեր քաղաքական ուժերի ձեռքին շարունակի մնալ խաղաթուղթ:

Գ. Բ. Կարո՞ղ է Ղարաբաղը միայնակ դիմադրել Աղբբեջանին առանց Հայաստանի Հանրապետության օգնության:

Պ. Ղ. Կարող է: Բայց կարձ ժամանակ: Ղարաբաղն ինչպե՞ս պետք է փամփուշտ կամ այս պատերազմական պայմաններում հաց արտադրի:

Գ. Բ. Իսկ զինամթերքից ու սննդից բացի:

Պ. Ղ. Մարդումի խիստ պակաս կա: Սկզբից էլ ասացի այդ մասին: Ղարաբաղյիներն անում են անհնարինը, իսկ անհնարինը, որ դարձրել են հնարավոր և անում են, երկար շարունակվել չի կարող: Բայց պետք է ոչ թե անհնարինը շարունակել, այլ գտնել հնարավոր լուծումներ: Իսկ դրանք կան. ես տեսնում եմ: Եվ գիտեմ, որ շատերն են տեսնում: Եվ այդ հնարավորը, որի մասին ասում եմ, թե տեսնում եմ, մի վերացական բան չէ: Մեր հաղթանակն է, որը գոնե ինձ համար շատ իրական է: Եվ պարտադիր:

«Երկիր», 20 փետրվարի 1993 թ.

№ 59

ԲՈՂՈՔԻ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

Մայիսի 19-ին համալսարանի դիմացի հրապարակը կրկին մարդաշատ էր. «Նիկոլ Աղբայյան» ուսանողական միության նախաձեռնությամբ կազմակերպվել էր բողոքի ու պահանջի հանրահավաք՝ ընդդեմ Թուրքիա-ԱՄՆ-Ռուսաստան «միջնորդական ծրագրի», որով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և Հայաստանին առանց համապատասխան երաշխիքների պարտադրվում է թողնել Քելբաջարի շրջանը:

Հանրահավաքին հրավիրված էր և ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Արցախի Համայնքի նախագահ Սեյրան Բաղդասարյանը: Այնուհետև ձայնը տրվեց ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտեի անդամ Լեռն Մկրտչյանին: Երկու հոետորներն էլ ընդգծեցին, որ թե՛ Հայաստանը, և թե՛ Լեռնային Ղարաբաղը միշտ էլ պատրաստ են ընդունել ցանկացած միջնորդական նախաձեռնություն, որը կրիսի հարցի լուծման ցանկությունից և ոչ թե սեփական շահերի հետապնդման նպատակով կառաջարկվի վաղուց արդեն իր հակումները դերսեռորած այնպիսի մի երկրի կողմից, ինչպիսին Թուրքիան է:

Հանրահավաքի մասնակիցների անունից հուշագիր է Հանձնվել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին, որի մեջ ասվում է.

Մեծարգո պատգամավորներ:

Հերթական անգամ արցախահայությունը կանգնել է միջազգային դավադրության փաստի առջև: Ընդամենը մի քանի օր հետո լրանում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Թուրքիայի կողմից վերջնազրային կարգով ներկայացված և ԼՂՀ անվտանգության միջազգային որևէ գործուն երաշխիք չապահովող ու նրա համար անընդունելի դրույթներ պարունակող եռակողմ առաջարկության ժամկետը: Առաջարկություն, որով առանց որևէ նախապայմանի պահանջվում է զիջել ազատազրված Քելբաջարը: Սա արցախան պատերազմում Թուրքիայի միջնորդական առա-

քելության տրամաբանական արդյունքն է:

Ցեղասպան Թուրքիան այսօր ոչ մի բարոյական իրավունք չունի հանդես գալու խաղաղարարի դերով, առավել ևս, որ ծայրահեղ կողմնակալ դիրքորոշում ունի: Հետևաբար՝ պետք է հրաժարվել նման միջնորդի ծառայություններից:

Ուսանողության անունից դիմում ենք՝ մերժելու Թուրքիայի միջնորդությունը և ներազգելու Հայաստանի կառավարության վրա, որպեսզի Արցախի հարցով բանակցություններում չանտեսվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վճռորոշ դերը:

Հայ ազատամարտիկների և արցախահայության նվաճումները որևէ մեկը իրավունք չունի նրանց թիկունքում առևտրի առարկա դարձնել:

«Երևանի համալսարան», 31 մայիսի 1993 թ.

№ 60

ՆԱՄԱԿ ԱՐՅԱԽԻՑ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ ՊԱՐՈՆ Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

**ԼՂՀ Մարտունու շրջանի Մաճկալաշենի միջնակարգ դպրոցի
տնօրինությունից**

12 սեպտեմբերի 1993 թ.

Արդեն մեկ տարին լրացել է, ինչ Մաճկալաշենի միջնակարգ դպրոցում ուսումնական պարապմունքներ չեն անցկացվել, որովհետև գյուղը սահմանամերձ է, և դպրոցի շենքը ծառայում է որպես ինքնապաշտպանության ուժերի շտաբ: Այդ ընթացքում փչացել է դպրոցական գույքի զգալի մասը, հատկապես նստարանները: Այս ուսումնական տարվա նախօրյակին ձեր

համալսարանի կողմից ստացանք մեզ այնքան անհրաժեշտ 30 նստարան, 1600 տեսոր և 300 գրիչ, որի շնորհիվ էլ սեպտեմբերի 1-ին մեր դպրոցը վերսկսեց իր աշխատանքը: Այս նվերները մեծ ուրախությամբ ընդունեցին մեր աշակերտները: Այդ առթիվ մեր դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվներն իրենց խոր երախտագիտությունն են հայտնում Ձեզ և ձեր համալսարանի դասախոս, մեր գյուղի պատվավոր քաղաքացի և մեր բոլորիս սիրելի պարոն Գ. Մելիքյանին, որի անունն իսկ ուրախությամբ է լցնում յուրաքանչյուր մաճկալաշենցու սիրտը:

Վերջին հինգ տարիների ընթացքում Դուք անընդհատ ջերմացնում էիք մեր հոգիները: Տա Աստված, որ կյանքում Ձեզ միշտ ուղեկցեն հաջողությունն ու ուրախությունը:

**Ս. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Մաճկալաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն**

«Երևանի համալսարան», 15 հոկտեմբերի 1993 թ.

№ 61

ՀՅՈՒՐ ԷՒՆ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Վերջերս պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Մեծ Բրիտանիայի խորհրդարանական խումբը՝ պէտերի պալատի անդամ, «Բրտանիա-Հայաստան» խորհրդարանական խմբի նախագահ լորդ Ռիչարդ Շենոնի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նաև ներկայացուցիչների պալատի անդամ Պեթր Թիվինգը, փոխխոսնակ բարոնու Հի Քերոլայն Քոքսը, Բրիտանիայի Հայ համայնքի ներկայացուցիչներ և ուրիշներ:

Սեպտեմբերի 17-ին բրիտանական խորհրդարանականները այցելեցին Երևանի պետական համալսարան: Ողջունելով Հյուրերին, համալսարանի ուկտոր, ակադեմիկոս Ն. Առաքելյանը նրանց ծանոթացրեց Հայոց մայր բուհի կառուցվածքին, գործունեությանը: Հյուրերը որոշակի հարցադրումներ արեցին՝

պարզելու համար, թե ինչ աջակցություն կարող են հանդես բերել համալսարանի առջև ծառացած խնդիրների լուծման գործում, անդրադարձան Երևանի պետհամալսարանի ու անգլիական որոշ բուհերի, մասնավորապես Վեսթմիսթերի համալսարանի միջև փոխհամագործակցություն ծավալելու հարցին:

Հանդիպման ընթացքում խոսակցություն ծավալվեց նաև դարարադյան հիմնահարցի շուրջ: Նշվեց դարարադյան հակամարտության խաղաղ կարգավորման խնդրում միջազգային հանրության ճիշտ դիրքորոշման կարևորությունը: Ապա լեղի Ք. Քոքսը Ն. Առաքելյանին հանձնեց հիմնահարցի վերաբերյալ իր կողմից Անգլիայում կազմված ու հրատարակված աշխատությունը, որը կոչվում է «Ազգային մաքրումը ընթացքի մեջ է. պատերազմ Լեռնային Ղարաբաղում»: Ն. Առաքելյանը այն փոխանցեց համալսարանի գրադարանին:

Այնուհետև բրիտանական պատվիրակությանը հյուրընկալեցին ուսանողական «Բայրոնյան ակումբ»-ի անդամները, ուսանողներ, դասախոսներ: Բարեկամական ջերմ ու անմիջական մթնոլորտում համալսարանականների և հյուրերի միջև անգլերեն լեզվով զրույց ծավալվեց հայ ուսանողությանը հետաքրքրող ու հուզող մի շարք հարցերի շուրջ: Բրիտանացի հյուրերի վրա մեծ տպավորություն թողեցին մեծ հայասեր անգլիացու՝ Բայրոնի կյանքի գրական ու հասարակական գործունեության մասին հայ ուսանողների քաջատեղյակությունը, նրա ստեղծագործությունների հրաշալի ներկայացումը:

Հանդիպման ավարտին հյուրերն իրենց տպավորություններն ու բարեմաղթանքները գրանցեցին ակումբականների հուշամատյանում:

Հանդիպմանը մասնակցում էր ՀՀ ԳԽ հանձնաժողովի նախագահ Ռ. Ղազարյանը:

«Երևանի համալսարան», 15 Հոկտեմբերի 1993 թ.

1994

№ 62

ԴԵՍՊԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ապրիլի 27-ին Երևանի պետական համալսարանում էր գտնվում Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Հարրի Գլմորը, որը վաղօրոք ցանկություն էր հայտնել հանդիպել և անհատական զրույց ունենալ ուսանողության հետ: Նրա հետ համալսարան էր այցելել նաև դեսպանատան մամլո և մշակության կցորդ Դեվլիթ Սիֆկինը: Հյուրերին համալսարանում ուղեկցում էր միջազգային կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մաթևոսյանը:

Հանդիպումներ տեղի ունեցան իրավաբանական, ուսմանագերմանական բանասիրության ֆակուլտետների և պատմության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնի ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում Հարրի Գլմորը հակիրճ ներկայացրեց ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումը Հայաստանի Հանրապետությանը օգնություն ցուցաբերելու խնդիրների շուրջ, ինչպես նաև Հայաստանում ժողովրդավարական գործընթացի դրական արդյունքների և շուկայական էկոնոմիկային անցնելու հաջողությունների մասին: Դեսպանը կանգ առավ նաև Ղարաբաղյան առձակատման հարցի վրա, ներկայացրեց ԱՄՆ-ի կառավարության տեսակետը այդ խնդրի կարգավորման համար:

Հարրի Գլմորը անդրադարձավ նաև ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլ Քլինթոնի հայտարարությանը և մի շարք սենատորների ապրիլի 24-ի առթիվ ունեցած ելույթներին և դրանք մեկնարանց որպես պատմական ակտ ցեղասպանության դատապարտ-

ման և հայ դատի պաշտպանության գործում:

Հարրի Գիլմորը հանդիպումների ընթացքում պատասխանեց նաև ուսանողների բազմաթիվ հարցերին: Վերջում նա շեշտեց, որ ԱՄՆ-ը Հայաստանը դիտում է որպես բարեկամ պետություն, և որ ինքը Հայաստանում դիվանագիտական գործունեությունն ավարտելուց հետո մտադիր է Հայաստանի մասին իր տպավորությունները շարադրել առանձին գրքով:

«Երևանի համալսարան», 30 ապրիլի 1994 թ.

№ 63

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Հայաստանի հանրապետության բուհերը, այդ թվում և Երևանի պետական համալսարանը, լուրջ օգնություն են ցույց տալիս Ստեփանակերտում հիմնադրված համալսարանին: Պարբերաբար կազմակերպվում են անվանի գիտնականների այցելությունները, որոնց ընթացքում նրանք կարդում են դասախոսություններ, վարում գործնական ու տեսական պարագմունքներ: Վերջերս, արձագանքելով ԼՂՀ պետհամալսարանի ոեկտորատի կոչին, Երևանի պետական բժշկական ինստիտուտի երեք ճանաչված պրոֆեսորներ՝ Դ. Խուզավերդյանը, Ա. Սաֆարյանը և է. Թումանյանը, ուսումնական պլանի շրջանակներում դասախոսություններ կարդացին Ստեփանակերտի պետական համալսարանի բժշկագիտական ֆակուլտետի ուսանողների համար: Նրանց դասախոսությունները լսվեցին մեծ հետաքրքրությամբ:

«Երևանի համալսարան», 15 հունիսի 1994 թ.

№ 64

ՈՂՋՈՒՅՑՆԻ ՈՒՂԵՐՁ ԼՂՀ-ԻՑ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը և ՊՊԿ-ն^{*} ողջույնի ուղերձ են Հղել Երևանի պետական համալսարանի հիմնադրման 75-ամյակի առթիվ: Այստեղ մասնավորապես ասվում է. «Մեզ՝ արցախցիներիս համար ԵՊՀ միշտ եղել է գիտության իսկական կաճառ և լույսի ու հույսի չխամրող աստղ: Համալսարանի բազում շրջանավարտներ հաջողությամբ կիրառում են իրենց գիտելիքները ԼՂՀ ժողունակության-գիտության, մշակույթի ասպարեզում: Նրանցից շատերը հերոսական էջեր են գրել արցախյան շարժման տարեգրքում, իրենց կյանքը տվել հանուն հայրենի հողի ազատության»:

Երևանի պետական համալսարանի 75-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններին մասնակցելու համար Երևան է մեկնել ԼՂՀ կառավարական պատվիրակությունը:

«Երևանի համալսարան», 31 հոկտեմբերի 1994 թ.

* Պաշտպանության պետական կոմիտե:

ԲԱԺԻՆ ԶՈՐՌՈՐԴ

**ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ**

Ազգալրյան Լեոնիդ Ռուբենի - Ֆիզիկայի ֆակուլտետ, գիտաշխատող (գոհված)*

Ալեքսանյան Աշոտ Սեյրանի - Փիլիսոփայության ֆակուլտետ, ուսանող

Ալեքսանյան Արտեմ Սարգսի - Իրավաբանական ֆակուլտետ, ուսանող

**Ալոյան Թեմուր Զնդիի - Իրավաբանական ֆակուլտետ, ուսանող
Աղաբաբյան Գրիգոր Սպարտակի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող**

Աղաջանյան Կարեն Զավենի - Աշխարհագրական ֆակուլտետ, ուսանող

Ամիրաղյան Սոս Սերյոժայի - Իրավաբանական ֆակուլտետ, ուսանող

Անտոնյան Արմեն Նորայրի - Երկրաբանական ֆակուլտետ, ուսանող

Աչիքպողյան Սիմոն Հովհաննեսի - Երկրաբանական ֆակուլտետ, դասախոս (գոհված)

Աչիքպողյան Օհան Սիմոնի - Երկրաբանական ֆակուլտետ, ուսանող

**Առատամյան Մհեր Բենիկի - Քիմիական ֆակուլտետ, ուսանող
Ասատրյան Ալեքսան Ֆելիքսի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող (անհայտ կորած)**

Ավագիմյան Վաչագան Ռաֆայելի - Տնտեսագիտական ֆակուլտետ, ուսանող (գոհված)

Ավագյան Արայիկ Վարուժանի - Աշխարհագրական ֆակուլտետ, ուսանող

* Անվանացանկում ներառված են 1988-1994 թթ. ԵՊՀ-ում աշխատած կամ ուսանած ազատամարտիկների անունները:

Հայցում ենք այն համալսարանականների ներողամտությունը, որոնց անունները հնարավոր չեն հղել հայտնաբերել և ներառել այս անվանացանկում:

Ավագյան Եղուարդ Լվովի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Ավակիմյան Լևոն Վալենտինի - Արևելագիտական ֆակուլտետ,
ուսանող

Ավանեսյան Արա Համբարձումի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Ավանեսյան Արսեն Ռողիկի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Ավանեսյան Զաքար Սլավիկի - Պատմության ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Ավանեսյան Մհեր Շուրայի - Տնտեսագիտական ֆակուլտետ,
ուսանող

Ավետիսյան Արտակ Սուրենի - Արևելագիտական ֆակուլտետ,
ուսանող

Արշակյան Հապետ Կորյունի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Ափանյան Նազարեթ Համբարձումի - Պատմության ֆակուլտետ,
ուսանող

Բախչյան Վարդան Ազատի - Պատմության ֆակուլտետ, ասպի-
րանտ (գոհված)

Բաղդասարյան Ալբերտ Անդրանիկի - Աշխարհագրական ֆա-
կուլտետ, ուսանող

Բաղդասարյան Լևոն Միքայելի - Ռազիոֆիզիկայի ֆակուլտետ,
ուսանող

Բաղշեցյան Արա Վաղգենի - Մաթեմատիկայի ֆակուլտետ,
դոցենտ, դասախոս

Բարբարյան Ներսես Գրիգորի - Ռազիոֆիզիկայի ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Բարսեղյան Արսեն Գեորգիի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Բեկթաշյան Արմեն Ժորայի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Գյորգյան Ֆուրման Արկադյայի - Տնտեսագիտական ֆակուլ-
տետ, ուսանող (գոհված)

Գևորգյան Արսեն Ալֆրեդի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Գևորգյան Գարեգին Վոլոդյայի - Մաթեմատիկայի ֆակուլտետ,
ուսանող

Գևորգյան Գարիկ Սուրենի - Ռազիոֆիզիկայի ֆակուլտետ, գի-
տաշխատող

Գևորգյան Սամվել Գառնիկի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Դարբայյան Արտակ Արտաշեսի - Պատմության ֆակուլտետ,
ուսանող

Դալլաքյան Կամո Սարիբեկի - Ֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող

Դալլաքյան Վարդան Տիգրանի - Պատմության ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Եղիազարյան Արթուր Ալբերտի - Պատմության ֆակուլտետ,
ուսանող

Եսայան Արտակ Նորիկի - Արևելագիտական ֆակուլտետ,
ուսանող

Թաղմանյան Ռուբեն Վովկայի - Տնտեսագիտական ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Իշխանյան Վագգեն Ալեքսանդրի - Իրավաբանական ֆակուլ-
տետ, ուսանող

Խոկանյան Գագիկ Աղասի - Արևելագիտական ֆակուլտետ,
ուսանող

Լալայան Գեղամ Ռաֆիկի - Ֆիզդաստիարակության և սպորտի
ամբիոն, դասախոս

Խաչատրյան Աշոտ Ռաֆիկի - Իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Խաչատրյան Արտակ Մեխակի - Ռազիոֆիզիկայի ֆակուլտետ,
ուսանող

Խաչատրյան Տիրան Վագգենի - Ֆիզիկայի ֆակուլտետ, ուսա-
նող

Խոջյան Սարգիս Վրեժի - Իրավաբանական ֆակուլտետ, ուսա-
նող (գոհված)

Ծերունյան Վարդան Ալեքսանի - Ռազիոֆիզիկայի ֆակուլտետ,
ուսանող

Կարապետյան Կարեն Ֆրիկի - հրավարանական ֆակուլտետ, ուսանող
Կետիկյան Արայիկ Ժիրայրի - Պատմության ֆակուլտետ, ուսանող
Կնյազյան Ակսել Պարգևի - Մեխանիկայի ֆակուլտետ, ուսանող
Կոթոյյան Արմեն Վանիկի - Ֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող (գոհված)
Կրպեյյան Թաթուլ Ժորժիկի - Պատմության ֆակուլտետ, ուսանող (գոհված)
Հակոբյան Արամ Աշոտի - Պատմության ֆակուլտետ, ուսանող
Հակոբյան Վաչագան Սերգեյի - Բանասիրական ֆակուլտետ, ուսանող
Հայրումյան Հրաչիկ Իշխանի - Տնտեսագիտական ֆակուլտետ, ուսանող
Հարությունյան Թաթուլ Արկադիի - Պատմության ֆակուլտետ, ուսանող
Հովակինյան Վահագն Միսակի - Փիլիսոփայության ֆակուլտետ, ուսանող
Հովհաննիսյան Արմեն Սերյոժայի - հրավարանական ֆակուլտետ, ուսանող
Հովհաննիսյան Լեռնիկ Լենդրուշի - Պատմության ֆակուլտետ, ուսանող
Հովհաննիսյան Հովսեփ - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող
Հովհաննիսյան Վարդան Նապետի - Տնտեսագիտական ֆակուլտետ, ուսանող (գոհված)
Հովսեփյան Արմեն Աշոտի - Աշխարհագրական ֆակուլտետ, ուսանող
Ղազարյան Արսեն Վարդեսի - Մաթեմատիկայի ֆակուլտետ, ուսանող (գոհված)
Ղուկասյան Սևակ - Բանասիրական ֆակուլտետ, ուսանող
Ղևոնյան Պետրոս Արշակի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող (գոհված)

Մակարյան Արմեն Հովհաննեսի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, դոցենտ, դասախոս
Մարության Նորայր Յուրիի - Բանասիրական ֆակուլտետ, ասպիրանտ (գոհված)
Մեժլումյան Համլետ Վանյայի - հրավարանական ֆակուլտետ, ուսանող
Միքայելյան Սուլեն Վարուժանի - հրավարանական ֆակուլտետ, ուսանող
Մկրտչյան Մկրտիչ Վազգենի - Երկրաբանական ֆակուլտետ, ուսանող
Մնացականյան Կարեն Ռազմիկի - Արևելագիտական ֆակուլտետ, ուսանող
Մնացականյան Սանասար Լավրենտիի - Մեխանիկայի ֆակուլտետ, ուսանող (գոհված)
Մովսիսյան Արմեն Արշակունու - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող
Նազարյան Արկադի Խաչիկի - Աշխարհագրական ֆակուլտետ, ուսանող
Նազարյան Բարեկեն Նորիկի - հրավարանական ֆակուլտետ, ուսանող
Շահբաղյան Ստեփան - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող
Զախորյան Նվեր Խաչիկի - Արևելագիտական ֆակուլտետ, ուսանող
Պախալով Վալերի Բորիսի - Ֆիզիկայի ֆակուլտետ, դասախոս
Պետրոսյան Էմիլ Լեռնարդի - հրավարանական ֆակուլտետ, ուսանող
Պետրոսյան Տիգրան Հրանտի - հրավարանական ֆակուլտետ, ուսանող (գոհված)
Պետրոսյան Տիգրան Ֆերդինանտի - Բանասիրական ֆակուլտետ, ուսանող
Պողոսյան Արթուր Արմենի - Ֆիզիկայի ֆակուլտետ, ուսանող
Ջուհաննիսյան Մշեր Արամի - Երկրաբանական ֆակուլտետ, ասպիրանտ (գոհված)
Սայազյան Համիկ Ցախշիբեկի - Աշխարհագրական ֆակուլտետ, ուսանող

Սարգսյան Արա Նվերի - իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Սարգսյան Գարուչ Լևոնի - Պատմության ֆակուլտետ, ուսանող
Սարգսյան Դավիթ Էղիկի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Սարգսյան Էդուարդ Սուրենի - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ,
դասախոս

Սարգսյան Իգոր Թաղեսոսի - Երկրաբանական ֆակուլտետ,
ուսանող

Սարգսյան Տիգրան Սարգսի - իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող (գոհված)

Սարդարյան Ռոման Դավիթի - իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Ստեփանյան Վարդան Ռոբերտի - իրավաբանական ֆակուլ-
տետ, ուսանող (գոհված)

Վարդանյան Ավետիս Վարդանի - իրավաբանական ֆակուլ-
տետ, ուսանող

Վարդանյան Գևորգ Սերյոժայի - իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Վարդանով Վլադիմիր Թևանի - իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Փարսադանյան Արթուր Վոլոդյայի - Երկրաբանական ֆակուլ-
տետ, ուսանող (գոհված)

Քամայան Օլեք Արմանի - Քիմիական ֆակուլտետ, դոցենտ,
դասախոս

Քոսյան Վաչագան Ավետիսի - իրավաբանական ֆակուլտետ,
ուսանող

Ֆրանկյան Արամ Հայկի - Արևելագիտական ֆակուլտետ, ուսա-
նող

ՀԱՎԵԼՎԱԾ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1988 թ.

- № 1. Հաղորդագրություն Երևանի պետական համալսարանի կոլեկտիվի 1988 թ. փետրվարի 24-ի ընդհանուր ժողովի մասին
- № 2. ՄՄԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի դիմումը Աղրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին, 26 փետրվարի
- № 3. Հավատարիմ ինտերնացիոնալիզմի գաղափարներին (միտինգ Երևանի պետական համալսարանում)
- № 4. *Обращение профессорско-преподавательского состава педагогического института Степанакерта ректорату Ереванского государственного университета, 26 мая*
- № 5. Հանդիպում ՀՀԿԵՄ Կենտկոմում, 1 հունիսի
- № 6. Ղարաբաղի օգնության ֆոնդին
- № 7. Օգնություն սումգայիթցիներին
- № 8. *Выступление ректора ЕГУ С. А. Амбарцумяна на президиуме Верховного Совета СССР, 18 июля*
- № 9. *Письмо историка, инженера Шкируца Г. В. всем студентам и преподавателям Ереванского государственного университета, 25 июля*
- № 10. *Письмо Валдемараса Кветкаускаса, заместителя главного редактора главной редакции энциклопедий Литовской ССР ректору Ереванского государственного университета Сергею Амбарцумяну. (лично), 26 июля*
- № 11. *Письмо Сергея Буркина, старшего преподавателя кафедры экономической географии Томского университета, ректору Ереванского государственного университета Сергею Амбарцумяну, 29 июля*
- № 12. *Письмо Н. Статеева (с прилагаемой статьей) ректору ЕГУ С. А. Амбарцумяну, 15 августа*
- № 13. Հանդիպում Համալսարանում, 6 սեպտեմբերի

- № 14. Письмо товарища Г. Прокопенко (с прилагаемой статьей) ректору ЕГУ С. А. Амбарцумяну, 25 сентября
- № 15. Վերջ տալ անարդարություններին ու պրովկացիաներին (բողոքի միտինգ Երևանի պետական համալսարանում), 18 նոյեմբերի
- № 16. Դիմում ՍՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, 18 նոյեմբերի
- № 17. Открытое письмо в ЦК КПСС и в ЦК КП Армении от собрания партийного комитета факультета математики ЕГУ, 23 декабря

1989թ.

- № 18. Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովին ներկայացվող կուսկոմիտեի զեկուցման թեղիներ
- № 19. Խոր մտաշոգությամբ (միտինգ Երևանի պետական համալսարանում), 27 ապրիլի
- № 20. Որոշում [ԵՊՀ կոլեկտիվի միտինգի մասնակիցների], 27 ապրիլի
- № 21. Հանդիպում դեպուտատի հետ, 12 մայիսի
- № 22. Երևանի պետական համալսարանի կուսկազմակերպության ժողովը, 18 մայիսի
- № 23. Որոշում Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովի, 18 մայիսի
- № 24. Телеграмма Генеральному Секретарю ЦК КПСС, Председателю Верховного Совета СССР тов. М. С. Горбачеву, Председателю Совета Министров СССР тов. Н. И. Рыжкову, 18 мая
- № 25. Телеграмма первому съезду народных депутатов СССР, 18 мая
- № 26. Решение общего партийного собрания Ереванского университета от 18 мая 1989 г. о сумгaitском геноциде армян
- № 27. Հաղորդագրություն Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության ժողովի մասին, 14 սեպտեմբերի
- № 28. Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության 1989 թ. սեպտեմբերի 14-ի դոնքաց ժողովի որոշումը ԽՄԿԿ Կենտկոմի «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում» ծրագրի նախագծի վերաբերյալ
- № 29. Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության 1989 թ. սեպտեմբերի 14-ի դոնքաց ժողովի որոշումը ու-

- գիոնում իրադրության սրման և ԼՂԻՄ-ի պրոբեմի լուծման ուղղությամբ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ ներկայացվող Երևանի պետական համալսարանի կուսակցական կազմակերպության առաջարկությունների մասին
- № 30. Ուսանողական հանրահավաք, 15 սեպտեմբերի
- № 31. Телеграмма. Москва. Кремль. Пленуму ЦК КПСС, 18 сентября
- № 32. Телеграмма пленуму ЦК КПСС, 21 сентября
- № 33. Телеграмма Генеральному Секретарю ЦК КПСС, Председателю Верховного Совета СССР Горбачеву М. С., 21 сентября
- № 34. Հանդիպում ուկտորի հետ, 12 հոկտեմբերի
- № 35. ԽՍՀՄ արտգործմինիստրության հայտարարության առթիվ բողոքում են համալսարանականները, նոյեմբեր
- № 36. Հայոց համագյայն չարժումը միավորելու ուղիները (Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր ժողովը), նոյեմբեր
- № 37. Միակողմանի, անընդունելի որոշում (բողոքի միտինգ Երևանի պետական համալսարանում), 29 նոյեմբերի
- № 38. Հրապարակյանություն ենք պահանջում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Ս. Գորբաչովին Հայաստանից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատներին, դեկտեմբեր

1990թ.

- № 39. Նամակ Արցախից
- № 40. Կուսակցական կոմիտեում
- № 41. Հիամթափություն և հույս
- № 42. Վերջ տալ ցեղասպանության ու ոճրագործություններին (Երևանի պետական համալսարանի ակտիվի ժողովում), 18 հունվարի
- № 43. Телеграмма Председателю Верховного совета СССР товарищу Горбачеву М. С.
- № 44. Телеграмма Председателю Верховного Совета СССР Товарищу Горбачеву М. С. Народному депутату СССР, первому секретарю ЦК КП Армении товарищу Арутюняну С. Г.
- № 45. Телеграмма Сессии Верховного Совета СССР Народному депутату СССР, первому секретарю ЦК КП Армении товарищу Арутюняну С. Г.

- № 46. Զկա ավելի սուրբ նպատակ, քան հայրենիքի փրկությունը
 № 47. Հանդիպում ռեկտորի հետ, մարտ
 № 48. Դիմում Հայաստանի կոմերիտականներին
 № 49. Հանդիպում ԼԿԵՄ կոմիտեում, 12 հունիսի

1991 թ.

- № 50. Երբ չղթայված է հողոց
 № 51. Ե՞րբ են պատժվելու մեղավորները
 № 52. Հանդիպում Վազգեն Մանուկյանի հետ, 5 դեկտեմբերի

1992 թ.

- № 53. Հանդիպում Համալսարանում, 21 հունվարի
 № 54. «Ուսանողությունը՝ հանուն Արցախի», 24 մարտի
 № 55. Շարունակվում է օգնությունն Արցախին
 № 56. «Այսօր մենք կօգնենք, իսկ վաղը՝ Դուք»
 № 57. Նամակ, որը բնավ էլ անձնական չէ, նոյեմբեր

1993 թ.

- № 58. Մարտակերտ, անհնարինը հնարավոր դարձնելով («Երկիր» թերթի թղթակից Գրիգոր Բաբայանի զրույցը Պետրոս Ղևոնյանի հետ)
 № 59. Բողոքի հանրահավաք, 19 մայիսի
 № 60. Նամակ Արցախից՝ ԵՊՀ ուսկոոր ն. Առաքելյանին ԼՂՀ Մարտունու շրջանի Մաճկալաշենի միջնակարգ դպրոցի տնօրինությունից, 12 սեպտեմբերի
 № 61. Հյուր էին Մեծ Բրիտանիայի խորհրդարանականները, 17 սեպտեմբերի

1994 թ.

- № 62. Դեսպանի հանդիպումը ուսանողների հետ, 27 ապրիլի
 № 63. Օգնություն Ղարաբաղի համալսարանին
 № 64. Ողջունի ուղերձ ԼՂՀ-ից

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՄԱՍԱՐԾԱԼ
ԱՐՅԱՆՅԱՆ ԳՈՅԱՊԱՅԱՐՄԱՆ**

Դրադ. Խմբագիր՝ Մ. Գ. Յավիյան
 Տեխ. Խմբագիր՝ Վ. Զ. Քդոյան
 Սրբագրիչ՝ Վ. Դերձյան
 Համակարգչային ձեսվորումը՝ Ա. Խ. Աղուլումյանի

Ստորագրված է տպագրության՝ 02.06.2011 թ.:
 Զափար, 60x84 1/16; Թուղթը՝ օֆսենթ: Հրատ. 15.0 մամուլ,
 տպագր. 16.0 մամուլ + 14 էջ ներդիր = պայմ. 14.9 մամուլ:
 Տպաքանակ՝ 500; Պատվեր՝ 35:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արովյան 52